

ՈՒՐԲԵՆ ՄԱՆԱԿՅԱՆ

ԿՈՍՏԱՆՆՈՒՆ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒ

ԵՐԵՎԱՆ - 1995

9(56)
 21.08.95

$$g(56)$$

3075

3043
Urechis caupo Nupt

Benjamin Harrison

Копия в архиве
1995 г.

Apr. 1995p

9/56/1
u-15

ՈՌԻՔԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ

3071

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**



Հրապարակվում է Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված
միջոցառումների կազմակերպման պեղական հանձնաժողովի
որոշմամբ:

Նվանավոր՝ Ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և
փաստագրման Զորյան հիմնարկություն, Ջեմբրիջ (ԱՄՆ),
Տորոնտո (Կանադա)

© Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպ-
ման պեղական հանձնաժողով, 1995

Գրքում հայրենական և արտասահմանյան պատմագրության նորագույն
տվյալների և գնահատականների հիման վրա քննության են առնվում 1915-ին Օս-
մանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանությանը վերաբերող
հարցերը, ցեղասպանության դրդապատճառները և նախադրյալները, այդ հան-
ցագործության իրականացման մեխանիզմը, ցեղասպանության հետևանքները, մեծ
տրեւությունների դիրքորոշումը, հայերի ինքնապաշտպանությունը, վերաբերմուն-
քը ցեղասպանության հանդեպ ժամանակակից աշխարհում և այլն: Տրվում է հիմ-
նահարցի պատմագրության համառոտ տեսությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ.....	5
1. ՎՅՅԵՐԸ ՕՍՍԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	6
2. ՎՅՅԱԿԱՆ ՆԱՐՅԸ.....	9
Սան Սրեֆանոյի հաշտության պայմանագիրը.....	9
Նայկական հարցը Բեռլինի վեհաժողովում.....	10
3. ԱՐԵՎՍՏԱՆՎՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԵՈՒԽՆԻ ՎԵՆԵՐԱՆՈՎԻՑ ՆԵՏՈ.....	12
Նայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը.....	12
Ֆիդայական շարժումը.....	13
4. ԹՈՒՐԻԶԻԱՅԻ ՎՅՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ - XX ԴԱՐԻ ՄԿԶԲԻՆ.....	14
Իրադարձությունները Սաաունում 1893-1894 թվականներին.....	15
Նայերի կոտորածները 1895-1896 թվականներին.....	15
Երկրորդը իշխանության դեկի մոտ: Ադանայի 1909 թ. կոտորածը.....	16
5. ԹՈՒՐԻԶԻԱՅԻ ՎՅՅ ԱԶԳԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	18
Յեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ... 18	
Յեղասպանության պատճառները.....	19
Յեղասպանության նախապարասությունը, նրա իրագործման մեխանիզմը.....	21
1915 թվականի ապրիլի 24-ը.....	24
Նայ ազգաբնակչության քեղահանությունը և ջարդերը 1915-1916թթ.....	25
Նայերի կոտորածը Արևելյան Նայաստանում, Կիլիկիայում և Արևմտյան Անատոլիայում.....	31
6. ԹՈՒՐԻԶ ԶԱՐԴԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ ԱՆՆԱՎԱՍԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ.....	32
Վանի հերոսական ինքնապաշտպանությունը.....	33
Շարախի ինքնապաշտպանությունը.....	33
Շալլին Կարահիսարի պաշտպանների հերոսությունը և ինքնազոհությունը.....	34
Ուրֆայի հերոսամարտը.....	34
Մուսա լեռան քառասուն օրը.....	35
7. ՎՅՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ.....	36
8. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	37
Պարմական հայրենիքի մեծ մասի կորուստը: Նայկական մշակույթի հուշարձանների ոչնչացումը.....	38

Սփյուռքի կազմավորումը	38
Յեղասպանության հոգեբանական հետևանքները	40
9. ՆԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԶԵՐՈՎ	41
Նայերի ցեղասպանության դատապարտումը համաշխարհային հասարակայնության և միջազգային կազմակերպությունների կողմից	42
Ժամանակակից թուրքիայի վերաբերմունքը ցեղասպանության նկատմամբ	44
10. ՆԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	46
Նայ պատմագրություն	46
Ռուս պատմագրություն	49
Ֆրանսիական պատմագրություն	49
Անգլիական պատմագրություն	51
ԱՄՆ-ի պատմագրությունը	52
Գերմանական պատմագրություն	53
Թուրք պատմագրություն	54
Արաբ պատմագրություն	55
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱԿ	56

Ութ տասնամյակ առաջ Օսմանյան կայսրության կառավարող շրջանների իրագործած հայերի գանգալածային բնաջնջումը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայերով բնակեցված վայրերում մի այնպիսի իրադարձություն էր, որը անջնջելի հետք թողեց հայ ժողովրդի աշխարհընկալման և հասարակական կեցության բոլոր ոլորտներում, մեկլուկմիջոց դրոշմվեց նրա պատմական հիշողության մեջ: Հայերի բռնի տեղահանման և ցեղասպանության հետևանքով Արևմտյան Հայաստանը զրկվեց իր բնիկ ազգաբնակչությունից, իսկ մնացածները եղած արևմտահայերի բեկորները սփռվեցին աշխարհով մեկ, համալրելով արդեն գոյություն ունեցող գաղթօջախները և սրելով լուրջ խնդիրը, այդպիսով կազմավորելով հայկական սփյուռքը: Անցան տասնամյակներ, կյանքից հեռացան ցեղասպանության սարսափներն ապրած հայերի սերունդը և այժմ պարմական հիշողության կրողները նրանց սերունդներն են, որոնցից շարքերի ճակատագիրը կանխորոշված էր ցեղասպանությամբ:

Հայրենական և արտասահմանյան հեղափոխությունները վիթխարի աշխատանք են կատարել հայերի ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Համակարգված և հրապարակված են հազարավոր միավոր վավերագրեր, որոնք պահպանվում են Հայաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի և այլ երկրների դիվաններում. հավաքված են ցեղասպանությունն ապրած մարդկանց վկայությունները, հրապարակված են այլևայլ երկրների պաշտոնապարտ անձանց, դիվանագետների, միախոններների հուշերը, ովքեր սկսանալուսներն են եղել եղերական իրադարձությունների, հրապարակված են տասնյակ հուշամատյաններ, որոնք պարունակում են Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի առանձին մարզերի հայ ազգաբնակչության ճակատագրի մասին, և վերջապես, սրելով ծավալում են հարյուրավոր մեկնագրություններ, հեղափոխություններ՝ նվիրված հայերի ցեղասպանության պարտությանը: Վերջին տասնամյակներին անցկացվել են մի շարք միջազգային գիտաժողովներ և սխմագիտություններ, որտեղ քննարկվել են հայերի ցեղասպանությունը վերաբերող հարցեր, որոշվել նրա տեղը XX դարի ցեղասպանությունների հոլովությունում: Շնորհիվ այդ ամենի շարժածով ու գաղտնի բաներ դարձել են պարզ ու հայտնի: Չնայած որոշ տարակարծությունների առկայության, բավականին լիարժեք լուսաբանված են հետևյալ հարցերը՝ ցեղասպանության պարտանունները, ընդհանուր պարմական իրադարձությունը, տեղահանություն և ցեղասպանության իրագործման մեխանիզմները, մեծ տերությունների դիրքորոշումը, հայ ազգային կուսակցությունների դերը, ցեղասպանության հետևանքները, ցեղասպանության դարապարտությունը միջազգային հանրության կողմից և այլն: Դեռ այդ և մի շարք ուրիշ հարցեր են լուսաբանվում ընթերցողին առաջարկվող առյու աշխատության մեջ, որի հեղինակներն օգտագործել են հայրենական և արտասահմանյան պարմագրության նվաճումները:

1. ՀԱՅԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Օսմանյան կայսրությունը կազմավորվեց XI-XIII դարերում արեղի ունեցող միջին ասիական բռնավոր թուրքական ցեղերի ուժգնորեն Փոքր Ասիա ներթափանցման հետևանքով: Քաղաքական խոր ճգնաժամ ապրող Բյուզանդական կայսրությունը, ի վիճակի չլինելով դիմագրավել թուրքերի ճնշմանը, կորցնում էր իր տիրույթները: XIV դարի սկզբին օսմանյան թուրքերը, որոնք այդ անվանումն ստացել էին իրենց առաջնորդներից մեկի՝ Օսմանի անունից, ավարտեցին գրեթե ամբողջ Փոքր Ասիայի նվաճումը, իսկ նույն դարի կեսերից ներթափանցեցին հարավարևելյան Եվրոպա, գավառեցին Բուլղարիան, Մակեդոնիան, Թրակիան: Երբեմնի հզոր Բյուզանդիան պարփակվեց Կոստանդնուպոլսի և նրա շրջակայքի սահմաններում: Ընդլայնելով իրենց տիրույթները Եվրոպայում, թուրքերը նվաճեցին Հունաստանը, Սերբիան, Տեղեգովիան, իրենց ենթարկեցին Մոլդավիան, Վալաքիան, Ղրիմի խանությունը: 1453 թվականին հասավ Կոստանդնուպոլսի հերթը, երկարարևելյան պաշարումից հետո մայիսի 29-ին թուրքերը տիրացան քաղաքին: Կոստանդնուպոլսի անկումը նշանավորեց Բյուզանդական կայսրության վախճանը, որը մեկընդմիջ աներևութացավ պարսկական թաթարաբնից: XVI դարում օսմանցիները նվաճեցին Պադեպինը, Սիջագեպը, Եգիպտոսը, Ալժիրը, Հունգարիայի մեծ մասը: Օսմանյան կայսրությունը դարձավ լայնածավալ մի տերություն, որի տիրույթները տարածվում էին Արևմտյան Հայաստանից մինչև Դանուբի միջին հոսանքը, Ղրիմից մինչև Հյուսիսային Աֆրիկա:

Շուրտվ իր կազմավորումից հետո, Օսմանյան կայսրությունը, որը ձգվում էր ընդլայնել իր տիրույթները Արևելքում, բախվեց Սեֆյան Իրանի հետ: Սկսվեց թուրք-պարսկական պարերազմների երկարարևելյան ժամանակաշրջանը, որի ընթացքում ամենից ավելի տուժեց Հայաստանը, դառնալով ռազմական գործողությունների թատերաբեմ: Քանի որ պարսիկները պարսկանում էին շիա դավանանքին, իսկ թուրքերը՝ սուննի, պարերազմներն այդ երկու մահմեդական բռնապետությունների միջև ձեռք բերեցին կրոնական երանգավորում և աչքի էին ընկնում մեծ կարողությամբ: 1555 թ. փոքրասիական Ամասիա քաղաքում հաշտության պայմանագիր կնքվեց Իրանի և Թուրքիայի միջև, ըստ որի Արևելյան Հայաստանն անցնում էր Իրանին, իսկ Արևմտյան Հայաստանը հայտնվեց թուրքերի տիրակալության տակ: Սակայն կնքված պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Շուրտվ ռազմական գործողությունները վերսկսվեցին և ընթանում էին փոփոխական հաջողությամբ: 1639 թ. Կասր-ի Շիրինում Օսմանյան կայսրության և Իրանի միջև կնքվեց հաշտության նոր պայմանագիր, որը վերստին ամրապնդում էր Հայաստանի երկարամյա Արևմտյան և Արևելյան Հայաստանների:

Ջենթի ուժով ստեղծված Օսմանյան կայսրությունը իրենից ժողովուրդների մի խառնարան էր ներկայացնում: Նվաճողների իշխանության տակ հայտնվեցին հույները, բալկանյան սլավոնները, արաբները, հայերը և շատ ուրիշ ժողովուրդներ: Հայերը Բյուզանդիայում հաստատվել էին թուրքերի կողմից նրա նվաճումից շատ առաջ: Դարեր շարունակ Բյուզանդական կայսրության մեջ էր մտնում Արևմտյան

Հայաստանը իր բնիկ հայ ազգաբնակչությամբ: Հայերը բնակվում էին նաև Կիլիկիայում, որտեղ նրանց հաջողվեց սրեղծել երեք դար (XI-XIV) գոյատևած պետականություն: Բացի այդ, բազմամարդ և լավ կազմակերպված հայկական համայնքներ կային Կոստանդնուպոլսում, Ջմյուռնիայում և Բյուզանդիայի մի շարք այլ քաղաքներում:

Հայերը նկատելի դեր էին խաղում Բյուզանդիայի փոփոխական, քաղաքական և մշակութային կյանքում: Արևմտյան Հայաստանի քաղաքների հայկական արքեպիսկոպոսական համալսարանների արտադրանքը լայն պահանջարկ ուներ ներքին և արտաքին շուկաներում: Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության հիմնական մասը կազմող հայ գյուղացիությունը զբաղվում էր երկրագործությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ, իր մթերքները հանում էր շուկա: Հայ վաճառականները գործուն մասնակցություն էին բերում կայսրության ներքին և արտաքին առևտրին: Դարեր շարունակ հայերը պատասխանաբար պաշտոններ էին զբաղվում պետական վարչության մեջ և բանակում: Հայտնի է, որ IX-XI դարերում Բյուզանդիայում կառավարում էր Մակեդոնական հարստությունը, որը կոչվում է նաև Հայկական, քանզի նրա թագավոր ներկայացուցիչները հայեր էին:

Բյուզանդիան նվաճած թուրքերը հույների, հայերի և սլավոնական ժողովուրդների համեմատությամբ գրավում էին հասարակական-փոփոխական զարգացման շատ ավելի ցածր աստիճանի վրա: Այդ իսկ պատճառով սկզբնապես թուրքերը չէին կարող մրցակցել, մասնավորապես, Կոստանդնուպոլսի հայ վաճառականների և արքեպիսկոպոսների հետ, սակայն իրենց շահը այնքան գիտակցող դուրս եկան, որ ձգտում էին օգտագործել նրանց օգտակար գործունեությունը հօգուտ Օսմանյան կայսրության: 1461 թ. հիմնվեց Հայ առաքելական եկեղեցու Կոստանդնուպոլսի պատրիարքությունը, մի փաստ, որը վկայում է ինչպես կայսրության մայրաքաղաքի հայկական համայնքի նշանակալի փոփոխարար կշռի, այնպես էլ սուլթանական իշխանությունների ձգտման մասին՝ ցույց տալու Եվրոպային իրենց հանդուրժողական վերաբերմունքը նվաճված ժողովուրդների նկատմամբ: Շնորհիվ դրա Կոստանդնուպոլսի հայ արքեպիսկոպոսներն ու առևտրականները ընդհուպ մինչև XIX դարը պահպանում էին իրենց առաջադարձ դիրքերը երկրի փոփոխության և առևտրի մեջ: Ավելին, աստիճանաբար ձևավորվեց հայկական բուրժուազիա, որը տիրում էր մանուֆակտուրաների և առևտրական ընկերությունների: Հայկական բուրժուազիան և մտավորականությունը, որոնք կենտրոնացած էին գլխավորապես մայրաքաղաքում, նշանակալի լուրջ մոծեցին երկրի փոփոխության ու մշակույթի զարգացման մեջ: Նրանք հիմնեցին արդյունաբերության մի շարք ճյուղեր, ստարեցին բանկային գործի զարգացմանը, քաղաքաշինությանը, հիմնադրեցին Թուրքիայում առաջին փաթարանները, նպաստեցին թուրքական ազգային թատրոնի սրեղծմանը և այլն:

Պատերազմները Թուրքիայի և Իրանի միջև ծանր էին անդրադառնում արևմտահայ ազգաբնակչության դրության վրա: Պատերազմները ոչ միայն խլում էին խաղաղ բնակչության կյանքը, վիթխարի վնաս էին հասցնում փոփոխությանը, բերում էին ավերածություն ու քայքայում, այլև հանգեցնում էին հարկերի մեծացման: XVI-XVIII դարերի հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները վկայում են, որ Օսմանյան կայսրության փոփոխության փակ գլուխը ժողովրդական զանգ-

վածների կողմաւորը կրում էր հետեւողական դաժան ու ծայր աստիճան քայքայիչ բնույթ: Բազմաթիւ պետական հարկերից զատ, գոյություն ունեին անուղղակի և պատրաստական տուրքեր, որոնք գանձվում էին տեղական ավարատերերի, ինչպես նաև բուրդ ցեղապետների կողմից: Հարկահաւաքը ուղեկցվում էր կամայականութեամբ: Թուրքական իշխանությունները, տեղական ավարատերերը հաճախակի դաժան հաշվեհարդար էին տեսնում հայ ազգաբնակչության հետ, զրկում էին նրան լավագույն հողերից, խլում էին ունեցվածքը և անաւանները: Զրիադնյա հայերի նկատմամբ սկսվեց դրսևորվել կրոնական անհանդուրժողություն, ուրոսահարվում էին նրանց ազգային զգացմունքները: Արևմտահայերի դրությունը առավել ևս վարքաբացալ XIX դարի սկզբին, երբ Օսմանյան կայսրությունը ռաբ դրեց խորին ճգնաժամի ոլորտը:

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության աղերալի կացությունը և փաստական իրավագրկությունը մտահոգում էին Կոստանդնուպոլսի հայ մտավորականությանը: Հայրենակիցների դրությունը թեթևացնելու ձգտումը երկակի արտահայտություն գտավ. Կոստանդնուպոլսի հայերի հասարակական շրջանները առաջ քաշեցին հատուկ Կոնստանդուլություն (Ազգային սահմանադրություն) ստեղծելու գաղափարը, որով կկարգավորվեին հայերի ներքին կյանքի հարցերը, նրանց կրոնական ու հասարակական գործերը: Դրա հետ մեկտեղ հայ մտավորականությունը հանդես եկավ լուսավորական շարժման նախաձեռնությամբ, որի նպատակն էր բարձրացնել գաղափարախոսության ազգային ինքնագիտակցությունը: Ազգային սահմանադրության նախագիծը մշակվեց հայ հասարակական շրջանների ներսում ծավալված գաղափարական պայքարի պայմաններում. 1860 թ. այն ներկայացվեց սուլթանական կառավարությանը և հաստատվեց 1863 թ. մարտին: Դա մի փորձ էր սուլթանական վարչակարգի պայմաններում հասնելու որոշ ինքնուրույնության՝ ամբողջովին հայերի ներքին կյանքին վերաբերող հարցերի լուծման գործում: Ազգային սահմանադրության հիման վրա կազմվեց Ազգային ժողով, որի անդամների մեծամասնությունը ներկայացնում էին աշխարհիկ շրջանները: Ծավալված լուսավորական շարժման արդյունքը եղավ դպրոցների բացումը Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում, լրագրերի հիմնումը, գաղափարախոսականության ձևավորումը:

Դրա հետ մեկտեղ, դաժան շահագործումից և կամայականություններից տառապող արևմտահայ ազգաբնակչության դժգոհությունը սկսեց ավելի ու ավելի հաճախակի ընդունել իշխանություններին բացահայտ անհնազանդության ձև: 1860-ական թվականների սկզբին թուրքական իշխանությունների դեմ հայ ազգաբնակչության զինված ելույթներ տեղի ունեցան Զեյթունում, Վանում և մի շարք այլ վայրերում: Բայց առավել մեծ արձագանք ստացավ Զեյթունի հայերի 1862 թ. ապստամբությունը, որը դարձավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսական էջերից մեկը:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը շարունակում էր իր փրկարկության փակ պահել փարացել ժողովուրդներով բնակեցված լայնածավալ փարածքներ: Երկու գործոններ էին վճռորոշ կերպով ներագրում Թուրքիայի դրության վրա. մի կողմից՝ ավադարարական հարաբերությունների խոր ճգնաժամը, որը բացահայտում էր երկրի սոցիալ-տնտեսական հեղափոխությունը, իսկ մյուս կողմից՝ կայսրության կեղեքված ժողովուրդների ազատագրական շարժման ուժեղացումը, որը ցնցում էր երբեմնի հզոր կայսրությունը: Փլուզման եզրին գրկվող Թուրքիայի ընդհանուր կացությունը գրավում էր եվրոպական տերությունների սևեռումն ուշադրությունը, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր օգտագործել Օսմանյան կայսրության ճգնաժամը՝ հասնելու համար իր քաղաքական ու տնտեսական նպատակադրումներին Մերձավոր Արևելքում: Թուրքիան գրկվում էր միջազգային հակասությունների բարդ հյուսվածքի կենտրոնում, որը Արևելյան հարց էր անվանվում:

1870-ական թվականների կեսերին ուժեղացավ բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումը՝ 1875 թ. գարնանը ապստամբեց Նեքեզովինան, ապա Բոսնիան, 1875 և 1876 թթ. ապստամբություններ բռնկվեցին Բուլղարիայում: Օսմանյան կայսրությանը փլուզում էր սպառնում, դրա համար էլ իրադարձությունները Բալկաններում, որոնք հայտնի են իբրև 1875-1877 թթ. Արևելյան ճգնաժամ, հայտնվեցին եվրոպական դիվանագիտության ուշադրության կիզակետում: Ռուսաստանում ծավալվեց հասարակական լայն շարժում ի պաշտպանություն թուրքական լծի դեմ ապստամբած սլավոնական ժողովուրդների: Այն համապատասխանում էր ցարիզմի արտաքին քաղաքականության նպատակներին, և 1877 թ. ապրիլին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ռազմական գործողությունները մղվում էին երկու ռազմաճակատներում՝ Բալկանյան և Կովկասյան: Երկու ուղղություններում էլ ռուսական զորքերը վճռական հաջողությունների հասան: Կովկասյան ռազմաճակատում հաջող էին գործում հայկական կամավորական զորաջոկատները: Արևմտյան Հայաստանի փարածքը մուտք գործած ռուսական զորքերին աջակցություն էր ցույց տալիս տեղական հայ ազգաբնակչությունը: Թուրքերի պարտությունը լիակատար էր, և երբ ռուսական զորքերը Կոստանդնուպոլսի գրավման իրական սպառնալիք ստեղծեցին, Թուրքիան հաշտություն առդերեց: Սկսվեցին հաշտության բանակցությունները:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը

Բանակցությունները տեղի էին ունենում Կոստանդնուպոլսի մերձակա Սան Ստեֆանո բնակավայրում: Եվրոպական տերությունների համար պարզ էր, որ Ռուսաստանը ջանալու էր առավելագույն օգուտներ քաղել պատերազմում փարած հաղթանակից: Հիրավի, 1878 թ. մարտի 3-ին ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի հոդվածները վկայում էին Ռու-

սաստանի դիրքերի ուժեղացումը Բալկաններում և Անդրկովկասում: Բուլղարիան հռչակվում էր ինքնավար իշխանություն. Սերբիան, Չերնոգորիան և Ռումինիան ստանում էին լիակատար անկախություն, Ռուսաստանին էին անցնում Հարավային Բեսարաբիան, ինչպես նաև Բաթումը, Կարսը, Բայազետը և Արդահանը: Պարսերազմի ընթացքում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի մնացյալ մասը վերադարձվում էր Թուրքիային:

Այն օրերին, երբ ընթանում էին բանակցությունները ռուսական և թուրքական պարավորությունների միջև հաշտության պայմանագրի շուրջ, արևմտահայ հասարակայնությունը պնդում էր, որպեսզի Կոստանդնուպոլսի հայոց պարիսրը Ներսես Վարժապետյանը արևմտահայերի անունից դիմի ռուսական պարավորությանը՝ ապագա հաշտության պայմանագրում արևմտահայերին թուրքական պետության կազմում որոշակի երաշխիքների և իրավունքների ընձեռումը արձանագրելու խնդրանքով: Չնայած թուրքական կողմի ընդդիմությանը, ռուսական պարավորությանը հաջողվեց պայմանագրի մեջ մուծել հոդված արևմտահայերի մասին: Այդպես պայմանագրում հայրենիք 16-րդ հոդվածը, ըստ որի թուրքական կառավարությունը պարտավորվում էր հայերով բնակեցված մարզերում (այսինքն Արևմտյան Հայաստանում) կենսագործել բարեփոխումներ և երաշխավորել տեղական ազգաբնակչության անվտանգությունը: Ընդ որում ռուսական զորքերը մնալու էին իրենց գրաված տարածքներում վեց ամիս, մինչև որ Թուրքիան կատարեր իր ընդունված պարտավորությունները: Այսպիսով, արևմտահայերի պահանջը խիստ չափավոր էր՝ խոսքը գնում էր ոչ թե նրանց անկախություն փրամադրելու, այլ սոսկ բարեփոխումներ իրականացնելու մասին, որոնք պետք է հավասարեցնեին հայերի իրավունքները Օսմանյան կայսրության մյուս հպարակների իրավունքներին:

Ման Սրեֆանոյի պայմանագրի մեջ 16-րդ հոդվածի մոծումով արևմտահայերի հարցը դարձավ եվրոպական դիվանագիտության հարց՝ Հայկական հարց, որին վիճակված էր երկար ժամանակ դառնալ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա:

Ման Սրեֆանոյի պայմանագիրը ոչ մի կերպ չէր բավարարում եվրոպական տերություններին, հատկապես Անգլիային և Ավստրո-Հունգարիային, չափած արդեն Թուրքիայի մասին: Շուրջով Անգլիան և Ավստրո-Հունգարիան պահանջեցին գումարել եվրոպական երկրների վեհաժողով՝ քննարկելու համար ռուս-թուրքական պարսերազմից հետո ստեղծված իրադրությունը: Հայրենիքով եվրոպական տերությունների միասնական ճակարի առջև, Ռուսաստանը սրիպված էր համաձայնվել եվրոպական վեհաժողովի գումարմանը, որի անցկացման վայր սահմանվեց Բեռլինը:

Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում

Բեռլինի վեհաժողովը բացվեց 1878 թ. հունիսի 1(13)-ին և փակեց մեկ ամիս: Նրան մասնակցում էին Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի,

Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Իտալիայի և Թուրքիայի պարավորությունները: Վեհաժողովում Ռուսաստանը հայրենիք լիակատար մեկուսացման մեջ, իսկ Անգլիան և Ավստրո-Հունգարիան, օգրվելով վեհաժողովին մասնակից մյուս եվրոպական երկրների աջակցությունից, հասան Ման Սրեֆանոյի պայմանագրի վերանայմանը: Բեռլինի վեհաժողովում ստորագրված պայմանագրի պայմանները վկայում էին Ռուսաստանի դիվանագիտական պարությունը: Պայմանագրի

համաձայն, Բուլղարիայի հարավային մասը մնում էր Թուրքիայի իշխանության տակ. սեղմվում էին Մերքիայի և Չերնոգորիայի տարածքները. Ավստրո-Հունգարիան իրավունք էր ստանում իր գործերը մտցնելու Բոսնիա և Հերցեգովինա. Անդրկովկասում Ռուսաստանին միացվեցին Կարսը, Արդահանը և Բաթումը: Բայազետը մնում էր Թուրքիային:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու համար եվրոպական վեհաժողովի գումարման լուրը արևմտահայ հասարակայնությունը ընկալեց դժգոհությամբ: Արևմտահայերի առավել սրտախի քրամադրված շրջանները ոչ մի լավ բան չէին սպասում եվրոպական վեհաժողովի որոշումներից, գիտենալով, որ դրանք ուղղվելու են հայերի և Ռուսաստանի շահերի դեմ: Բայց և այնպես որոշվեց հայկական պարվիրակություն ուղարկել Բեռլին, վեհաժողովին ներկայացնել Թուրքիայի կազմում Արևմտյան Հայաստանին ազգային ինքնավարություն տրամադրելու անհրաժեշտությունն ելմանվորող փաստաթղթեր: Պարվիրակությունը գլխավորեց հայրենի հասարակական և եկեղեցական գործիչ, բայց դիվանագիտության մեջ կարարելապես անփորձ Մկրտիչ Խրիմյանը (ապագա Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի): Վեհաժողովի նախօրեին պարվիրակության անդամները այցելեցին Իտալիա, Ֆրանսիա և Անգլիա, բանակցություններ վարեցին այդ պետությունների կառավարությունների հետ, ջանալով ապահովել նրանց աջակցությունը վեհաժողովում՝ Հայկական հարցի՝ հայերի համար բարենպաստ որոշման համար: Այդ բանակցությունները շուշափելի արդյունքներ չտվեցին: Այդ նույն ժամանակ պարվիրակության մյուս անդամները բանակցություններ էին վարում Պետերբուրգում Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարների հետ, որոնք խոստացան պաշտպանել հայերի պահանջները:

Սակայն Անգլիայի բացահայտ հակազդեցությունը, որը Թուրքիային սատարելու համար սրացել էր Կիպրոս կղզին և Ռուսաստանին սպառնում էր պարտերազմով, հանգեցրին այն բանին, որ Ռուսաստանը չկարողացավ պնդել հայանպաստ որոշման ընդունման վրա: Դրա հետևանքով էլ Բեռլինի պայմանագրի մեջ մուծվեց 61-րդ հոդվածը, որը պարավորեցնում էր Թուրքիային իրականացնել «հայերով բնակեցված մարզերում բարեփոխումներ և բարելավումներ»: Սակայն հոդվածում ոչինչ չէր ասվում այդ բանի կարևոր երաշխիքի՝ Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի ներկայության մասին, որը նախատեսված էր Սան Ստեֆանոյի պայմանագրով: Բարեփոխումների անցկացումը դրվում էր միջազգային վերահսկողության տակ, որը, եվրոպական պետությունների միջև եղած սուր հակասությունների պայմաններում իրական լինել չէր կարող: Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ Թուրքիայի կառավարող շրջանները ոչ միայն չկատարեցին Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի պահանջները, այլև մշակեցին և ձեռնամուխ եղան Հայկական հարցի «լուծման» իրենց ծրագրի կենսագործմանը՝ արևմտահայության ֆիզիկական բնաջնջման ճանապարհով:

Բեռլինի վեհաժողովի որոշումները մեծ հիասթափություն առաջ բերեցին ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ հասարակական շրջաններում: Հաստատանում էր այն համոզմունքը, որ Հայկական հարցի լուծումը կարող է ձեռք բերվել ոչ թե եվրոպական տերությունների օգնությամբ, այլ սույն թուրքական բռնապետության դեմ ժողովրդի ազատագրական պայքարի ուղիով:

3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԲԵՈՒՐՆԻ ՎԵՆԱԺՈՂՈՎԻՅ ՀԵՏՈ

Բեռլինի վեհաժողովից հետո սկսվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը: Եվրոպայի վրա դրվող հույսերի փուլումը սթափեցրեց ազգային-ազատագրական շարժման շատ գաղափարախոսների, դրդեց ավելի իրապաշարներն գնահատելու միջազգային իրադրությունը և Հայկական հարցի լուծման հեռանկարները: Գերակշռող դարձավ այն համոզմունքը, որ ազգը պետք է սեփական ուժերով լուծի իր հարցերը, որ ազատագրական պայքարին պետք է կազմակերպված բնույթ հաղորդվի, որ պետք է համախմբել արևմտահայերի և արևելահայերի ջանքերը: Ազատագրական գաղափարների քաղաքական մեջ մեծ դեր խաղացին ականավոր հասարակական գործիչները՝ գրող Բաժֆին, բանաստեղծ Ռափայել Պարկանյանը, հրապարակախոս Գրիգոր Արծրունին, հրապարակախոս և գիտնական-ազգագրագետ Գարեգին Սրվանդությանը և ուրիշներ: Սկսեցին առաջ գալ զանազան կազմակերպություններ, ընկերություններ և խմբակներ, որոնք առաջ էին քաշում հայ ժողովրդի ազատագրման իրենց ծրագրերը: Հայկանշական է, որ այդ կազմակերպությունները և խմբակները ստեղծվում էին ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում: Մակայն նրանք խիստ սահմանափակ կազմ ունեին, ի վիճակի չէին լայն գործունեություն ծավալելու: Նրանք որոշակի փուլ հանդիսացան հայկական քաղաքական կուսակցությունների ստեղծման ճանապարհին:

Հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը

Հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը պայմանավորված էր թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հետագա ուժեղացմամբ: Պատահական չէր, որ հայկական կուսակցությունների ծրագրերում կենտրոնական տեղը գրավում էին արևմտահայերի ազատագրության, Հայկական հարցի լուծման խնդիրները:

Հայ իրականության մեջ առաջին քաղաքական կուսակցությունը դարձավ Արմենական կազմակերպությունը: Այն հիմնադրվեց հայ մտավորականների կողմից (1885 թ.), որոնք համախմբվել էին Մարտելում հրապարակվող «Արմենիա» լրագրի և նրա խմբագրի հայրնի հասարակական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի շուրջը: Լրագրի անունով էլ կուսակցությունը ստացավ իր անվանումը: Կուսակցության ծրագիրը նախատեսում էր եասնել հայ ժողովրդի ազգային ազատագրությանը՝ հետագայում անկախ պետություն ստեղծելու հեռանկարով: Արմենականները գործում էին գլխավորապես Վան-Վասպուրականում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում, Բալկաններում, Իրանում, Կովկասում:

1887 թ. Շվեյցարիայում սովորող մի խումբ հայ ուսանողներ ժնկում էին մեկնել սոցիալիստական «Հնչակ» կուսակցությունը՝ նրանց հրապարակած «Հնչակ» թերթի անունով: Կուսակցության հիմնադիրների մեջ ղեկավար դերը պարկանում էր Ավետիս Նազարբեկյանին (Նազարբեկ), Մարտ Վարդանյանին (հետագայում՝ Նազարբեկ), Ռուբեն Խանազարյանին (Խանազար) և այլոց: Հնչակ կուսակցությունը կրել էր նաորդինական սոցիալիզմի գաղափարների ներգործությունը, ինչը վկայում է նրա ծրագրում գյուղացիական հա-

մայնքի առաջադար դերի և անհատական անաբեկչության սկզբունքների մասին դրույթի առկայությունը: Իր գլխավոր խնդիրը հնչակ կուսակցությունը համարում էր Արևմտյան Հայաստանի համար ազգային անկախության նվաճումը:

1890 թ. Թիֆլիսում սրեղծվեց հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը: Կուսակցության հիմնադիրներն էին Քրիստափոր Միքայելյանը, Միմոն Զավարյանը, Մորեկան Զորյանը (Ռոստոմ), Խաչատուր Մալումյանը (Ալեուսի) և ուրիշներ, որոնք իրենց գործունեությունը սկսել էին Ռուսաստանի նարոդնիկական խմբակներում: Դաշնակցություն կուսակցությունը իր առջև նպատակ էր դնում հայկական հարցի լուծումը, հայտարարում էր իր վճռականության մասին՝ «ապստամբության ճանապարհով հասնելու Թուրքահայաստանի քաղաքական և տնտեսական անկախությանը»: Կարճ ժամանակամիջոցում Դաշնակցություն կուսակցության կազմակերպություններ սրեղծվեցին Արևմտյան Հայաստանում: Բացի այդ, կուսակցությունը աշխատանք էր փնտրում եվրոպական երկրներում, ջանալով միջազգային հասարակայնության ուշադրությունը հրավիրել արևմտահայերի դրության վրա: Շուրջով Դաշնակցությունը դարձավ առավել ազդեցիկ կուսակցությունը հայ իրականության մեջ: Հենց այդ կուսակցությունն էր, որ ձեռնարկեց փոքրիշատե հաջող փորձեր՝ գլխավորելու հայերի ազատագրական պայքարը:

Ֆիդայական շարժումը

Մինչդեռ արևմտահայերի դրությունը գնալով վատթարանում էր: Ալեկհայր էր, որ սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները ոչ միայն չէին խորհում Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսվող պարտավորությունները կատարելու մասին, այլև ընթացք էին վերցրել ուժեղացնելու հայերի սոցիալական և ազգային ճնշումը: Հաճախացել էին կամայականությունները, հայերի պատվի արարավորումը, արյունալի ջարդերը: Այդ ամենը արևմտահայերի կյանքն անտանելի էր դարձնում: Նման պայմաններում հայերը հարկադրված էին պայքարել հանուն իրենց կյանքի, դիմադրություն ցույց տալ թուրքական ջարդարարներին: Կյանքի և ունեցվածքի պաշտպանության նպատակով սկսեցին առաջանալ ֆիդայիների զինված խմբեր, որոնց մեջ ներգրավվում էր հայ երիտասարդությունը: XIX դարի 80-ական թվականների կեսերին սկզբնավորված ֆիդայական շարժումը լայն թափ ստացավ Սասունի, Վանի, Մուշի, Տարսուզի, Զարազակի, Շապին Կարահիսարի շրջաններում և այլ վայրերում: 1884, 1890, 1891 թվականներին Կիլիկիայում նույնպես տեղական հայ ազգաբնակչության զինված ելույթներ եղան թուրքական իշխանությունների դեմ: Վերստին աչքի ընկան զեյթունցիները, որոնք աներեր դիմադրություն էին ցույց տալիս թուրքական պատժիչներին:

Պաշտպանելով հայ խառնազգ ազգաբնակչության կյանքը, ֆիդայիները ստանում էին ժողովրդի օգնությունը, նրանց շարքերը մշտապես համալրվում էր երիտասարդներով: Ֆիդայիների գործողությունները աչքի էին ընկնում հնարամտությամբ, հանդգնությամբ, ինքնազոհությամբ: Թեև ուժերը, որպես կանոն, անհավասար էին, ֆիդայիները հաճախ էին հաղթանակ տանում թվով գերազանցող և ավելի լավ զինված թշնամու նկատմամբ: Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայիներին որոշակի աջակցություն էին ցույց տալիս արևելահայերը, ինչպես նաև Ռուսաստանի հայկական համայնքները: Արևմտյան Հայաստան էին ներթափանցում կամավորներ, այսպես զենք էր հասցվում (սիմնականում Իրանի վրայով): Առաջին ֆիդայիների մեջ լայն հռչակ ձեռք բերեցին Արաբոյի, Չելլոյի, Մինաս Օղլուի, Ռուբեն Շիջմանյանի և ուրիշ խմբեր:

Հայ բաղաբաական կուսակցությունների առաջացմամբ սկսվեց ֆիդայական շարժման նոր փուլը: Հայկական կուսակցությունները, ամենից առաջ Դաշնակցությունը և Հնչակը, ձգտում էին օգտագործել ֆիդայական շարժումը հասնուն իրենց նպատակների, դրան փալ կազմակերպված բնույթ: Արևմտյան Հայաստանի այն փարաձառքաններում, որտեղ գերակշռող ազդեցություն ունեին հնչակյանները, ֆիդայիները ընդունում էին նրանց ղեկավարությունը, իսկ այնտեղ, որտեղ ուժեղ էին Դաշնակցության դիրքերը, վերջինս էր իրագործում ֆիդայիների գործողությունների ղեկավարությունը: 90-ական թվականների երկրորդ կեսից Դաշնակցության գերակշռությունը ակնհայտ դարձավ: Ավանավոր ֆիդայիների մեծ մասը դարձավ այդ կուսակցության անդամ: 1894-1896 թթ., երբ Թուրքիայում կազմակերպվեցին խաղաղ հայ ազգաբնակչության ջարդեր, որոնց մասին կիսովի արդեն, ֆիդայիները մասնակցություն ունեցան ինքնապաշտպանությանը Սասունում, Շապին Կարահիսարում, Խլաթում և այլուր: Ֆիդայական շարժման այդ փուլում առաջ եկավ ֆիդայիների մի նոր փաղանգ, որն օգտվում էր մեծ ժողովրդականությանը՝ շնորհիվ իր խիզախ գործողությունների և անձնագոհության՝ Աղբյուր Սերոբը, Անդրանիկը (Ա.Օզանյան), Նիկոլ Դումանը, Գևորգ Չավուշը, Հրայրը և ուրիշներ: Համարձակ գործողություններով աչքի էին ընկնում «Շանթ», «Կայծակ», «Մորիկ» և այլ խմբեր: Լայն արձագանք գտան ֆիդայիների որոշ գործողություններ, մասնավորապես 1897 թ. Խանասարի արշավանքը և Առաքելոց վանքի կռիվը 1901 թվականին:

Հայերի ազգային-ազատագրական շարժումը XIX դարի վերջին - XX դարի սկզբին, չնայած նրա մասնակիցների հերոսությանն ու ինքնագոհությանը, պարություն կրեց, որը պայմանավորված էր մի շարք պարզառենքով: Շարժումը չունեւ միասնական ղեկավարություն, այն գերազանցապես կրում էր փարերային, ցար ու ցրիվ ելույթների բնույթ, որն, անկասկած, կործանարար կերպով ազդեց նրա ելքի վրա: Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումը հայտնվեց մեկուսացած, այն դաշնակիցներ ձեռք չբերեց Թուրքիայի ներսում՝ մյուս ժողովուրդների մեջ, թեև որոշ ֆիդայական ղեկավարներ ըմբռնում էին Թուրքիայի սրբկացված ժողովուրդների պայքարի միասնական ճակար ստեղծելու անհրաժեշտությունը: Ընդհակառակը, թուրքական կառավարող շրջաններին հաջողվեց սեպ խրել հայերի ու քրդերի միջև, օգտագործել վերջիններիս ուժերը հայ ապստամբների դեմ:

Թուրքիայի կառավարող շրջանները պարտաստվում էին հաշվեհարդար տեսնել հայ ազգաբնակչության հետ և դրանով իսկ վերջ դնել նրա ազգային-ազատագրական պայքարին:

4. ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐՄԾՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ - XX ԴԱՐԻ ՄԿԶԲԻՆ

Օսմանյան կայսրության կառավարող շրջանների վճռականությունը՝ հաշիվները փակելու հայերի հետ, պայմանավորված էր ամենից առաջ նրանց ձգտմամբ՝ մաքրագրելու Արևմտյան Հայաստանը իր բնիկ ազգաբնակչությունից, միաժամանակ գրկելով եվրոպական պետություններին և առաջին հերթին Ռուսաստանին, Հայկական հարցը կայսրության ներքին գործերին միջամտելու համար օգտագործելու հնարավորությունից: Դեռևս 1882 թ. մարտին Վանում Ռուսաստանի

փոխյալարարման պաշտոնակարարը հաղորդում էր, որ «այսպիսի հայերի դուրս-
յունը, որոնք հեղինակաւոր են հեղինակութեամբ են թուրքերի կողմից, դարձել է ան-
պահանջի բան երբևէ»: Այնուհետև նա նշում էր, որ թուրքական կառավարական աս-
տիճանավորները բացահայտորեն հայտարարում են, որ նրանք, Բուլղարիայի
կոռուսի դառն փորձից դառն բաղաձ, «կարողանան խեղդել իրենց կառավարութ-
յան համար վնասակար քաղաքի և, այդպիսով, մեկընդմիջ վերջ դնել Հայկական
հարցին»: Օրարերկրյա դիվանագետները իրենց գեկույցներում նշում էին, որ Թուր-
քիայում հաճախացել են հայերի ջարդերը: 1890 թ. հուլիսին քրեի ունեցավ հայե-
րի կոռուսաձ Կոստանդնուպոլսում: 1893 թ. սկզբին ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիա-
յում հաղորդում էր Կեսարիայում, Մարզվանում, Յոզղաթում և այլ վայրերում հա-
յերի կոռուսպրվելու և սպանությունների մասին:

Իրադարձությունները Մասունում 1893-1894 թթ.

Թուրքիայի հայերի համար պարտաւորւած եղե-
րական ճակարագրի քաղաքաւաշունչ կանխա-
գուշակը եղան 1893-1894 թթ. իրադարձություն-
ները Մասունում: Մասունը՝ հայ ազարագրական շարժման կենտրոններից մեկը,
վաղուց էր արդեն առաջ բերել թուրքական իշխանությունների արելությունն իր
հանդեպ, որոնք վճռել էին հաշիվները փակել նրա հետ: 1893 թ. թուրքական իշ-
խանությունների գիտությունը քրդական հրոսակները հարձակում գործեցին Մա-
սունի վրա, բայց հետ շարվելցին խիզախ սասունցիների կողմից: Այնժամ 1894 թ.
ամռանը Մասունի դեմ ուղարկվեցին թուրքական կանոնավոր գործեր, որոնք, խոր-
քակելով հայերի հուսանաք դիմադրությունը, ներխուժեցին այդ լեռնային երկի-
րը: Թուրքական ջարդարարները հողին հավասարեցրին ավելի քան 40 հայկա-
կան գյուղ, երկիզցին Մասունը, կոռուրեցին ավելի քան 10 հազար հայերի:

Մասունի ողբերգությունը լայն արձագանք գրավ, առաջ բերելով վրդովմունք
շար երկրներում: Միջազգային հասարակական կարծիքի ճնշման քակ մեծ քե-
րությունների դեսպանները Կոստանդնուպոլսում պահանջեցին սուլթանից անց-
կացնելու պարահաձ դեպքերի հերքանություն, իսկ ապա մշակեցին և 1895-ի
մայիսին Թուրքիայի կառավարությանը հանձնեցին Արևմտյան Հայաստանում անց-
կացվելիք բարեփոխումների ծրագիր: Թեև կառավարությունը ձևականորեն ըն-
դունեց այդ ծրագիրը, սակայն իրականում չէր պարտաւորւում այն կենսագործել:
Օգրագործելով մեծ քերությունների միջև եղած հակասությունները, սուլթան Աբ-
դուլ Համիդ II-ը արագացրեց հայերին բնաջնջելու իր ծրագրի իրագործումը:

Հայերի կոռուրաձները 1895-1896 թթ.

1895 թ. աշնանից թուրքական իշխանություննե-
րը սկսեցին կազմակերպել հայերի զանգվաձա-
յին կոռուրաձներ Արևմտյան Հայաստանում և
Թուրքիայի հայաբնակ վայրերում: Կոռուրաձներն իրագործվում էին կանոնավոր
գործերի, քրդական հարուկ սրելոձվաձ հեձյալ «համիդիե» գնդերի, քրդերի ու չեր-
քեզների հրոսակների, մոլեռանո ամբոխի ձեռքով: Հայերի կոռուրաձներն աչքի էին
գարնում ձարահեղ դաձանությամբ՝ սպանվում էին բոլորը՝ քրդամարդիկ ու կա-
նայք, երեխաներն ու անգոր ձերունիները: Ջարդարարների գոհերը ենթարկվում
էին խոշարանգումների, պղծման, քառապանքների: Կոռուրաձներ քրեի ունեցան

Կոստանդնուպոլսում, Տրապիզոնում, Մարաշում, Բաբերդում, Չարսանջակում, Ուրֆայում, Սվազում, Վանում, Շապին Կարահիսարում, Ակնում, Խարբերդում և այլ վայրերում: Հայերի ջարդերը շարունակվեցին նաև 1896 թվականին: Տեղ-տեղ կոտորածները կրկնվում էին: Այսպես, Կոստանդնուպոլսում առաջին կոտորածը տեղի ունեցավ 1895 թ. աշնանը. 1896 թ. ամռանը կոտորածը կրկնվեց: Միայն մայրաքաղաքում գոհերի թիվը անցավ 10 հազար մարդուց: 1894-1896 թթ. ընթացքում կոտորվեցին շուրջ 300 հազար հայեր, ավերվեցին հարյուրավոր գյուղեր, հասցվեց հսկայական նյութական վնաս:

Որոշ վայրերում հայ ազգաբնակչությունը դիմադրություն ցույց տվեց ջարդարարներին: Այդպես եղավ Զեյթունում (1895 թ), Վանում (1896), ինչպես նաև Մալաթիայում, Ուրֆայում, Մուշում, Շապին Կարահիսարում: Հազարավոր հայեր լքեցին հայրենի օջախները, անցան ուրիշ երկրներ:

1894-1896 թթ. ջարդերի ժամանակ արևմտահայ և ֆրևելահայ հասարակական շրջանները բանիցս դիմեցին եվրոպական տերություններին, խնդրելով իրենց պաշտպանության տակ վերցնել Թուրքիայի հայերին, հարկադրել սուլթանական կառավարությանը դադարեցնելու կոտորածները: Բայց եվրոպական տերությունները իրական միջոցներ ձեռք չառան: Զաջ հայտնի է Անգլիայի արքային քաղաքականությունն արարողներից մեկի արտահայտությունը, թե բրիտանական նավերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները: Լավագույն դեպքում եվրոպական մամուլում ցավակցություն էր հայտնվում հայերի տառապանքներին: Թուրքերի զագանությունները դատապարտվեցին մի շարք հայտնի հասարակական գործիչների, մշակույթի ներկայացուցիչների Անտալի Ֆրանսի, Յոհաննես Լեփախուսի, Վիկտոր Բերարի, Հենրի Լինչի և այլոց կողմից: Ֆրանսիական սոցիալիստների առաջնորդ Ժան Ժորեսը խարանեց եվրոպական կառավարությունների վարքագիծը, հայտարարելով, որ «Եվրոպայի անմոռն ու կրավորական ցավակցությունը մեծագույն հանցագործություն էր», որ նման վերաբերմունքը հանդեպ Հայաստանի սոսկ «խրախուսում էր սուլթանին և այն հանցագործություններն ու ապօրինությունները, որոնք միշտ էլ խռովություններ են հարուցում...»:

**Երիտթուրքերը իշխանության
դեկի մոտ: Ադանայի
1909 թ. կոտորածը**

XIX դարի վերջին քառորդը - XX դարի սկիզբը Օսմանյան կայսրության համար նշանավորվում է ընդհանուր փոփոխական և քաղաքական ճգնաժամի հեղափոխական խորացումով: Ի-

րենց դարձ ապրած ավադադիական հարաբերությունները, որոնց քաղաքական արտահայտությունն էր սուլթանական ինքնակալությունը, հակասության մեջ մտան երիտասարդ թուրքական բուրժուազիայի շահերի հետ, որը ձգտում էր հաստատվել հասարակության ոչ միայն փոփոխական, այլև քաղաքական ոլորտում: Թուրքական հասարակության ընդերքում հաստատվում էր ընդդիմություն հանդեպ սուլթանական իշխանության: Կայսրությունում սրելովձված ընդհանուր ծանր կացությունը խորանում էր թուրքական տիրակալության տակ գրկվող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ընդլայնումով: Ընդդիմադիր քաղաքական ու-

ժերը ձգարում էին դուրս բերել երկիրը ճգնաժամից և դրա հետ մեկտեղ ամեն գնով պահպանել կայսրության ամբողջականությունն ու անբաժանելիությունը: Շենք այդ նպատակն էր հետապնդում «Միություն և առաջադիմություն» («երիպրություն») կուսակցությունը, որը կազմակերպվել էր 1889 թ. և շուրջով դարձել ընդդիմադիր ուժերի միջուկը:

Երիպրությունը կուսակցությունը առաջ քաշեց օսմանիզմի դոկտրինան, որի համաձայն նրանք Օսմանյան կայսրությունը հռչակեցին այնպիսի ապրող մահմեդական և ոչ մահմեդական բոլոր ժողովուրդների ընդհանուր հայրենիք: Այդ դոկտրինան կոչված էր պահպանելու Օսմանյան կայսրության անբաժանելիության սկզբունքը, ոչ մահմեդական ժողովուրդների հետագա համաձուլմամբ: Դրա հետ մեկտեղ, պայքար մղելով սուլթանական ինքնակալության դեմ, երիպրությունը ձգարում էին համախմբել կայսրության բոլոր ընդդիմադիր ուժերը, սուլթանի դեմ պայքարի ընդհանուր հունի մեջ մղել Թուրքիայի ոչ մահմեդական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Շենք այդ նպատակով էլ երիպրությունը չէին զլանում խապտումներ փախ, հայտարարում էին ազգային ճնշմանը վերջ փախու, ոչ թուրք ժողովուրդներին քաղաքական իրավունքներ ընձեռելու անհրաժեշտության մասին: Այդ խապտումները մոլորության մեջ գցեցին արևմտահայերի որոշակի քաղաքական շրջանների, մասնավորապես Դաշնակցություն կուսակցությանը, որը համագործակցության գնաց երիպրությունից հետո՝ հանուն սուլթանական սարելի վարչակարգի փախալման: Մակայն, 1908 թ. կարարելով պետական հեղաշրջում, իսկ 1909-ի մարտի վերջին գալով իշխանության, երիպրությունը չկարարեցին իրենց խապտումները: Ավելին, նրանք դադարեցին թաքցնելուց իրենց իրական մտադրությունները ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ: Ազգայնամոլությունը բարձրացվեց պետական քաղաքականության աստիճանի: Հասկանալով, որ ոչ թուրք ժողովուրդների թուրքացումը չի կարող ձեռք բերվել խաղաղ ճանապարհով, երիպրությունը պարբերաբար սկսեցին այն իրագործել բռնությամբ:

Առաջին նախաձեռնան այն բանի, որ երիպրությունը մտադիր էին ի կարար անել իրենց ներշնչվող ծրագիրը, եղավ Կիլիկիայի հայ ազգաբնակչության կոտորածը՝ կազմակերպված 1909 թ. գարնանը: Կիլիկիայի հայերի դեմ մտացածին մեղադրանք հարուցելով, թե իբր նրանք ձգարում են դուրս մղել թուրքերին և վերականգնել «Հայկական թագավորությունը», փրկական իշխանությունները երիպրությունից հրահանքով նախապարաստեցին հայերի կոտորածը: Գաղտնի ցուցումներ ուղարկվեցին գավառներ ջարդեր կազմակերպելու վերաբերյալ: Զարդի նախօրեին իշխանությունները մահմեդական ազգաբնակչությանը զենք բաժանեցին, բանտերից ազատեցին մի քանի հարյուր քրեական հանցագործների: 1909 թ. ապրիլի 1-ին թուրքական խաժամուժը հորդեց Ադանայի հայկական թաղամասերը և ձեռնամուխ եղավ ջարդին ու թալանին, որը տևեց երեք օր: Ապրիլի 12-ին քաղաք մտնող թուրքական կանոնավոր զորքեր իբրև թե կարգուկանոն վերահաստատելու համար: Իսկ իրականում այդ զորամասերը նպաստեցին ջարդերի վերականգնել՝ առավել լայն չափերով: Ռուսաստանի դեսպանը Կոստանդնուպոլսում հաղորդում էր իր կառավարությանը, որ «մահմեդականների մոլեգնությունները Ադանայի վիլայեթում հասել են երեշավոր չափերի... Մի կարճ ժամանակ կարժես թե Ադանա քաղաքում դադարած անկարգությունները վերականգնեցին թուրքական կառավարության կարգադրությամբ՝ անդորրը վերականգնելու համար այնպիսի ուղարկված զորաջոկապի ժամանումից հետո: Զինվորա-

կաններն անցան փեղական մահմեդական ազգաբնակչության պարագլուխների կողմը և սկսեցին կոտորել քրիստոնյաներին առանց սեռի ու փարիքի խորությամբ, և կոդուպել ու երկիզել նրանց փները... Աղանա քաղաքն այլևս գոյություն չունի»: Ջարդերը փեղի ունեցան Աղանայի վիլայեթի բոլոր գավառներում և Նախալի վիլայեթի հայաբնակ մի շարք գյուղերում: Կոտորածի գոհերի ընդհանուր թիվը հասնում էր 30 հազար հոգու, որոնցից ավելի քան 20 հազարը՝ Աղանայի վիլայեթում: Մի շարք բնակավայրերում՝ Սսում, Նաճընում, Ջեյթունում և այլուր հայերն ինքնապաշտպանություն կազմակերպեցին, կարողացան հեղհեղ ջարդարարների հարձակումը և խուսափել կոտորածից:

Աղանայում և հարևան շրջաններում կազմակերպված ջարդերով երկիրը քրեական ղեն նեպեցին իրենց դիմակը, բացահայտելով իրենց իրական ազգայնամոլ եությունը:

5. ԹՈՒՐԻԱՅԻ ՆԱՅ ԱԶԳԱՐՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՔԵՐԻՆ

Անցնելով 1915-1916 թթ. եղերական իրադարձությունների նկարագրությանը, որոնք հայրնի են իբրև հայերի զանգվածային ցեղասպանության փարիներ, նշենք, որ, անկասկած, ցեղասպանության ակտեր էին՝ և՛ հայերի ջարդերը Թուրքիայում 1890-ական թվականներին, և՛ Կիլիկիայի հայերի կոտորածը 1909 թվականին, որոնց մասին խոսվեց վերը: Անկախ այն բանից, թե ովքեր էին կատարել այդ ջարդագործությունները՝ սուրբան Աբդուլ Նամիդի կառավարությունը, թե երկրորդները, ջարդարարների հեղափոխած նպատակները, նրանց գործողությունների դրդապատճառները ըստ էության նույնական էին և համապատասխանում էին ցեղասպանությանը միջազգային իրավունքի վրած սահմանմանը:

Յեղասպանությունը ծանրագույն հանցագործություն է մարդկության դեմ

Յեղասպանության սահմանումը փրվել է Նյուրնբերգի միջազգային զինվորական փարյան խարտիայում: Նյուրնբերգում 1945-1946 թթ. փեղի էր ունենում նախապական գլխավոր ռազմական հանցագործների դատավարությունը: Վարչության Գեմանիայի նախկին

փեր ու փիրականերին ներկայացված մեղադրանքներում նշվում էին նաև հանցագործությունները մարդկայնության դեմ, այդ թվում սպանություն, կոտորած, փեղահանություն և ուրիշ անմարդկային արարքներ քաղաքացիական ազգաբնակչության դեմ: Նյուրնբերգի փրիքունալի ի նկարի ուներ հիպոթերականների գործողությունները, որոնք ուղղված էին հրեաների, սլավոնների, գնչուների և ուրիշ ազգերի ու ազգագրական խմբերի ոչնչացմանը: Միջազգային զինվորական փարյան խարտիայի դրույթները ընկան «ցեղասպանություն» հասկացության, իբրև միջազգային հանցագործության, իրավական մշակման հիմքում: 1948 թ. Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեյան ընդունեց «ցեղասպանության հանցագործության և դրա համար պարթի մասին կոնվենցիան», որում ցեղասպանությունը բնորոշված է իբրև գործողություններ, որոնք կատարվում են ազգային, ռասայական, ցեղային կամ կրոնական որևէ խումբ լրիվ կամ մասնակիորեն ոչնչացնելու մարադրությամբ: Այնուհետև Կոնվենցիայում թվարկված են այն գործողությունները, որոնցից յուրաքանչյուրը ճանաչվում է իբրև ցեղասպանության ակտ, այն է՝ 1. խմբի անդամների սպանություն. 2. նրանց լուրջ մարմնական վնասվածքների կամ մարավոր խանգարման պատճառով. 3. խմբի համար կանխամարածված կերպով այնպիսի կենսական պայմաններ

րի սրեղծում, որոնք հաշվարկված են նրանց լիակատար կամ մասնակի ֆիզիկական բնաջնջման համար. 4. միջոցառումներ, որոնք հաշվարկված են կանխելու համար մանկածնությունը և այդպիսով սերնդի շարունակությունը խմբի միջավայրում. 5. բռնի կերպով երեխաների հանձնում մարդկային մի խմբից մյուսին:

1894-1896 թթ. և 1909 թ. իրադարձությունների առնչությամբ հարկ է ասել, որ լրիվ ծավալով Կոնդեյնի և Նոննեյնի այն գործողությունները, որոնք նշված են առաջին երեք կետերում, իսկ 1915-1916 թթ. իրադարձությունների առնչությամբ կիրառելի են, ինչպես կրեմները սպորտ, Կոնվենցիայի բոլոր հինգ կետերը: Հարկ է հատուկ նշել, որ ՄԱԿ-ի Կոնվենցիան չի ճանաչում իրավաբանական վաղեմություն իբրև ցեղասպանություն որակվող հանցագործությունների համար պարժելիս:

Հասկանալի է, որ Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայ ազգաբնակչության նկարմամբ XIX դարի վերջին - XX դարի սկզբին և 1915-1916 թթ. իրագործված ցեղասպանության ակտերի միջև կան որոշակի տարբերություններ՝ պայմանավորված փոփոխված քաղաքական իրադրությամբ և հանցագործության մասշտաբներով: Այդ տեսանկյունից XIX դ. վերջի - XXդ. սկզբի իրադարձությունները, իրենց ամբողջ երեշյանությամբ հանդերձ, կարող են ճանաչվել սոսկ իբրև նախերգանքը այն սահմնեկեցուցիչ եղեռնի, որն իջավ հայ ժողովրդի գլխին առաջին աշխարհամարտի տարիներին և ըստ էության շարունակվեց մինչև 1920-ական թվականների սկիզբը:

Յեղասպանության պարճառները

Թուրքիայի կառավարող շրջանների հայապայաց քաղաքականությունը, որը և վերաճեց ցեղասպանության, հեղեղանք էր մի շարք պարճառների, ինչպես նաև նպատակների, որոնք հետապնդում էին իթթիհապականներն իրենց արտաքին և ներքին քաղաքականության մեջ:

Երիտթուրքական կառավարությունը առաջնորդվում էր պանթուրքիզմի վարդապետությամբ, որի հիմքում ընկած էր Թուրքիայի գայիստի ներքո բոլոր թյուրքալեզու ժողովուրդներին մեկ միասնական պետության մեջ միավորելու ազգայնամոլական գաղափարը: Պանթուրքիզմը ձևավորվեց XIX դարի վերջին իբրև նորածին թուրքական ազգային բուրժուազիայի գաղափարախոսություն: Պանթուրքիզմը ըստ էության փոխարինեց Օսմանյան կայսրության կառավարող շրջանների կողմից մինչ այդ դավանվող օսմանիզմին, երբ, հարկապես 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներից հետո, պարզ դարձավ, որ կայսրության ոչ թուրք ժողովուրդների համաձուլումը անհասանելի խնդիր է:

Պանթուրքիզմի դոկտրինան ուղղված էր, այսպիսով, առաջին հերթին հայերի դեմ կայսրության ներսում, իսկ դրսում՝ նաև Ռուսաստանի դեմ: Թուրքիայի վերածումը սոսկ մեկ ազգի՝ թուրքերի պետության, հարկ էր սկսել կայսրության հայերի բնաջնջումից: Դրան զուգընթաց հայ ժողովրդի մնացյալ մասը՝ Արևելյան Հայաստանի ազգաբնակչությունը, ընկած էր «Մեծ Թուրանի» սրեղծման ցնդրամիտ գաղափարի իրագործման ճանապարհին, որը, ըստ թուրքական ազգայնամուլների բաղձանքների, պետք է իր մեջ ներառներ, Թուրքիայից գալ, նաև Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասը, Դրիմը, Պովոլժիեն, Միջին Ասիան, որտեղ ապրում էին թյուրքական ծագումով բազմամիլիոն մարդիկ: Այսպիսով, պանթուրքիզմի ազգայնամուլ դոկտրինայի սայրը ուղղված էր ամբողջ հայ ժողովրդի դեմ:

Թ-ուրբիայի հայ ազգաբնակչության վերացումը հնարավորություն կընձեռեր կառավարող վերնախավին լուծելու գլխավոր խնդիրը, որ մրահեցում էր նրանց սուլթան Աբդուլ Համիդ II-ի ժամանակներից: Արևմտահայերի դրությունը, Հայկական հարցը քանիցս օգտագործվել էին եվրոպական փերությունների, մասնավորապես Ռուսաստանի կողմից, իբրև հարմար պայտրվակ միջամտելու Թ-ուրբիայի ներքին գործերին: Թ-ուրբիայի կառավարողները, ովքեր ամենևին էլ չէին կամենում լուծել Հայկական հարցը թեկուզ Բուլիին վեհաժողովի սահմանումների կամ եվրոպական փերությունների մշակած հեփագա բարեփոխումների ծրագրերի սահմանափակ շրջանակներում, վաղուց ի վեր գտնում էին, որ կայսրության ներսում հայ ազգաբնակչության վերացումը Հայկական հարցի «լուծման» և, հեփաբար, դրսից Թ-ուրբիայի ներքին գործերին միջամտելու հնարավորության վերացման ամենահավաստի եղանակն է: Սկսած Աբդուլ Համիդից Թ-ուրբիայի կառավարող շրջանները ղեկավարվում էին այդ որքան պարզունակ, ճայնքան էլ շնական փրամաբանությամբ՝ չեն լինի հայեր, չի լինի նաև Հայկական հարց:

Առաջին աշխարհամարտի մեջ մրնելով Քառյակ միության կազմում, երիտթուրքերի ղեկավարները հայտ ունեին, որ հաղթանակը Ռուսաստանի նկատմամբ հնարավորություն կընձեռի իրագործելու «Մեծ Թ-ուրանի» սփռնման պանթյուրքական ծրագրերը:

Վերը արդեն նշվեց, որ անգամ սուլթանական վարչակարգի պայմաններում Թ-ուրբիայի առևրրական, հիմնականում այլազգի կոմպրադորական բուրժուազիան պահպանել էր իր առաջափար դիրքերը երկրի փնրեեսության մի շարք ճյուղերում: Իսկ թուրքական ազգային բուրժուազիայի կազմավորմամբ վերջինիս շահերը անխուսափելիորեն բախվեցին առկա դրությամբ՝ թուրքական ազգային բուրժուազիան իր համար փեղ էր պահանջում «արևի փակ», ձգտում էր դուրս մղել ոչ թուրքական, այդ թվում և հայկական բուրժուազիային փնրեեսության ոլորտներից: Այդ դուրսմղումը չէր կարող իրագործվել մրցակցական պայքարի միջոցով, քանզի թուրքական ազգային թույլ բուրժուազիան ի վիճակի չէր նման պայքարում ապահովել իր գերազանցությունը: Բայց որքանով որ թուրքական բուրժուազիայի ձեռքին էին գտնվում քաղաքական իշխանության լծակները, հափկապես երիտթուրքերի իշխանության գլուխ անցնելուց հեփո, ուստի պայքարը ձեռք բերեց բռնի դուրսմղման, ոչ թուրքական բուրժուազիայի կողմից նախկինում սփռեղծված կառույցների ավերման բնույթ: Պափահական չէր, որ XIX դարի վերջի - XX դարի սկզբի հայկական ջարդերի ժամանակ կողոպուտվում և ոչնչացվում էին հայերին պափրկանող առևրրական փները, խանութները, ձեռնարկությունները: Ասածից հեփնում է, որ երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը համապափասխանում էր թուրքական ազգային բուրժուազիայի շահերին, որը ձգտում էր փերանալ հայերի բրտինքով սփռեղծված արժեքներին և իր անբաժան փիրապետությունը հասփափել երկրի փնրեեսության մեջ, դրամական գործառնություններում և այլն:

Մեկ գործոն ևս սնուցում էր Թ-ուրբիայի կառավարող շրջանների հակահայկական քաղաքականությունը և խորացնում ընդհանուր հակահայկական փրամադրվածությունը երկրում. դա արևմտահայերի վերափերմունքն էր դեպի Ռուսաստանը, որը Թ-ուրբիայում համարվում էր դարավոր թշնամի: Բավականին հաճախ

յրեղի ունեցող ռուս-թուրքական պարերազմների ժամանակ Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը չէր թաքցնում իր ռուսամետ քրդամադրվածությունը, օգնություն էր ցույց տալիս ռուսական զորքերին, որոնք քանիցս ռազմական գործողությունների ընթացքում մուրք էին գործել Արևմտյան Հայաստանի տարածքը: Սակայն հետո, երբ ռուսական զորքերը լքում էին գրաված տարածքը, թուրքական իշխանությունները հաշվեհարդար էին տեսնում արևմտահայերի հետ: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը հիմնովի ուղղված էր թուրքական բռնապետության դեմ և դաժանաբար ճնշվող, մահացու վրանգի ենթարկված ժողովրդի բնական անդրադարձն էր: Պարսկության փորձը ցույց է տալիս, որ փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, որպես կանոն, կողմնորոշվում է դեպի արտաքին ուժի օգնության սպասում: Դեպի Ռուսաստան էին կողմնորոշվում Բալկանների սլավոնական ժողովուրդները, որոնք ռուսական զենքի անմիջական օգնությամբ ազատագրվեցին թուրքական լծից: Դեպի Ռուսաստան էին կողմնորոշվում նաև արևմտահայերը, որոնք, ինչպես արդեն ասացինք, սկզբնապես չէին առաջադրում Թուրքիայից անջատման կամ նույնիսկ Թուրքիայի կազմում ազգային-մշակութային ինքնավարության պահանջ: Բայց և այնպես արևմտահայերի ասկներն ռուսամետ կողմնորոշումը լիովին օգտագործվեց թուրքական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ արելության ու անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու և հետագա ցեղասպանության իրագործման համար՝ հայերի բուն հայրենիքը սեփականացնելու նպատրույթով:

Վերը բնութարկված դրդապարճառներն ամբողջությամբ կանխորոշեցին երկրորդ թուրքական ռեմակի վճռականությունը՝ օգտագործելու սկսված առաջին աշխարհամարտը իրենց ազգայնամոլ նպատակներն իրականացնելու համար:

Յեղասպանության նախապատրաստումը. նրա իրագործման մեխանիզմը

Բազմաթիվ հավաստի փաստեր վկայում են, որ հայերի բնաջնջման ծրագրերը երկրորդ թուրքական սկսեցին մշակել և մասնակիորեն իրագործել դեռևս մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը: Իսկ նույնիսկ ասած, 1909 թ. Ադանայի կոպրածից հետո,

առայժմ «յրեղական» բնույթ կրող ջարդեր ու կոտորածներ տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում: Առաջին աշխարհամարտի նախօրյակին, հարկապես 1912-1913 թթ. Բալկանյան պարերազմների ժամանակաշրջանում Թուրքիայում խտրվում էր հայերի նկատմամբ անվտանգության ու արելության մթնոլորտը, հաճախակի դարձան բռնության կոտորածների դեպքերը: 1912 թ. դեկտեմբերին Վասպուրականի մի մեծ խումբ հայեր Գևորգ Ե կաթողիկոսին հղված իրենց դիմումում նկարագրում էին իրենց աղեկալի վիճակը. «...Արանայեն հետո ալ,- ասվում էր դիմումում,- Ժեռն-թյուրքերը շարունակողը եղան համարյա հայացինք քաղաքականության... շարունակվեցան Հայաստանի մեջ սխարեմարիկ ջարդեր՝ մեկով, հինգով, տասնով: Վերջին վեց ամսվան մեջ միայն Վասպուրականի մեջ 60 է ավելի հայեր ջարդվեցան այդ եղանակով... շարունակվեցան առևանգություններ, թալան և այլն»: Այդ նույն ժամանակ Թուրքիայում աշխարհաօրարերկրյա դիվանագետները հաղորդում էին իրենց կառավարությանը, որ

երիպրությունները չեն թաքցնում իրենց բուն նպատակները, վարում են հակահայկական քաղաքականություն՝ հայերի դեմ գրգռելով մոլեռանդ մահմեդական ամբոխին: Այսպես, 1913 թ. դեկտեմբերի սկզբներին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանը հաղորդում էր, որ Էրզրումում «մուսուլմաններին արհեստականորեն գրգռում են հայերի դեմ»: Այնուհետև նա նշում էր, որ իթթիհապականներից շարքերի քննարկում գաղտնի ժողովներ են տեղի ունենում, որոնցում եռանդուն հակահայկական քաղաքականություն է տարվում: Երիպրությունների գաղտնի հավաքույթները շարունակվում էին և, ինչպես նշում էր դեսպանն իր մեկ այլ հաղորդագրության մեջ. «դրանցում բացեիբաց սկսել են խոսել հայկական կոտորածի մասին»:

Շուրջով գաղտնի ղարձավ բացահայտ: 1914 թ. սկզբին, այսինքն պատերազմը սկսվելուց դեռ շար առաջ, արևելյան վիլայետների տեղական իշխանությունները ստացան կառավարության հարույս հրահանգն այն մասին, թե ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն հայերի նկատմամբ: Այն փափաղ, որ հրահանգը մշակված և ուղարկված էր նախքան ռազմական գործողությունների սկսվելը, անհերքելիորեն վկայում է, որ հայ ազգաբնակչության տեղահանումը և բնաջնջումը ծրագրված էր նախօրոք և պայմանավորված չէր կոնկրետ ռազմական իրադրությամբ, որը հետագայում վկայակոչում էին երիպրության պարագլուխները:

Պատերազմի նախօրեին և հետագայում էլ երիպրությունների կուսակցության ղեկավարությունը բանիցս քննարկել է հայ ազգաբնակչության տեղահանման և ոչնչացման հարցը: Այդ խորհրդակցությունների ավելի ուշ հայտնի դարձած մանրամասնությունները ցույց են տալիս, որ դրանցում խոսքը գնում էր ոչ թե ճակատամերձ գոյու հայ ազգաբնակչության տեղահանության, այլ ընդհանրապես Թուրքիայում ամբողջ հայ ազգաբնակչության բնաջնջման մասին: Ընդդրում երիպրությունների ղեկավարները հաշվի էին առնում, որ սկսված պատերազմը նրանց բարենպաստ պայմաններ է ընձեռում իրագործելու այդ հրեշավոր մարտիրոսությունը: Հանդես գալով «Միություն և առաջադիմություն» կուսակցության գաղտնի նիստերից մեկում, նրա ղեկավարներից Նազըմը բացահայտ կոչ էր անում գլխավոր բնաջնջել հայերին: «Եթե բավարարվենք մասնակի կոտորածով, ինչպես այդ եղավ 1909 թ. Ադանայում և ուրիշ շրջաններում, - հայարարել էր նա, - ապա այն օգուտի փոխարեն վնաս կբերի... Ես բազմիցս ասել եմ և այժմ էլ կրկնում եմ՝ հայ ժողովրդին պետք է ոչնչացնել հիմնովին, որպեսզի ոչ մի հայ չմնա մեր երկրում և մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի հարմար իրադրություն այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունը և համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքներն աննկատ կմնան, իսկ եթե նրանք խմանան էլ, ապա կանգնած կլինեն կապարված փաստի առաջ, և դրանով էլ հարցը կփակվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդունեն հայերի գլխավոր բնաջնջման բնույթ, անհրաժեշտ է ոչնչացնել մինչև վերջին մարդը...»:

1914 թ. հոկտեմբերին կայացած գաղտնի խորհրդակցությունում, որը գլխավորում էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալաաթը, կազմավորվեց հարույս մարմին՝ Երեքի գործադիր կոմիտե, որի կազմի մեջ մտան երիպրությունների ղեկավարներ դոկտոր Նազըմը («Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնի քարտուղարը), Շյուքրին (լուսավորության նախարարը) և դոկտոր

Բեհաւերդին Շաքիրը («Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան գաղափարախոսը): Գործադիր կոմիտեն, որի վրա դրվեց զանգվածային ջարդերի կազմակերպումը, օժտված էր լայն լիազորութիւններով, նրա փրամադրութեան փակ դրվեցին դրամ և զենք: Դրանից անմիջապէս հետո սրբեցվեց «Նարայի կազմակերպութիւնը» («Թեշքիլարը մահաուսն»), որի ընդհանուր ղեկավարութիւնը իրազործում էր Բեհաւերդին Շաքիրը: Նրա ջոկատների մեջ հավաքագրվում էին գերազանցապէս բրեսկան փարրեր, բանտերից ազատված հանցագործներ, նույնիսկ մահվան դատապարտված: Այդ ջոկատները պէտք է իրազործէին հայերի զանգվածային բնաջնջումը:

Գործադիր կոմիտեն Թուրքիայի հայաբնակ վայրերը բաժանեց երեք գոյրիների՝ Արևելյան Անատոլիա (Արևմտյան Նայասարան), Կիլիկիա և Արևմտյան Անատոլիա (վերջինիս մեջ ընդգրկված էր նաև Թուրքիայի եվրոպական մասը): Գոյրիներից յուրաքանչյուրում հայաջնջման գործողութիւնը պէտք է գլխավորէին համապատասխանաբար Բեհաւերդին, Շյուքրին և Նազըմ բէյը: Այցելելով իրենց ամրացված գոյրիները, երկրորդութեան պարագլուխները մշակեցին հայերի փողահանման և բնաջնջման մեխանիզմը, հրահանգներ փոխեցին փողական իշխանութիւններին: Շփումներ հաստատվեցին բոլոր ցեղապետների հետ, որոնց կարևոր դեր էր հասկացվում հայերի կոտորածների իրականացման գործում:

Պատերազմը սկսվելուն պէս Թուրքիայում հակահայկական քարոզչութիւնը կարող էր պայման ուժեղացաւ: Մամուլում, երկրորդութեան կուսակցութեան գործիչների ելոյթներում հայերի դէմ հարուցվում էին մեղադրանքներ՝ պնդում էին, որ հայերը հրաժարվում են ծառայել թուրքական բանակում, որ նրանք պատրաստ են համագործակցելու թշնամու հետ: Մերկապարանոց հակահայկական քարոզչութիւնը առանձնապէս ուժեղացաւ Կովկասյան ռազմաճակատում թուրքերի կրած առաջին պարտութիւններից հետո. այժմ հայերը մեղադրվում էին թիկունքում թուրքերի դէմ ապստամբութիւն կազմակերպելու մեջ: Այդ ամենը նպատակ էր հետապնդում նախապարտապետելու սեփական ժողովրդին, նրա մեջ արելութիւններ շնչելու դէպի հայերը և դրանով իսկ դուրսացնելու մտաւեղացված չարագործութիւնը:

Պատերազմի սկզբին թուրքական բանակ գորակոչվեցին 18-45 տարեկան ավելի քան 60 հազ. հայեր: Սակայն թուրքական հրամանադատութիւնը նրանց զենք չվարահեց, գորակոչված հայերը հավաքագրվեցին բանվորական զոմարտակների մեջ և օգտագործվում էին ճանապարհների, ամրութիւնների և այլ կառույցների շինարարութեան մեջ: 1915 թ. փետրվարին զինվորական նախարար Էնվերը կարգադրութիւն արեց թուրքական բանակում ծառայող բոլոր հայերի բնաջնջման մասին: Զինվորական հրամանադատութեան ուղղված հանձնարարականում աւելում էր. «Կայսերական կառավարութիւնը հրաման է արձակել ամբողջ հայ ժողովրդին բնաջնջելու մասին... Կայսերական բանակներում ծառայող բոլոր հայերին, չլախերելով սովորական կարգապահութիւնը, առանձնացնել իրենց գորաբաժիններից, փանել մեկուսացված վայրեր՝ հեռու կողմնակի աջերից, և զնդակահարել»: Այդ հրամանը կարարվեց: «Թուրքական ամբողջ կանոնավոր գնդեր, - գրում էր Թուրքիայում աշխատած ամերիկյան իրավագետ դոկտոր Ն.Ա. Գիբբոնսը, -

որոնք նշանակված էին «հայկական հեղափոխությունը ճնշելու» համար, հանկարծ վրա էին տալիս այդ [հայկական] խմբերի վրա, որոնք խաղաղ աշխատում էին քլունգներով, լինգերով ու բահերով, և չբողոքելով, որ նրանք ուշքի գան, գնդակահարում էին նրանց: Եթե որևէ մեկը փորձում էր փախչել, նրան հեղափոխություն էին ներկայացնում և խողովում կամ գնդակահարում էին նրան»: Այդպիսով արևմտահայերը գրկվեցին իրենց արական ազգաբնակչության առավել մարտունակ մասից: Թուրքական բանակում ծառայող հայերի զանգվածային սպանող նշանակում էր ցեղասպանության սկիզբ: Հաջորդ հարվածը հասցվեց հայ մարտնչականությանը:

1915 թ. գարնանից հանցագործության թափանիվը սկսեց ավելի ու ավելի ուժեղ պարզվել՝ հրեշավոր սպանողի մեջ ներառնելով հայ ազգաբնակչության նորանոր խավեր: Ոչ մի սոցիալական միջնախավ չխուսափեց փեղախանության սարսափներից, որը նույնպես վկայում է երիտթուրքական պաշտպանների՝ կայսրությունում բնակվող բոլոր հայերի և, առաջին հերթին, Արևմտյան Հայաստանում՝ իրենց բնօրրանում ապրող հայերի գլխավին ոչնչացնելու մարտդրությունը: Թուրքական տարրը Անատոլիայի հենց այդ մասում գերակշռող դարձնելու միտումը հանդիսացավ հայերի ցեղասպանության գլխավոր դրոշմապարճաններից մեկը:

1915 թվականի ապրիլի 24-ը

Ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերի ընթացքում Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներում ձերբակալվեցին և ապա Անատոլիայի խորքերն աք-

սորվեցին հայ մարտնչականության ականավոր ներկայացուցիչները՝ գրողներ, լրագրողներ, գիտնականներ, հոգևորականներ, հրապարակիչներ, մանկավարժներ, արվեստի գործիչներ, ավելի քան 800 մարդ: Նրանց թվում էին՝ նշանավոր հայ գրող, Օսմանյան պառլամենտի նախկին երեսփոխան Գրիգոր Զոհրապը, տաղանդավոր բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, գրողներ, հրապարակախոսներ Նազարեթ Թագվորյանը, Թվարիկցին, Տիգրան Զյոբյուրյանը, Մմբար Բյուրաթը, Երուխանը, գիտնականներ Տիգրան Բելեքյանը, Գագիկ Օզանյանը, դերասան Ենովք Ծախենը, նկարիչ Հրանտ Ասրվաճապրյանը և ուրիշներ: Կոստանդնուպոլսի հայ մարտնչականության մեծ խմբից կենդանի մնացին տառացիորեն հայտնվեցին մարդիկ՝ երգիծաբան Երվանդ Օրյանը, գրող և նկարիչ Արամ Անտոնյանը, հրապարակիչ Թեոդիկը և ուրիշներ: Մնացյալ բոլորը չհասան արքայապարհ՝ չարաններգործներ սպանվեցին ճանապարհին: Ձերբակալվեց նաև հայ մեծ երաժշտահան Կոմիտասը: Այնուամենայնիվ հարազատ ժողովրդի ողբերգությանը, չլուրջացնելով ծանրագույն հոգեկան ցնցումը, նա կորցրեց բանականությունը: Սուս շնորհիվ ազդեցիկ միջնորդության, հիվանդ Կոմիտասը վերադարձվեց Կոստանդնուպոլիս, դրվեց հիվանդանոց, իսկ հետո, 1919 թ. ուղարկվեց Փարիզ հոգեբուժարան, որտեղ և կնքեց իր մահկանացուն 1935 թ.:

Երկու ամիս անց, 1915 թ. հունիսի 15-ին, մայրաքաղաքի հրապարակներից մեկում կախաղան բարձրացվեցին 20 մարտնչական հայեր՝ Հնչակյան կոսակցության անդամներ, որոնց շինծու մեղադրանք էր ներկայացվել իշխանությունների դեմ ահաբեկչության կազմակերպման և ինքնավար Հայաստանի ստեղծման համար:

Թուրքական ջարդարարները մարտրվել էին հաշվեհարդար տեսնել մայրաքաղաքի

հայկական համայնքի հետ, սակայն նրանց այդ քայլից հետ պահեց երկյուղը, որ Կոստանդնուպոլսում գրեմված օրաբերեկրյա դեսպանատների միջոցով այդ եղեռնագործությունը հայրենի կղառնա համաշխարհային հասարակայնությանը: Կոստանդնուպոլսի հայերի մի մասին հաջողվեց հեռանալ երկրից: Ոչնչացնելով ազգի ծաղիկը՝ հայության հոգևոր առաջնորդներին, երիտթուրքերն ըստ Էության գլխավորեցին արևմտահայ ազգաբնակչությանը:

Այդիլի 24-ը, Կոստանդնուպոլսի հայ միավորականության հետ հաշվեհարդարի օրը, ամեն փարի նշվում է իբրև հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

**Հայ ազգաբնակչության
տեղահանությունը և
ջարդերը 1915-1916 թթ.**

1915 թ. մայիսից սկսվեց Արևմտյան Հայաստանի վիլայեթների (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր, Սեբաստիա), Կիլիկիայի, Արևմտյան Անատոլիայի և այլ վայրերի հայ ազ-

գաբնակչության զանգվածային տեղահանությունը, որն ուղեկցվում էր հայերի կոտորածներով: Ինչպես ողջ մնացած հայերի, այնպես էլ այդ սահմնակեցուցիչ օրերի իրադարձությունների շարք սկանապոետների պահպանված բազմաթիվ վկայությունները թույլ են տալիս վերաբերելու ոչ միայն հայ ժողովրդի ապրած ռեբրգական ընդհանուր պարկերը, այլև նրա մանրամասները: Ամենայն հավաստիությամբ մեր աչքի առջև հառնում է տեղահանության և մարդկանց բնաջնջման ընթացքը ըստ առանձին վիլայեթների, գավառների, քաղաքների, անգամ գյուղերի:

Թուրքական կառավարության կողմից 1915 թ. մայիսի 14 (27)-ին տեղահանության մասին օրենքի ընդունումից հետո պաշտոնական մունիսիպալիտետի միջոցով բոլոր քաղաքներում ու գյուղերում հրամայվեց հայ ազգաբնակչությանը իշխանությունների կողմից սահմանված ժամկետում (սովորաբար 2-3 օրվա, երբեմն էլ մի քանի ժամվա ընթացքում) թողնել իրենց տները «ժամանակավոր» վերաբնակեցման համար: Չվերթի ուղին տեղահանվողներին չէր հայտնվում: Նրանց ամբողջ անշարժ կայքը հայտարարվում էր բռնագրավված պետության կողմից (ջանալով մոլորության մեջ գցել սեփական ժողովրդին և համաշխարհային հանրությանը, սկսած 1915 թ. մայիսից թուրքական կառավարությունը մեկը մյուսի հետևից երեք օրենք ընդունեց թողնված կայքի մասին, որոնց համաձայն հայերի ունեցվածքը պետք է գնահատվեր, նրա արժեքը մուծվեր գանձարան, որպեսզի հերագայում իբր թե վերադարձվեին տներին: Այդ օրենքները չկենսագործվեցին, քանզի հայերի ունեցվածքին անմիջապես փրազան թուրքերը, իսկ պարտագամից հետո հայ ազգաբնակչության նախկին բնակավայրերում հայեր չկային, նրանք բոլորը կամ ոչնչացվել կամ տեղահանվել էին): Տեղահանվողներին թույլատրվում էր իրենց հետ վերցնել միայն ամենաանհրաժեշտը, բայց այդ էլ՝ դրամը, ուրտիլը, անգամ հագուստը, խլում էին տեղահանվողների կարավաններն ուղեկցող զինվորները, ժանդարմները, կամ բրդական հրոսակները, որոնք ճանապարհին հարձակվում էին քարավանների վրա:

Նկարագրելով տեղահանությունը, 1915 թ. սեպտեմբերին հրապարակված հոդվածի գերմանացի հեղինակը գրում էր. «Ամենուր առաջին հերթին առանձնացնում էին փոստադրական կանանցից, ընտանիքի անդամներին միմյանցից, և հաճախ նաև երեխաներին ծնողներից»: Տեղահանվածների քարավանները շարժվում էին ոչ թե գլխավոր ճանապարհներով, այլ զարկուղի ուղիներով, որպեսզի ուշադրություն չգրավեն: Բացի այդ, մեկուսի վայ-

ընդունում ավելի հարմար էր կոտորել դժբախտներին: Նույն հեղինակը, պատմելով Վանի և Էրզրումի հայերի տեղահանման մասին, գրում էր. «Անստիճանի մեկուսի լեռնային կիրճերով ամառային տոթին, կիզիչ արևի տակ դաժան ժանդարմների մահակների ու մորակենդի հարվածների տակ սովահար, տոթից ու ծարավից պապակված մարդկանց ամբոխները, բոկոսներ, լացող կանանց ու երեխաներին բռնում էին ինչպես անասունների հույ: Նրան, ով ընկնում էր, խողովալում էին... Նշանակված վայր հասավ տեղահանվածների մեկ քառորդից էլ պակասը»:

Տրապիզոնի հայերի աքաղաղված է գերմանական հյուպատոսի կողմից. «Ղուկիսի 26-ին Տրապիզոնում հանրային կոչը հռչակեց, որ բոլոր հայերը պետք է բողոքեն քաղաքը: Ղուկիսի 1-ին բոլոր փողոցները գրավված էին սպիներն հրացաններին ամրացրած ժանդարմներով: Մեկ նրբանցքում կազմավորում էին հայերի 100 հոգիանոց խմբեր և քաղաքից դուրս էին հանում, որտեղ նրանց հավաքում էին 2000 հոգիանոց մեծ խմբերի մեջ: Հաջորդ երեք օրերում տանում էին օրը մեկ 2000 հոգիանոց խումբ, ընդամենը 6000, այնուհետև, հաջորդ չորս օրում նորից տարան շուրջ 4000 հոգու... Նրանք թույլատրել էին իրենց հետ վերցնել միայն այն, ինչ որ կարող էին տանել իրենց մեջքին: Եթե ճանապարհին հոգևածությունից որևէ մեկը ընկնում էր կամ հետ էր մնում, նրան խոցում էին սպիներով: Տրապիզոնի մոտ ծովը թափվող գետով դեպի ծով էին լողում դիակների կույտեր և կրկին հետ լողում դեպի ավեր»: Տրապիզոնի հայերի կոտորածի պատկերը լրացվում է իսրայական հյուպատոսի վկայություններով: Նա հաղորդում էր, որ հայերին արտաքսել էին իրենց տներին, հավաքել մեկտեղ, որից հետո փողոցներով բռնել ծովի կողմը: Նրանց նստեցրել էին առագաստաբանավեր, տարել ափից մի փոքր հեռու և ծովը նետել: Այդ եղանակով ամբողջ հայ ազգաբնակչությունը՝ 8-10 հազար մարդ ոչնչացվել էր մի քանի օրվա ընթացքում նահանգապետ Ազմի բեյի անմիջական ղեկավարությամբ: Մահվան դատապարտված այս հրեշը հեղափայտում սպանվեց հայ ժողովրդական վրիժառուների ձեռքով:

1915 թ հուլիսի սկզբին Խարբերդով անցան Էրզրումից տեղահանված հայերի մի քանի խմբեր: Ավանապետը այսպես է նկարագրում նրանց. «Երկու ամիս նրանք եղել էին ճանապարհին գրեթե առանց հացի ու ջրի: Նրանց, ասես անասունների, դարձան էին տալիս... Մայրերն առաջարկում էին իրենց զավակներին բոլոր նրանց, ովքեր ուզում էին նրանց վերցնել»: Այնուհետև արտաքսվեցին Խարբերդի հայերը: Նախապես Խարբերդի հայ տղամարդկանց մի մեծ խումբ քաղաքից դուրս էր հանվել շրջակա լեռները և գլխավին ոչնչացվել: Ղուկիսի 5-ին ձերբակալվեցին ևս 800 հոգի, բռնվեցին լեռները և նույնպես սպանվեցին: Խարբերդի վիլայեթի գյուղերից մեկում հայ բնակիչներին լցրին մզկիթը և հարևան տները. երեք օր անընդհատ նրանք հաց ու ջուր չէին ստանում: Այնուհետև նրանց «տարան մերձակա կիրճը, շարեցին ժայռի մոտ և գնդակահարեցին, իսկ կենդանի մնացածներին խողովալում էին դաշտայններով ու դանակներով»: Այդ հաշվեհարդարից հետո այլևս տեղահանություն չենթակա մարդ չէր մնացել:

1915 թ. հուլիսին մի անգլիացի ականապետ տեսել էր Էրզրումցի հայերի, որոնց Միջագետքի ճանապարհին բռնում էին Երզնկայի միջով: «Ես շատ անգամ եմ գնացել նրանց կայանավորելը, - գրում էր նա: - Ահնար է պարկերացնել առավել խղճալի մի տեսարան: Նրանք բոլորը, առանց բացառության, ցնցոտիների մեջ էին, կեղտոտ, սոված ու հիվանդ: Դա զարմանալի չէ, եթե ի նկատի ունենանք, որ նրանք համարյա երկու ամիս ճանապարհին էին՝ շոր չփոխելով, հնարավորություն չունենալով լվացվելու, գրկված լինելով ապաստանից և գոնե մի փոքր ուրեղիքից:... Նրանց մեջ տղամարդիկ շատ քիչ կային, քանի որ մեծ մասն սպանվել էր ճանապարհին:... Սպանում էին կանանց ու երեխաներին նույնպես...

Տարբեր քարավաններ էին ժամանում և, մեկ կամ երկու օրվա դադարից հետո, նրանց շրապնեցնում էին, որ շարունակեն ճանապարհը, որոշակի չասելով, թե ուր էին գնալու: Մակայն նրանք, ովքեր գալիս հասնում էին այսպեղ, իրենց թափառումներն սկսած մարդկանց միայն մի փոքր մասն էին կազմում արդեն...»:

Վկայություններ են պահպանվել Կիլիկիայում թուրքերի կապարած եղեռնագործությունների մասին. հայ ազգաբնակչությունը ուղարկվել էր Հալեպ, իսկ այնտեղից էլ՝ Սիրիական անապարի խորքերը, որտեղ նշանակալի մասը ոչնչացվել էր:

Հայերի կոտորածների ու փրկահանության սրտաճմլիկ մանրամասնությունների միջով մեր աչքի առջև հառնում է հանցագործության կազմակերպման ձեռագիրը, որը միաբնակ էր երկրի գրեթե բոլոր շրջանների համար: Քաղաքների և գյուղերի հայ ազգաբնակչության մի մասը, հիմնականում փղամարդիկ, սպանվում էին դեռևս մինչև փրկահանումը. հայերին պարկանող քնեղը, խանութները և մյուս ունեցվածքը կողոպտվում էր. փրկահանված հայերը քարավաններով ուղարկվում էին Միջագետքի և Սիրիայի անապարները. ճանապարհին քարավանները քանիցս ենթարկվում էին հարձակումների, որոնց հետևանքով հայերին նորից սպանում և կողոպտում էին. փրկահանության պայմանները՝ քաղցը, փոքր, հիվանդությունները նպաստում էին հազարավոր դժբախտների մահվանը: Օտարերկրացիներից մեկի կարծիքով, որը ականատես էր եղել փրկահանությանը, աքաղաղների բուն փոխադրումը «լավագույնս հարմարեցված էր այն բանին, որպեսզի հանգեցներ հայերի նույնիսկ այդ երկրում չլուծված ոչնչացման»: Պարահանական չէր, որ աքաղաղող հայերի քարավաններն անվանվում էին մահվան երթ:

Այդ ամենը անհերքելիորեն վկայում է, որ փրկահանությունն ըստ էության հայերի ոչնչացման վարք բողոքված մի ձև էր: Հենց այդպես էլ այն ընկալվում էր ժամանակակիցների՝ և՛ հասարակ մարդկանց, և՛ պաշտոնապարհ անձանց կողմից: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն նշում էր, որ «փրկահանության բուն նպատակն էր թալանել ու ոչնչացնել. դա կոտորածի իսկապես որ նոր եղանակ էր: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին արձակում այդ աքաղաղների մասին, նրանք փաստորեն մահավճիռ էին կայացնում մի ամբողջ ազգի նկատմամբ»: Մեկ ուրիշ փաստ: Խարբերդում ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսի իր դեսպանին հասցեագրված 1915 թ. հունիսի 30-ի գեղուցագրում, մի փաստաթուղթ, որը հրապարակայնորեն հայրնի դարձավ սոսկ 1989 թվականին, ասվում էր, որ բռնի աքաղաղման էին ենթակա Հայաստանը կազմող վեց վիլայետների բոլոր հայերը առանց բացառության, և որ դա «մի ձեռնարկում է, որն իր նախադեպը չի ունեցել պարմության մեջ»:

Տեղահանության իսկական նպատակները հայրնի էին նաև գերմանական դիվանագետներին: Թուրքիայի գանազան վիլայետներից գերմանական հյուպատոսները երկրթուրքերի կազմակերպած փրկահանությունը գնահատում էին իբրև հայերին բնաջնջելու և դրանով իսկ Հայկական հարցը լուծելու եղանակ: 1915 թ. փետրվարի 2-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը հաղորդում էր իր կառավարությանը, որ իր հեղ ունեցած գրույցի ժամանակ Թալաթ փաշան ասաց, որ հասել է ժամանակը ձերբագրվելու Հայկական հարցից, քանզի «դա միակ բարենպաստ պահն է»: Իսկ նույն 1915 թ. հուլիսին նա հայրնում էր, որ եթե

ակգրնապես հայ ազգաբնակչության փարագրումը սահմանափակվում էր ռազմա-
ճակատին մերձակա նահանգներով, ապա այնուհետև թուրքական իշխանություն-
ներն այդ գործողությունները փարածեցին երկրի այն մասերի վրա, որոնք ռուսա-
կան գործերի ներխուժման վրանգի տակ չէին գտնվում: «Այդ հանգամանքը և այն
եղանակները, - եզրափակում էր դեսպանը, - որոնցով կատարվում է արտաքսումը,
վկայում են, որ թուրքական կառավարությունը նպատակ ունի ոչնչացնել հայ ազ-
գին թուրքական պետության մեջ»:

Հայ ազգաբնակչության կոտորածն ու տեղահանությունը իրագործվում էին
ծայրահեղ դաժանությամբ ու անգթությամբ, ուղեկցվում անմեղ մարդկանց խռ-
րանգումներով, բռնություններով, անարգանքներով: Հանցագործության կազմա-
կերպիչները պահանջում էին տեղական իշխանություններից նրանց տրված հրա-
հանգների անշեղ կատարում, առանց որևէ զիջողության: Ծածկագրված հեռագ-
րում, որը 1915 թ. սեպտեմբերի 9-ին ներքին գործերի նախարար Թալաթը ու-
ղարկել էր Հալեպ, ասված էր.

«Թուրքիայի հողում հայերի ապրելու ու աշխատելու իրավունքները ամբողջովին վե-
րացված են, և կառավարությունը իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը, հրա-
մայել է ջնստյել նույնիսկ օրորոցի մասնուկներին...»: Իսկ սեպտեմբերի 16-ի հեռագրում նա-
խարարը խստորեն նախազգուշացնում էր. «Նրանք, ովքեր կհակադրվեն այդ հրամանին
ու այդ որոշմանը, չեն կարող կառավարման մաս կազմել: Չբացառելով կանանց, երեխա-
ներին ու տղաներին, որքան էլ աղետալի լինեն ոչնչացման միջոցները, առանց ունկնդրե-
լու խղճի զգացումներին, պետք է վերջ տալ նրանց գոյությանը»:

Գործողությունները տեղերում խստորեն վերահսկվում էին կենտրոնից: Այդ
նույն Թալաթը պահանջում էր տեղական իշխանություններից յուրաքանչյուր շա-
բաթը մեկ գեկուցել իրեն հայերի տեղահանության որոշման կատարման ընթացքի
մասին: Հայտնի է, որ տեղական վարչություններից մի քանի պաշտոնատար ան-
ձինք՝ Անկարայի, Երզնկայի, Յոզղաթի, Հալեպի և այլ վայրերի կուսակալները,
որոնք, կառավարության կարծիքով, ոչ բավարար կերպով վճռական էին գործում,
հեռացվեցին իրենց պաշտոններից: Նրանց փոխարինեցին մարդկանցով, ովքեր
աչքի էին ընկնում դաժանությամբ, բռնության գազանային եղանակներ էին կիրա-
ռում անգլեն հայ ազգաբնակչության նկատմամբ:

Հայերի հանդեպ խղճահարության և գթասրտության դրսևորումների անթույ-
լատրելիության մասին նախազգուշացվում էին ոչ միայն տեղական իշխանություն-
ները, այլև թուրք ազգաբնակչությունը: Մշո գավառի գյուղերից մեկի մի հայ գյու-
ղացի, որը վերապրել էր իր հարազատների կոտորածը, հերագայում հիշում էր, որ
կառավարությունը ամենախիստ կերպով կանխօրոք զգուշացրել էր մահմեդական
բնակիչներին, որ «եթե որևէ մեկը համարձակվի իր տանը ապաստան տալ հայ
երեխաների, կանանց և աղջիկների, ապա հայտնաբերվելու դեպքում թաքցնողը
կհամարվի հայ և գլխով կփոխհարուցի»: Բայց և այնպես, որոշ թվով հայեր, հա-
կապես երեխաներ, փրկվեցին իրենց հարևան թուրքերի և քրդերի շնորհիվ, որոնք,
չնայած սպառնացող մահացու վրանգին, ապաստան էին տվել նրանց:

Ցեղասպանության կազմակերպիչները և գործադիրները ամեն կերպ ջանում
էին թաքցնել ժողովրդից և, հատկապես, միջազգային հասարակայնությունից

ճշմարտությունը Թուրքիայում կապարվող եղեռնագործությունների մասին: 1915 թ. նոյեմբերի 18-ին Հալեայի նահանգապետին ուղարկված հրահանգում Թալաաթը պահանջում էր հետևել այն բանին, որպեսզի չլինեն իրենց վրա ուշադրություն հրավիրող դեպքեր, կապված նրանց հետ (հայերի՝ հեղ.), ովքեր գրնվում էին քաղաքների և մյուս կենտրոնների մոտ: «Ներկա քաղաքականության րեսանկյունից կարևոր է, որ այդ տեղերը շրջող օտարները համոզվեն, թե աքսորը լույ տեղավորության նպատակով է արվում»: Այնուհետև ներքին գործերի նախարարը ուղղակի նշում էր, որ «ծանոթ միջոցները» տարագրվածների նկատմամբ հարկ է գործադրել «հարմարագույն վայրերի մեջ»: 1915 թ. դեկտեմբերի 11-ին Հալեայի նահանգապետին հղված հեռագրում Թալաաթը հայտնում էր՝ «Տեղեկացել ենք, որ մի բանի հայ թերթերի թղթակիցներ այդ կողմերը շրջելով կարգ մը եղերական դեպքեր ներկայացնող լուսանկարներ են հանել և դրանք հանձնել տեղի ամերիկյան հյուպատոսին: Այս կարգի վնասակար անձերը ձերբակալեք և ոչնչացրեք»: Մեկ ուրիշ ճեպագրով Թալաաթը պահանջում էր ճանապարհների վրա հայերի դիակներ չթողնել, բանգի օտարերկրյա սպաները տեսնում և լուսանկարում էին դրանք: Իր միջոցներն էր ձեռք առնում նաև Թուրքիայի զինվորական հրամանատարությունը: 1915 թ. սեպտեմբերին թուրքական 4-րդ բանակի հրամանատարը պահանջեց, որպեսզի «Բաղդադի երկաթուղին կառուցող ընկերության ճարտարագետների և մյուս ծառայողների կողմից արտաբուծված հայերի քարավաններից հանված լուսանկարները» հանձնվեն «48 ժամվա ընթացքում Հալեայում գրնվող Բաղդադի երկաթուղու զինվորական կոմիսարիատին: Այս հրամանը չկատարողները պատասխան կտան ռազմական արյանի առջև»:

Սակայն, չնայած դահիճների կողմից նախաձեռնված միջոցառումներին, Թուրքիայի հայ ազգաբնակչության նկատմամբ հաշվեհարդարի լուրերը ներթափանցեցին ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական մամուլի էջերը, առաջ բերելով համաշխարհային հասարակայնության վրդովմունքը: Հասկանալի է, որ կապարված հանցագործության իրական չափերը և նրա հետևանքները հայտնի դարձան ավելի ուշ՝ առաջին աշխարհամարտում Թուրքիայի կրած պարտությունից հետո:

Հայ ժողովրդի Գողգոթան չավարվեց տեղահանությամբ, հայրենիքից արտաքսմամբ, օջախի կորուստով և, վերջապես, կապաղի կոտորածով: Աքսորյալների մի փոքր մասը, որը հասել էր Միջագետքի և Միդիայի համակենտրոնացման ճամբարներ, այսօր տեղ էլ բնաջնջվեց: Ռաս ու Այնի, Դեյր էզ Զորի, Մեսքենեի, Ռաքքայի և ուրիշ համակենտրոնացման ճամբարներում, որոնց սոսկ անվանումները չարագույժ հիշեցումներով մտնել են Հայաստանի պատմության մեջ, սպեղծվել էին գոյության անտանելի պայմաններ: Տեղահանված հայերի զանգվածները պահվում էին բաց երկնքի տակ, նրանց զրկում էին ուրվիքից, քաղցն ու հիվանդությունները հեծում էին մարդկանց, հատկապես երեխաներին: Շատ ականապրեսների վկայությամբ, որոշ ճամբարներում տասնյակ հազարավոր տեղահանվածներից մինչև 1916 թ. սկիզբը արդեն ողջ էին մնացել մի բանի հարավոր տեղահանվածներից մինչև 1916 թ. ձեռնարկվեց Դեյր էզ Զորում և Եփրատի երկայնքով ընկած ճամբարներում մնացած 200 հազար հայերի ոչնչացման հրեշավոր գործողությունը: Անուանը նրանց սկսեցին հանել ճամբարներից, բռնել անապատի խորքերը և այնտեղ ոչնչացնել: Մինչև 1916 թ. վերջը Եփրատի երկայնքի ճամբարները դադարեցին

գոյություն ունենալուց, իսկ փրկվածների թիվը 20 հազարից ավելի չէր:

Երիտթուրքերի իրագործած ցեղասպանության հեղուկանքով հայ ժողովուրդը անդառնալի կորուստներ կրեց: Թեև անհնարին է վերականգնել զոհվածների ճշգրիտ թվաքանակը, սակայն զանազան տվյալների համադրումը՝ Թուրքիայի Հայոց պարիսպության տվյալները հայ հոտի բնակի մասին մինչև առաջին աշխարհամարտը, հաշվարկումներն ըստ առանձին վիլայեթների, կատարված իրադարձությունների ժամանակակիցների կողմից, հեղափոխությունների օգտագործած վիճակագրական հաշվումները, թույլ են տալիս պնդելու, որ զոհվածների թիվը կազմում է 1,3 մլն. մարդ: Շուրջ 800 հազար հայեր դարձան փախստականներ, ցրվեցին աշխարհի շատ երկրներում՝ լրացնելով արդեն գոյություն ունեցող հայկական գաղութները կամ կազմելով նորերը: Անհնարին է հաշվել այն հայերի, մասնավորապես երեխաների, թիվը, որոնք, արմատախիլ արվելով իրենց ընտանիքներից, թուրքացվեցին, մահմեդականացվեցին և, այդպիսով, մեկընդմիջ տարվեցին հայ ազգության համար:

Համեմատական հեշտությունը, որով թուրք ջարդարարները իրագործեցին Օսմանյան կայսրության հայերի ցեղասպանությունը, բացատրվում է մի շարք պարագաներով: Փաստերը ցույց են տալիս, որ Թուրքիայի հայ ազգաբնակչությունը, ինչպես և հայկական բաղաբանական կուսակցությունները, ամբողջությամբ վերցրած անպարտասու դուրս եկան բնաջնջման սպառնալիքի հանդիման, անգամ 1909 թ. դեպքերից հետո: Թուրքիայի կառավարող շրջաններին հաջողվեց ըստ էության մեկուսացնել հայ ազգաբնակչությանը, սեպ խրել հայերի և բրդերի միջև, օգտագործել վերջիններիս իրենց ծրագրերի կենսագործման համար: Իր դերը խաղացնակ տասնամյակներ շարունակ Թուրքիայում քաղաքավոր օսմանիզմը, ազգայնամոլական մոլուցքը գտնարված մոսուլմանական մոլեռանդությանը համակցեց թուրք ազգաբնակչության նշանակալի մասին, որի որոշակի խավեր դարձան ջարդարարական գործողությունների անմիջական կատարողները: Հայերի դեմ գործի դրվեց պետական մեքենան՝ ժանդարմերիան, կանոնավոր զորքերը, տարբեր մակարդակի իշխանությունները: Ջարդարարները լիովին օգտագործեցին պարբերազմի գործուն, պարբերազմական իրադրությունը հնարավորություն ընձեռեց ցեղասպանության կազմակերպչներին գաղտնապես նախապատրաստվել մտահոգացված ծրագրի իրագործմանը, չերկուղելով եվրոպական տերությունների փոքրիշատե իրական միջամտությունից: Թուրքական բանակ գորակոչելով բնակչության առավել մարտունակ մասը՝ տղամարդկանց, ոչնչացնելով նրանց և նրանց հետևից՝ Կոստանդնուպոլսի հայ մտավորականությանը, ջարդարարները դուրսագրին իրենց խնդրի կատարումը: Որոշակի դեր խաղաց նաև այն սլաքազան, որ արևմտահայերի որոշ հասարակական և կղերական շրջաններում այն կարծիքն էր տիրապետում, որ տեղահանման մասին հրաման արձակած թուրքական իշխանություններին չենթարկվելու որպես հերոսանք կարող է ունենալ զոհերի թվի մեծացումը:

Հայերի ցեղասպանությունը մտահոգացվեց և իրականացվեց իշխանության դեպի մոտ կանգնած երիտթուրքերի կուսակցության առաջնորդների անմիջական դեկլարությամբ: Վեց նրանք են նողկալի հանցագործության XX դարի առաջին ցեղասպանության, գլխավոր մեղավորները: Որոշակի պատասխանատվություն

է կրում նաև կայգերական Գերմանիան՝ Թուրքիայի դաշնակիցը: Գերմանիայի կառավարական և զինվորական շրջանները ոչ միայն իրագեկ էին նախապարտաւորվող հանցագործությանը, այլև նպաստեցին նրա իրականացմանը: Վկայութուններ կան այն մասին, որ մերձազմաճակատային գոյութեան հայերի փնտրանքային գաղափարը թերադրված էր թուրքերին Գերմանիայի գլխավոր սպայա-կոյրի սպաների կողմից: Համենայն դեպս հայտնի է, որ պարերազմի նախորդին Բուխարեստի գերմանական դեսպանատանը կայացել էր Գերմանիայի ու Թուրքիայի զինվորական զերարեստությունների ներկայացուցիչների հանդիպում, որ-ւրեղ քննարկվել է Թուրքիայի վեց վիլայետների հայ ազգաբնակչության փնտրա-նանման հարցը:

Արդեն 1915 թ. օգոստոսի վերջերին Թալաթը հայտարարեց, որ հայկական հարց այլևս գոյություն չունի, որ կառավարությունը կարողացավ «լուծել» այդ հարցը երեք ամսում, ինչը չկարողացավ անել սուլթան Աբդուլ Համիդը ամբողջ երեսուն տարում: Հայ ժողովրդի մյուս դահիճը՝ Էնվերը, գրում էր, որ անհրաժեշտ է ավարտել այդքան հաջող սկսված գործը, սփռելով կենդանի մնացած հայերին կայս-րության փաթեթ մատերում և լիովին ձուլելով նրանց:

1915-1916 թթ. դարձան Օսմանյան կայսրության հայերի ցեղասպանության բարձրակերը: Բայց և հետագա տարիներին էլ հայերի կոտորածները շարունակ-վեցին, ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկիզբը: Այդ ընթացքին հավա-րարիմ էին ինչպես երիտթուրքերը, այնպես էլ նրանց փոխարինած քննալա-կանները:

Հայերի կոտորածները Արևելյան Հայաստանում, Կիլիկիայում և Արևմտյան Անատոլիայում

Կարերազմից և ռուսական զորքերի հեռացումը Արևմտյան Հայաստանից, որը նրանք գրավել էին պարերազմի ընթացքում, ոչ միայն փոքր ինչ թեթևացրեց Գեր-մանիայի դրությունը, այլև թույլ տվեց թուրքերին հարձակում ծավալել Կովկաս-յան ռազմաճակատում, որն ըստ էության պահվում էր առևի հայկական ազգային զորամասերի կողմից: Այդ հարձակման (1918 թ. փետրվար-մայիս) հետևանքով հաջողվեց ոչ միայն վերադարձնել Արևմտյան Հայաստանի կորցրած մարզերը, այլև ներխուժել Անդրկովկաս, սրբելով Արևելյան Հայաստանի և Երևանի հրավ-ման սպառնալիք, որը կանխվեց Սարդարապատի և Բաշ Ապարանի ճակատա-մարտերում թուրքերի նկատմամբ հայկական զորքերի տարած հաղթանակի շնոր-հիվ:

Թուրքերի ներխուժումը սովորական պարերազմի բնույթ չէր կրում. այն ուղեկցվում էր զավթված շրջանների հայ ազգաբնակչության անխնա կոտորածով: Մասնավորապես հա-յերի քաջարի դիմադրությունից հետո ներխուժելով Ղարաբախի և շրջակա գյուղերը, թուր-քերն անխնա սրի քաշեցին մի քանի հազար հոգու:

Ավելի ուշ, 1918 թ. սեպտեմբերին, թուրքական զորքերը մտան Բաքու և ադրբեջանա-կան ազգայնականների հետ մեկտեղ կազմակերպեցին քաղաքի հայ ազգաբնակչության

կոտորած, որին զոհ գնաց 30 հազարից ոչ պակաս մարդ: Այդ նույն ամսի վերջերին թուրքերը ներխուժեցին Ղարաբաղ, ավերեցին փասնյակ հայկական գյուղեր և ոչնչացրին բնակչությանը:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարությունից հետո երկրում իշխանության գլուխ անցան քեմալականները, որոնք օգտվում էին հոդհերդային Ռուսաստանի և երաբոլշիկյան առաջնորդների աջակցությունից: Շատ շուտով պարզ դարձավ, որ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ քեմալականները մրադիր են շարունակել իրենց նախորդների՝ երիտթուրքերի քաղաքականությունը: 1920 թ. մարտին թուրքական զորքերը ադրբեջանական մուսավաթականների հետ միասին սոսկալի ավերածության ենթարկեցին Շուշին, սպանելով ավելի քան 30 հազար հայ և հրկիզելով քաղաքի հայկական մասը: Նույն թվականի սեպտեմբերին քեմալական Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ. թուրքական զորքերը գրավեցին Կարսը, Ալեքսանդրապոլը, ավերեցին Ալեքսանդրապոլի գավառի փասնյակ գյուղեր, կոտորեցին ^{հի} քանի փասնյակ հազար խաղաղ բնակիչների, հասցրին նյութական մեծ վնասներ:

1920-1921 թթ. արյունալի իրադարձություններ փեղի ունեցան Կիլիկիայում, ուր պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո վերադարձել էին ջարդը և փեղահանությունը վերապրած հայերը: Առ 1920 թ. Կիլիկիայի հայ ազգաբնակչության թվաքանակը հասավ 160 հազարի: Համաձայն դաշնակիցների միջև եղած պայմանավորվածության, Կիլիկիան ներառված էր Ֆրանսիայի ազդեցության ոլորտը, այսպեղ մրցվեցին ֆրանսիական զորքեր: Սակայն ֆրանսիական հրամանատարությունը միջոցներ ձեռք չառավ ապահովելու ազգաբնակչության անվտանգությունը, որից չհապաղեցին օգտվել քեմալականները: Չնայած հայերի դիմադրությանը, քեմալականներին հաջողվեց հաշվեհարդար փեսնել Մարաշի, Ադանայի, ինչպես նաև Ջեթունի և փասնյակ գյուղերի հայ ազգաբնակչության հետ: Հայերի մի մասը կոտորվեց, մյուս մասը զոհվեց մարտերում դիմադրություն ցույց փալիս, իսկ ողջ մնացածները անցան Սիրիա: Դրանով իսկ քեմալականներն ավարտեցին երիտթուրքերի սկսած Կիլիկիայի հայ ազգաբնակչության ոչնչացումը:

Հայերի ցեղասպանության փարեգրության մեջ վերջին էջը դարձավ հայերի կոտորածը Թուրքիայի արևմտյան շրջաններում: 1922 թ. սեպտեմբերին հասնելով բեկման հունաթուրքական պատերազմում, քեմալական զորքերը ներխուժեցին Իզմիր (Ջմյուռնիա), որտեղ դաժան հաշվեհարդար փեսան քրիստոնյա ազգաբնակչության՝ հույների, և հայերի հետ: Այդ կոտորածի ակնադրեսը եղավ երիտասարդ Է.Համինգուեյը, կանադական թերթերից մեկի ճակարային թղթակիցը, որը փեսածը նկարագրել է իր հոդվածներում:

Ջմյուռնիայի ողբերգությունը ավարտեց Թուրքիայի հայ ազգաբնակչության ցեղասպանության շրջանը, որը սկիզբ առավ XIX դարի վերջին:

6. ԹՈՒՐԿ ԶԱՐԴԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ ԱՆՀԱՎԱՍԱՐ ՊԱՅԶԱՐՈՒՄ

Թուրքիայի հայերի ցեղասպանության մեխանիզմը մանրակրկիտ կերպով մշակված էր պետության կողմից, հուսալիորեն ապահովված ռաբիկանության և կանոնավոր զորքերի օգտագործման, խաղաղույն վերահսկողությամբ կենտրոնական և փեղական իշխանությունների կողմից: Եթե նկարի ունենանք, որ թուրքական պետական մեքենային դիմադարձում էր անկազմակերպ հայ ազգաբնակչությունը, առանց այն էլ թուլացած՝ փղամարդկանց նշանակալի մասի կորստով, ապա ակնհայտ կդառնա ուժերի այն անհավասարությունը, որը և կանխորոշեց դիմադրության ելը՝ հայերը դադարապարված էին: Բայց և այնպես մի շարք վայրե-

բում հայ ազգաբնակչությունը չենթարկվեց Կրեդանանության մասին թուրքական կառավարության արձակած օրենքին ու կարգադրություններին, գերադասելով ընկնել մարտում, բայց չդառնալ դահիճների անմոռնչ զոհը: Քաջարի դիմադրություն ցույց տվեցին ջարդարարներին Վան-Վասպուրականի, Շապին Կարահիսարի, Ուրֆայի և Մուսա լեռան հայերը:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը

Զգարելով իրագործել Վասպուրականի հայ ազգաբնակչության կոտորածը, որպեղ ապրում էր ոչ պակաս քան 200 հազար հայ, թուրքական իշխանությունները որոշեցին ամենից առաջ հայերից մաքրել վիլայեթի կենտրոն Վանը: Դեռևս 1915 թ. մարտին Վասպուրականի կուսակալը պահանջեց, որպեսզի 18-ից մինչև 50 տարեկան բոլոր հայ տղամարդիկ մտնեն բանվորական գումարպիսներ: Հայերը, նախապեսելով իրենց սպասվելիք ճակատագիրը, հրաժարվեցին ենթարկվել այդ պահանջին: Այնժամ թուրքերը ձեռնամուխ եղան Վասպուրականի գյուղերի հայ բնակչության կոտորածին: Կոտորածից փրկված հայերը ապաստանեցին Վանի հայկական թաղամասում՝ Այգեստանում և քաղաքի այլ մասերից եկած վանեցի հայերի հետ ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության: 1915 թ. ապրիլի սկզբին Վանը բոլոր կողմերից շրջապարվեց թուրքական զորքերով: Վանի ինքնապաշտպանությունը ղեկավարելու համար ստեղծվեց «Վանի հայկական ինքնապաշտպանության զինվորական մարմին», որի կազմի մեջ մտան Արմենակ Եկարյանը, Փանոս Թերլեմեզյանը, Արսամ Մանուկյանը և ուրիշներ: Վանը և նրա շրջակայքը բաժանվեցին պաշտպանության հատվածների, փոթով կառուցվեցին ամրություններ, փորվեցին խրամատներ և դիրքեր: Ինքնապաշտպանությանը մասնակցում էր Վանի ողջ հայությունը, այդ թվում ծերունիները, կանայք, անչափահասները: Հազմավորվեցին հատուկ խմբեր, որոնք զբաղվում էին զինամթերքի և պարենի մատակարարմամբ, վիրավորներին օգնության հասնելով, զենքերի վերանորոգմամբ:

Ապրիլի 7(20)-ին թուրքերը ձեռնարկեցին Վանի առաջին գրոհը, սակայն, չնայած թվական բազմակի գերազանցությանը և հրետանու օգտագործմանը, նրանք չկարողացան ընկնել հայերի դիմադրությունը: Ապրիլի 15(28)-ին գրոհը կրկնվեց: Հայերը դիմադրավեցին այդ հարձակումը ևս, վերստին դրսևորելով ինքնագոհություն, խիզախություն և իրենց կյանքն ու պարիսիվ պաշտպանելու վճռականություն: Թուրքերը զգալի կորուստներ կրեցին: Վանի հերոսական ինքնապաշտպանությունը շարունակվեց մինչև 1915 թ. մայիսի 4(17)-ը՝ գրեթե մեկ ամիս: Ռուսական զորքերի քաղաքին մոտենալուն պես թուրքերը վերացրին պաշարումը, վերջին անգամ Վանը ենթարկեցին հրետանային ոմբակոծության և նահանջեցին: Մայիսի 5(18)-ին քաղաք մտան հայ կամավորական ջոկատները Վարդանի գլխավորությամբ, ռուսական զորքերը գեներալ Նիկոլսկի հրամանատարությամբ: Ծնորիվ հաջող ինքնապաշտպանության, Վասպուրականի բնակչության նշանակալի մասը փրկվեց կոտորածից և հերազայում անցավ Կովկաս:

Շապախի ինքնապաշտպանությունը

մայիսին: Շապախը գրավելու թուրքերի քանիցս փորձերը ձախողվեցին՝ բախվելով զավառի հայ պաշտպանների աներեր դիմադրությանը: Մայիսի սկզբներին ռուսական զորքերը մոտեցան Շապախին, թուրքերը ստիպված եղան վերացնել պաշարումը և հեռանալ: Վան-Վասպուրականի 1915 թ. իրադարձությունները դարձան հայ ժողովրդի ազատագրական պայքարի հերոսական մի էջը:

Վան-Վասպուրականի հիշարժան իրադարձությունների բաղկացուցիչ մասն էր Շապախի հաջող ինքնապաշտպանությունը, որը տևեց 42 օր՝ 1915 թ. ապրիլ-

Շապին Կարահիսարի պաշտպանների հերոսականությունը և ինքնագոհությունը

դի գրոհներ, հպարտորեն մերժեցին հանձնվելու թուրքերի առաջարկը իրենց կյանքը խնայելու պայմանով: Անընդմեջ մարտերում նոսրանում էին Շապին Կարահիսարի պաշտպանների շարքերը, զգացվում էր զինամթերքի, պարենի և ջրի պակաս: Երբ պարզ դարձավ, որ հեղազա դիմադրությունն անհնարին է, ամրոցի պաշտպանները նեպվեցին վերջին գուրեմարտի, ճեղքեցին թշնամու գորաշղթան և, կրելով մեծ կորուստներ, հեռացան լեռները: Շապին Կարահիսար ներխուժած թուրքերը վայրագ հաշվեհարդար փետան քաղաքում մնացած բնակչության հեղա:

Ուրֆայի հերոսամարտը

Քաղաքի, օրհասական դիմադրություն ցույց տվեցին թուրքերին եինավուրց Եղեսիայի՝ Ուրֆայի հայերը, որոնց թիվը քաղաքում պարերագմի նախօրյակին հասնում էր 35 հազարի: Նրանցից մոտ 1500 երիտասարդներ զորակոչվեցին բանակ և շուրով բուրիին փմարդի ոչնչացրին: Մնացածների բռնի փեղախանությունը հանձնարարով էր Իթթիհատի կենտրոնական կոմիտեի պատասխանատուներ Ահմեդ և Հալի բեյերին, որոնց՝ հրահանգով ձերբակալվեցին քաղաքի հայ երևելիները, իսկ բնակչությունից պահանջվեց անմիջապես հանձնել զենքերը: Իշխանությունների հրահրանքով քաղաքային խառնամբուլը օգոստոսի 19-ին դիմեց սպանությունների ու ջարդի: Զգալով սպառնացող հաշվեհարդարը, հայերը դիմեցին ինքնապաշտպանության, սրեղծեցին զինվորական խորհուրդ (Մկրտիչ Յոթնեղբայրյան, Հարություն Ռասպեղեկյան, Խորեն Կյուլեկյան և ուրիշներ): Մեպրեմբերի 29-ին ոստիկանական ջուկատը հարձակման անհաջող փորձ արեց հայկական թաղամասի վրա, որին հեղունեց թուրքական կանոնավոր զորքերի (շուրջ 12 հազ., թնդանոթներով) մուտքը քաղաք: Ուժերն այլևս խիստ անհավասար դարձան և չօգնեց ուրֆացի հայորդիների անձնուրաց, մահը արհամարհող դիմադրությունը՝ Յոթնեղբայրյանի գլխավորությամբ: Ոկտեմբերի 23-ին խուժելով հայկական թաղամասը, թուրքական զորքերը սպանեցին անգն բնակիչներին՝ կին, ծեր, երեխա զնառելով: Հերոս մարտիկները ընկան կոկում, իսկ մի քանիսը, այդ թվում Մ. Յոթնեղբայրյանը, չցանկանալով հանձնվել ոստիսին, անձնասպան եղան: Գերի ընկածները՝ 120 հոգի, կախվեցին: 15 հազ. մարդ թշվեց Դեր Զոր և այլուր: Նրանց մեծ մասը ընկավ աքաղի ճամփաներին:

Ուրֆայի հայերի ինքնապաշտպանությունը, որը նկատեց նորվեգացի մեծ գիտնական ու մարդասեր Ֆրիդրիֆ Նանսենը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի փառավոր էջերից մեկն է:

Ողբերգական վախճան ունեցավ նաև Մասունի, Մուշի, Ֆրնպրեչադի 1915 թ. ինքնապաշտպանությունը: Թեև այդ վայրերի պաշտպաններն էլ թուրքերին ցույց տվեցին աներեր դիմադրություն, դրսևորեցին հերոսություն և ինքնագոհություն, սակայն հակառակորդի թվական և զինական գերակշռությունը վճռորոշ գործոն դարձան: Պաշտպանների մեծամասնությունը ընկավ մարտերում, իսկ բնակչությունը դարձավ ջարդարարների գոհը:

Մուսա լեռան քառասուն օրը

Հայերի դիմադրության փառապանծ էջերից մեկն է Մուսա լեռան պաշտպանների հերոսական, լայն հոչակ սրագած դյուցազներգությունն էր:

Այդ անվան փակ պարմության մեջ մտած իրադարձությունները փեղի ունեցան 1915 թ.

ամուսնը Սուեդիայում՝ Հալեայի վիլայեթի Անթիոքի գավառակի հայերով բնակեցված մասում: Այսպեղ, Միջերկրական ծովի ափին կային յոթ հայկական գյուղեր, րեղակայված Մուսա դաղի (Մուսա լեռան) շուրջը: Երբ հուլիս ամսին թուրքական իշխանությունները երաման արձակեցին հայ բնակչության րեղահանության մասին, հայկական վեց գյուղերի բնակիչները չենթարկվեցին այդ հրամանին, բարձրացան Մուսա լեռ՝ պաշարպանվելու ջարդարարներին: Լեռ բարձրացավ մոտ 5 հազար մարդ, որոնցից սոսկ 600-ն էին կ:վողներ, իսկ մնացածները կանայք էին, երեխաներ ու ծերուհիներ: Մուսալեռցիների գոյամարտը դեկավարում էին Տիգրան Անդրեասյանը, Եսայի Յաղությանը և ուրիշ հայրենասերները: Լեռը վերածվեց ամրացված ճամբարի: Օգոստոսի 7-ին թուրքերը ձեռնարկեցին անհնազանդ հայերին ընկճելու առաջին փորձը, բայց նրանց գրոհը հետ մղվեց: Մի քանի օր անց թուրքական զորքերը, որոնք այժմ րասնապարիկ անգամ գերազանցում էին հայ մարտիկների թվաքանակին, գործողության մեջ դնելով հրեպանին, կրկին հարձակվեցին Մուսա լեռան պաշարպանների վրա, բայց հետ շարվեցին՝ կրելով զգալի կորուստներ: Անհաջողությունից չարացած թուրքերը նոր ուժեր բերեցին և օգոստոսի 15-ին եինգ հազարանոց բանակը, չորս հազար բաշիբոզուկների ուղեկցությամբ ձեռնարկեց նոր գրոհ: Կալաթի մարտերում, որոնք րնեցին երկու օր, թուրքերը րեղ-րեղ նեղեցին հայերին, բայց նրանց դիմադրությունը ընկճել չհաջողվեց: Դրանից հետո թուրքական հրամանաարությունը երաժարվեց լեռը գրոհելուց, զորքերով պաշարեց լեռը, կրեց բոլոր ճանապարհները՝ փորձելով սովահարությամբ ծնկի բերել ապարամբներին: Մուսա լեռան պաշարպանների դրությունը եիրավի կրրուկ կերպով վարթարացավ. իրենց զգացնել էին րալիս կենդանի ուժի կորուստները, զինամթերքի, պարենի պակասը: Հայերը կարող էին հույս դնել միայն դաշնակիցների Միջերկրական ծովում դեգերող նավերի օգնության վրա: Ուշադրություն գրավելու համար լեռան գագաթին դրոշակներ բարձրացվեցին, գիշերները խարույկներ էին վառում: Պաշարպանների միջից առանձնացվեցին լավ լողողներ, որոնք նավերի հայրավելու դեպքում պեք է այնրեղ նամակ հասցնեին օգնության խնդրանքով: Սեպտեմբերի 5-ին Մուեդիայի ափերի մոտ երևաց ծովակալ Դարիթ դու Ֆուռնեի հրամանաարություն րակ գրնվող ֆրանսիական «Գիշեն» հաժանավը, որի նավապետին՝ Բրիստանի հասցվեց նամակը: Վերջինս, կարդալով այն, «իր եիացմունքն է հայրում հանդեպ ըմբսար մուսալեռցիները և ընդհանրապես հայ ժողովուրդը»: Դեպքի մասին անհապաղ րեղեկացնելով իր բարձր հրամանաարությանը, կապիրան Բրիստը իր անձնական պարասխանաարվությամբ հաժանավը խարսխել է րալիս ափին մոտ և հրամայում ռբակոծել թուրքական դիրքերը՝ մինչ կնոտենային ֆրանսիական մուս մարարանավերը: Այդ ընթացքում թուրքերը վերջնագիր են ներկայացնում՝ պահանջելով անվերապահ հանձնվել իրենց գթությանը: Մուսալեռցիները շարունակում են դիմադրել և սեպտեմբերի 9-ի վերջին ճակարամարում նույնիսկ հետ շարում ու րեղ-րեղ հեպարնում թշնամուն: Տեսնելով հայ մարտիկների կորովը, ֆրանսիական վեհանձն ծովակալ դու Ֆուռնեն, չապստելով անցյալական և իր իսկ կառավարության պարասխանին, հրամայում է ժողովողին րեղափոխել նավերը: Սեպտեմբերի 12-ին եինգ ռազմանավ մոտենում է ծովափին և նավ բարձրացնում Մուսա լեռան քաջարի պաշարպաններին՝ ընրանիքներով հանդերձ, ընդամենը 4058 մարդ, որոնք րեղափոխվում են Դորոտ Սաիդ:

1920-1921 թթ. թուրք ջարդարարներին քաջարի դիմադրություն ցույց րվեց Կիլիկիայում Հաճընի, Այնթալի և Ուրֆայի հայ ազգաբնակչությունը: Մակայն այսպեղ էլ ինքնապաշարպանությունը հաջողությամբ չախակվեց. թուրքական գերակշիռ ուժերին հաջողվեց ներխուժել Հաճըն, կոտորել նրա բնակչությանը, իսկ Այնթալի և Ուրֆայի հայերը սրիաված եղան լքել իրենց օջախները և րարագրվել:

...Անցան րասնամյակներ: Վանի, Մուսա լեռան, Ուրֆայի, Հաճընի, Այնթա-

պի և մյուս վայրերի հերոսական պաշտպանների սերունդները, որոնք հասարակական կյանքում, հուշարձաններ կանգնեցրին ի պատիվ իրենց նախնիների, ամեն տարի հավաքվում են այդ հուշարձանների մոտ՝ հարգանքի փոքր մատուցելով անհավասար կռիվների մասնակիցներին, ընկած մարտիկներին: Ժողովուրդը հիշում է իր խիզախ զավակներին:

7. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Թուրքիայի հայերի ցեղասպանությունը իր հիմնական մասով կենսագործվեց առաջին աշխարհամարտի տարիներին: Երիտթուրքների պարագլուխները չէին թաքցնում, որ պատերազմի գործունե մի պարագա էր, որը պետք է նպաստեր հայ ազգաբնակչության բնաջնջման ծրագրի իրագործմանը, բանգի բացառվում էր մեծ տրեւոթյունների փոքրիշարտ իրական միջամտությունը, իսկ եվրոպական մամուլի հնարավոր ելույթները հազիվ թէ լուրջ հեղուկներ ունենային: Բայց և այնպես, ինչպես ասվեց վերը, Թուրքիայի կառավարող շրջանները միջոցներ ձեռք առան, որոնք ուղղված էին կարարված հանցագործությունը թաքցնելուն: Այդ բանը նրանց չհաջողվեց, և աշխարհն իմացավ հայ ժողովրդի ողբերգության մասին:

Ինչպիսին էր մեծ տրեւոթյունների դիրքորոշումը Թուրքիայի հայերի ցեղասպանության նկատմամբ:

ԴաշնակաՆ Գերմանիան, Թուրքիայի դաշնակիցը, ինչպես արդեն նշվեց, իրագրե էր թուրքական կառավարող շրջանների ծրագրերին դեռևս մինչև պատերազմը . կրում է պատասխանատվության իր բաժինը հայերի ցեղասպանության համար: Այստեղ ավելացնենք, որ Գերմանիան հավատարիմ մնաց իր դաշնակցային պարտավորություններին աշխարհամարտում Բաղյակ միության պարտությունից հետո ևս. հենց գերմանական սուզանավով Թուրքիայից դուրս հանվեցին երիտթուրքների պարագլուխները, իսկ նրանցից մասնը՝ Թալաթը, Բեհալարդին Շաքիրը և Նազըմը, որոնք Ստամբուլի զինվորական արյանի 1919 թ. հուլիսի 5-ի դատավճռով հետևյալ կարգով դատապարտվել էին մահվան, ապաստան ստացան հենց Գերմանիայում:

Մինչև 1917 թ. չեղած Ամերիկայի Միացյալ Նահանգները, հակառակ հասարակայնության և մի շարք պաշտոնապար անձանց բողոքներին, գործնական միջոցներ ձեռք չառան սանձահարելու երիտթուրքական ջարդարարներին, թեև իրենց դեսպան Մորգենթաուն փորձեց կանխել հայերի բռնագաղթը՝ բազմիցս համոզվելով Էնվերին ու Թալաթին:

Ինչ վերաբերում է Թուրքիայի դեմ պատերազմող Անտանտի երկրներին, ապա Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան, այդ պետություններից առաջինի նախաձեռնությամբ, 1915 թ. մայիսի 11(24)-ին հանդես եկան համարել հայրաբնակությամբ, որտեղ ասված էր. «...ի նկատի առնելով Թուրքիայի այս նոր հանցագործությունները ընդդեմ մարդկության և քաղաքակրթության, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակցային կառավարությունները հրապարակավ ի-

մաց են փախի Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անձնական պատասխանատվության կկանգնեն Օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն լիազորներին, ովքեր ներգրավված կլինեն նման ջարդերում»։ Մակայն Թուրքիայի պարտությունից հեփտ, երբ անգամ թուրքական մամուլը լի էր երիտթուրքերի ղեկավարներին պատժելու պահանջներով, որոնք Թուրքիան ներքաշել էին պարերազմի մեջ և կազմակերպել հայերի զանգվածային բնաջնջումը, Անտանտի պերտություններից և ոչ մեկը կարող միջոցներ ձեռք չառավ՝ բացահայտելու և պատժելու գլխավոր հանցագործներին։ Անգլիան թեև նպաստել էր 1919-ի դատավարության կազմակերպմանը, նույն փարվա մայիսին սափարեց դարի փրված և կալանքի փակ վերցված ավելի քան 70 մեղադրյալների ազատագրմանը, նրանց փեղափոխելով Մալթա կղզի։ Ֆրանսիան, ինչպես ցույց փրվեց վերը, չխոչընդոտեց հայերի հետ հաշվեհարդարին Կիլիկիայում 1920-1921 թթ., թեև այդ ժամանակ Կիլիկիայում ֆրանսիական զորքեր էին գրավում։

Առավել ևս սերտ շփումներ, որոնք վերաճեցին Լենին-Բեմալ գործակցության, հաստատվեցին քեմալական Թուրքիայի և բուշուկյան Ռուսաստանի միջև։ Դիտարկելով Էնվերին, իսկ այնուհետև Մ.Բեմալին իբրև Հոկտեմբերի գաղափարները Արևելքի ճնշված զանգվածների մեջ փարածողների, Խորհրդային Ռուսաստանը նշանակալի օգնություն ցույց փրվեց քեմալականներին՝ փրամադրելով ոսկի և զենք, որոնք նրանք օգտագործեցին Հունաստանի, իսկ մասամբ՝ նաև Հայաստանի Հանրապետության դեմ պարերազմում։ 1921 թ. մարտի 16-ին կնքելով Թուրքիայի հետ պայմանագիր Բարեկամության և եղբայրության մասին, Խորհրդային Ռուսաստանը նպաստեց 1920 թ. Սևրի պայմանագրի վերացմանը, որը շահավետ էր Հայաստանի համար։ Հայ ժողովրդի թիկունքում և հակառակ նրա կենսական շահերի, Խորհրդային ղեկավարները համաձայնվեցին Թուրքիային հանձնել Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, ինչպես նաև Հայաստանից անջարել և իբրև ինքնավար փարածք Խորհրդային Ադրբեջանի պետական ինքնիշխանության փակ դնել Նախիջևանը։ Ոչ միայն Խորհրդային իշխանության գոյության արշալույսին, այլև հեփագա փաստանյակներին ջանում էին չհիշել հայերի ցեղասպանությունը։

Այսպիսով, մեծ փերտությունների քաղաքական շահերը և կոնյունկտուրային նկատառումները ավելի կարևոր դուրս եկան, քան արդարության վերականգնումը հայ ժողովրդի նկատմամբ։

8. ԾԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ վայրերի հայության ցեղասպանությունը անանց ներգործություն ունեցավ հայոց ազգի հեփագա ամբողջ պատմության վրա, նրա կենսագործունեության քաղաքական, հասարակական և հոգևոր ոլորտների վրա։

Պատմական հայրենիքի մեծ մասի կորուստը: Հայկական մշակույթի հուշարձանների ոչնչացումը

Էր հայ ժողովրդի գերակշռող մեծամասնության առօրյա կյանքը, գրկվեց այդ հողի բնիկ փրերից: Դրան զուգընթաց, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո ոչնչացվեցին հայ մշակույթի հուշարձանները՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր, այսինքն իրագործվեց ազգային-մշակութային ցեղասպանություն: Փաստերը վկայում են, որ, մտահոգանալով հայ ազգաբնակչության բնաջնջումը, երիտթուրքական կառավարողները նպատակ էին դրել նաև ոչնչացնել Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող հայկական բազմաթիվ պատմական հուշարձանները, ճարտարապետական կոթողները, որոնք նյութական վկայությունն էին այսօրվա վաղնջական ժամանակներից գոյություն ունեցած հայկական քաղաքակրթության: Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով, առաջին աշխարհամարտի նախօրյակին հայկական եկեղեցիների և վանքերի ընդհանուր թիվը Արևմտյան Հայաստանում հասնում էր 2200-ի: Հետագայում տեղի ունեցած ջարդերի ժամանակ կողոպտվել և ավերվել էին դրանցից ոչ պակաս քան 2150-ը: Ավերված և երկիզված հայկական եկեղեցիների և վանքերի թվում քիչ չէին վաղբրիաբունեական ճարտարապետության հայտնի հուշարձանները՝ ս.Մարտիրոս Նախավկայի, ս.Անանիայի եկեղեցիները (VII դար) և այլն, որոնց նշանակությունը դուրս է գալիս հայ ճարտարապետության պատմության շրջանակներից: 1915 թ. թուրքական ջարդարարները թալանեցին և մասամբ ավերեցին ս.Կարապետի վանքը Մուշում. հետագայում հայ ճարտարապետության այդ նշանավոր հուշարձանը ամբողջովին ավերվեց: 1915-1916 թթ. ջարդերից հետո պահպանված փոքրաթիվ հուշարձանները, այդ թվում միջնադարյան Հայաստանի Անի մայրաքաղաքի կառույցները լքված են, հաճախ օգտագործվում են տնտեսական նպատակներով, փրկական բնակչությունը տանում է նրանց քարերը և օգտագործում շինարարության համար: Դրա հետևանքով այդ ճարտարապետական հուշարձանները ենթակա են քայքայման:

Զգրելով ապացուցել, որ Արևմտյան Հայաստանը հայ ժողովրդի պատմական հայրենիքը չէ, ժամանակակից թուրք պատմագիտությունը փորձում է յուրացնել հայերի հոգևոր և մշակութային նվաճումները, կասկածի տակ է առնում Արևմտյան Հայաստանի ճարտարապետական հուշարձանների հայկական ծագումը:

Ցեղասպանության տարիներին ոչնչացվեցին մեծ քանակությամբ հայկական ձեռագրեր և հնագույն տպագիր գրքեր, որոնք պահվում էին բազմաթիվ վանքերում և եկեղեցիներում: Թեև այժմ անհնարին է սահմանել թուրքերի կողմից ոչնչացված հայկական հոգևոր մշակույթի այդ հուշարձանների ճիշտ թվաքանակը, սակայն նախորդ ժամանակաշրջանին վերաբերող տվյալները թույլ են տալիս հաստատելու, որ Թուրքիայի տարածքում ոչնչացվել է ավելի քան 20 հազար հայկական ձեռագիր և երկու տպագիր գիրք:

Հայ ազգաբնակչության վերացումը իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում, հայկական նյութական և հոգևոր մշակույթի մեծաքանակ հուշարձանների ոչնչացումը նշանակում է, ըստ էության, որ հայ ազգը կորցրել է իր պատմական հայրենիքի մի մասը, որն, իր հերթին, դժվար հասանելի է դարձնում պատմական արդարության վերականգնումը՝ իր ամբողջ ծավալով:

Սփյուռքի կազմավորումը

Հայերի ցեղասպանության հետևանքը ժամանակակից հայկական Սփյուռքի կազմավորումն էր: Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Թուրքիայի հայաբնակ

վայրերից հարյուր հազարավոր փախստականներ սփռվեցին աշխարհի բազմաթիվ երկրներում: Նկարելիորեն մեծացավ հայերի թվաքանակը Արաբական Արևելքի երկրներում՝ Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, մի շարք եվրոպական երկրներում՝ Հունաստանում, Բուլղարիայում, Ֆրանսիայում և այլն. կազմավորվեցին կամ զգալիորեն ընդլայնվեցին հայկական համայնքները ԱՄՆ-ում, Կանադայում, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում:

Սփյուռքահայերի առաջին սերնդին բաժին ընկան բազմաթիվ փորձություններ ու զրկանքներ: Մարդիկ, որոնք ապրել էին ցեղասպանության և հայրենիքի կորստի ողբերգությունը, հայտնվեցին օտարության մեջ, հաճախ առանց որևէ իրավունքի, առանց գոյամիջոցների: Կոտորածից փրկվածների մի զգալի մասը որբերն էին, որոնք ինքնուրույն կյանք էին ուրք դնում՝ դաստիարակություն ստանալով շարք երկրներում եղած հայկական որբանոցներում: Ներապտերազմյան դժվարին փորիններին սփյուռքահայերը կարողացան հարմարվել կյանքի նոր պայմաններին, միաձուլվել նրանց ապաստան փոխած երկրների սոցիալ-տնտեսական կյանքին: Աստիճանաբար ֆիզիկական գոյապահպանման հիմնահարցը փոխարինվեց ազգագրական ինքնադիպության պահպանման, ծուղղական ներգործություններին դիմակայելու խնդրով: Այդ խնդրի լուծմանն ուղղվեց Հայ առաքելական եկեղեցու, արտասահմանյան հայ դպրոցի և մամուլի, փարսարեսակ մշակութային և լուսավորական կազմակերպությունների գործունեությունը: Սփյուռքում ակտիվ գործունեություն էին փրանում Խորհրդային Հայաստանում արգելված հայկական ազգային կուսակցությունները, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, բազմաթիվ հայրենակցական կազմակերպությունները:

Մինչև 1960-ական թվականների կեսերը սփյուռքահայերի սերունդներն էին հանդես գալիս իբրև հիմնական շարժիչ ուժ հանուն ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման, հանուն պարսկական արդարության վերականգնման: 1920-1930-ական թվականներին, ընդհուպ մինչև երկրորդ աշխարհամարտը, հայկական Սփյուռքը ջանում էր իրեն հասանելի միջոցներով ներգործել համաշխարհային հասարակական կարծիքի վրա, միաժամանակ հոգ փրանելով Սփյուռքի երիտասարդ սերնդի ազգային ինքնագիտակցության ձևավորմանը: Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ ուղղակի գուգադրություն առաջացավ երիտթուրքերի և հիվերականների մարդաբայաց գործողությունների միջև, հաճախացան սփյուռքահայերի և նրանց կազմակերպությունների դիմումները հակահիվերյան խմբավորման անդամ քերությունների կառավարություններին, Միացյալ Ազգերի Կազմակերպությանը՝ Հայկական հարցը լուծելու, հայ ժողովրդի նկատմամբ պարսկական արդարությունը վերականգնելու պահանջներով: Ավելի ուշ մի շարք երկրներում՝ ԱՄՆ, Ֆրանսիա և այլն, հայկական Սփյուռքը ծավալեց ակտիվ լոբբիարական գործունեություն, ջանալով ներգործել այդ երկրների պառլամենտների և կառավարական շրջանների վրա, հասնել Թուրքիայի դատապարտմանը կապարած հանցագործության համար: Այդ նպատակով արելով ծովային հափուկ կազմակերպություններ՝ Ամերիկայի հայկական համագումարը, Հայկական ազգային հափուկ կազմակերպությունները («Հայ Դատ») և այլն, կազմակերպվել են հայերի ցեղասպանության վերաբերյալ նյութերի հավաքումը և հրապարակությունը, այդ նյութերի տրամադրումը աշխարհի առաջատար երկրների խորհրդարաններին և կառավարություններին, Եվրոպառլամենտին և այլն: Մի շարք դեպքերում այդ գործունեությունը պսակվեց որոշակի հաջողությամբ, որի մասին կխոսվի ստորև:

Դրան զուգընթաց, Սփյուռքի որոշ շրջաններ, առավելապես արմատականորեն տրա-

մաղրված երիտասարդությունը, նման գործունեությունը համարում էին կրավորական, բավարարված չէին նրա արդյունքներով, ենթադրում էին, որ անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք լայն արձագանք առաջ կբերեն և նորից աշխարհի ուշադրությունը կհրավիրեն հայերի ցեղասպանության հիմնահարցի վրա: Սկիզբի արմատականորեն ցրտամաղրված երիտասարդության համար ոգևորիչ օրինակ էին ծառայում հայ ժողովրդական վրիժառուների գործողությունները, որոնց, ինչպես հայերն է, հաջողվեց ի կատար ածել Սյամբուլի դատարանի մահվան վճիռը, հետապնդելով և վերացնելով հայերի ցեղասպանության կազմակերպիչներից ոմանց՝ երիտթուրքերի ղեկավարներ Թալաաթին, Ջեմալին, Բեհաէդդին Շաքրին, Սաիդ Նալիմին, Տրապիզոնի հայերի դահիճ Ջեմալ Ազմին և ուրիշներին: Առաջացան մի քանի կազմակերպություններ՝ Նայասարանի ազատագրության հայկական գաղտնի բանակ (ASALA), հայկական շարժում, հայոց ցեղասպանության արդարադատներ և այլն, որոնց գործունեությունը կայանում էր փայբեր երկրներում պաշտոնական թուրքական դիվանագիտական ներկայացուցիչների դեմ անաբեկչական գործողությունների կազմակերպում: Նման գործողությունները հիդրավի գտնում էին արձագանք, սակայն միանշանակ գնահատական չստացան բուն Սփյուռքում, իսկ համաշխարհային հասարակական կարծիքի կողմից որակվեցին իբրև անաբեկչություն:

Նայասարանի հանրապետության սրբեղծմամբ (1991 թ.), Անկախության հռչակագրի ընդունմամբ, որում նշվում է, որ Նայասարանի հանրապետությունը հանդես է գալիս ի պաշտպանություն հայերի ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման, հայ ազգի բաղկացուցիչ մասերը՝ Նայասարանի հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի հանրապետության ազգաբնակչությունը և սփյուռքահայերը միասնական են իրենց ձգտման մեջ՝ հասնելու պարմական արդարության վերականգնմանը:

Ցեղասպանության հոգեբանական հետևանքները

Ցեղասպանությունը ուժեղ ներգործություն ունեցավ հայ ազգի մտայնության, նրա հասարակական-հոգեբանական վարքագծի և հոգևոր կերպարի վրա: Այդ առումով ցեղասպանությունը ունեցել է իր ան-

միջական և հեռագնա հետևանքները:

Ցեղասպանության անմիջական հետևանքները լիովին իր մշակի վրա զգացել է այն սերունդը, որը վերապրել է ցեղասպանությունը: Այդ հետևանքներին են վերաբերում գոյությանը մշտապես սպառնացող վտանգի, կրոնական համոզմունքների և ազգային արժանապատվության խոցելիության զգացումը, վերջապես, երկյուղի զգացումը հնարավոր կոտորածից, որոնց միագումարությունը ծնում էր հոռեպրեսություն, անվարանդություն վաղվա օրվա նկատմամբ: Մակայն այդ նույն հետևանքները խթանում էին հայերի ձգտումը՝ հաղթահարել դժվարություններն ու գրկանքները, որոնք առաջ էին եկել հայրենիքի կորստից, օտարության մեջ թափառումներից, հասնել ինքնահաստատման, ապացուցել, որ հայ ազգը արժանի է ավելի լավ վիճակի: Ինքնահաստատում, որ ձեռք է բերվում իր ազգագրական ինքնատիպության, լեզվի, ազգային մշակույթի, իր կրոնին հավատարմության պահպանմամբ, այդպիսին է ժողովրդի միագումար անդրադարձը հանդես գեղասպանության, հայերին գլխովին բնաջնջելու փորձի: Որոշակի առումով ինքնահաստատումը հայության կողմից ենթագիտակցաբար ընկալվում է իբրև վրեժի զգացումի յուրաբեռակ հագեցում, իբրև պատրասխան պարմական անարդարությանը: Այդ

իսկ պարճառով հայ ժողովրդի ներկայացուցիչների նվաճումները գործունեության ցանկացած ոլորտում՝ քաղաքականության, գիտության, արվեստի, սպորտի և այլն, ամբողջ ազգի կողմից ընկալվում է անթաքույց հայարարությամբ, դիտվում է իբրև ժողովրդի ինքնահաստատման վկայություն:

Ցեղասպանության հեռագնա հերևանքներին է վերաբերում հայ ազգի պարմական հիշողության նոր նստվածքաշերտի կազմավորումը: Այդ նստվածքաշերտում կայուն կերպով ամրապնդվել է այն ամենը, ինչ կապված է ցեղասպանության հետ՝ հայրենիքի կորստի դառնությունը, ապրվածի մղձավանջը, հրեշավոր անարդարության զգացումը: Պարմական հիշողության առանձնահատկությունը այնպիսին է, որ այն ներհատկ է ժողովրդի հետագա շար սերունդներին, աչքի է ընկնում ներգործության կայունությամբ և երկարապնդությամբ, հաճախակի որոշում է ազգի գիտակցական և չգիտակցված վարքագիծը: Ցանկացած ուրնագություն իրավունքի, արժանապատվության, առավել ևս կյանքի նկատմամբ առանց հապաղման հայ ժողովրդի հիշողության մեջ արթնացնում է նրա պարմության առավել ողբերգական էջերը, կապված ցեղասպանության հետ: Այդ բանի վերջին վկայությունը հայ ազգի հակագոյն է Ադրբեջանում հայ ազգաբնակչության ջարդերին՝ Ղարաբաղյան շարժումը սկսվելուց հետո:

9. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԶԲԵՐՈՎ

Հայերի ցեղասպանության ժամանակներից անցել է ութ տասնամյակ, լիովին բավարար ժամկետ այն բանի համար, որպեսզի իմաստավորվի իրադարձությունների էությունը, ճանաչվեն նրա հերևանքները: Այդ նույն տասնամյակների ընթացքում մեկ անգամ չէ, որ մարդկությունը ակնադրես է եղել ցեղասպանության հանցագործություններին: 1933 թ. Գերմանիայում իշխանության գլուխ գալուց հետո նացիստները մինչև երկրորդ աշխարհամարտ ընկած ժամանակամիջոցում վերացրին երկրում հրեա ազգաբնակչության ճնշող մասը, զրեթե բոլոր զնչուններին, իսկ պարերազմի փարիներին շարունակեցին հրեաների ցեղասպանությունը Եվրոպայի գրավված երկրներում, բնաջնջելով ավելի քան 6 միլիոն մարդ: 1970-ական թվականների երկրորդ կեսին կոմունիստական վարչակարգը Կամբոջայում ոչնչացրեց իր իսկ երկրի երեք միլիոն մարդ: Այնպիսի գործողությունների պոռթկումներ, որոնք որակվում են իբրև ցեղասպանություն, վերջին տասնամյակներում նկատվել են Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի որոշ երկրներում: Ցեղասպանության սահմանման փակ են ընկնում նաև հայերի դեմ գործադրված գազանությունները Սումգայիթում՝ 1988 թ. փետրվարին և Բաքվում՝ 1991 թ. հունվարին: Համաշխարհային համագործակցությունը, ինչպես նշվեց վերը, միանշանակ որակում է ցեղասպանությունը իբրև ծանրագույն հանցագործություն մարդկության դեմ: Ելնելով դրանից, ամբողջ աշխարհի հայերը պահանջում են ՄԱԿ-ից դատապարտել 1915 թվականի ցեղասպանությունը:

Հայերի ցեղասպանության դատապարտումը համաշխարհային հասարակայնության և միջազգային կազմակերպությունների կողմից

էին արվում «լուծելու» Հայկական հարցը հայերին ոչնչացնելու ուղիով: XIX դարի վերջին Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, իսկ XX դարի սկզբին Գերմանիայում և Ֆրանսիայում առաջացան ընկերություններ, որոնք իրենց առջև նպատակ էին դնում մերկացնել Թուրքիայի կառավարող շրջանների հայապոլսաց քաղաքականությունը, օգնություն ցույց տալ արևմտահայերին: Երբ համաշխարհային հասարակայնությանը հայտնի դարձան երիտթուրքերի գործողությունները հայերի դեմ առաջին աշխարհամարտի տարիներին, աշխարհի մի շարք ականավոր ներկայացուցիչներ, եվրոպական երկրների մշակույթի գործիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին, հանդես եկան ի պաշտպանությունն հնագույն քաղաքակիրթ ժողովուրդներից մեկի: Հայ ժողովուրդն իր հիշողության մեջ պահել է երախտագիտության գզացումները հանդեպ նորվեգական մեծ գիտնական ու մեծ հումանիստ Ֆրիդրիխ Նանսենը, ֆրանսիական խոշորագույն գրողներ Անատոլ Գոնսան ու Ռոմեն Ռոլանը, արևելագետ Ժակ դը Մորգանը, գերմանական աստվածաբան Յոհաննես Լեյբսիուսը, գրող Արմին Վեգները, ականավոր ռուս բանաստեղծ Վալերի Բրյուսովը, ականավոր անգլիական իրավագետ ու պետական գործիչ Ջեյմս Բրայսը, խոշորագույն պատմաբան Անտուա Թոմազին, ավստրիական գրող Ֆրանց Վերֆելը, ամերիկյան իրավագետ Հերբերտ Ադամս Գիբբոնսը, դահիական միսիոներ Մարի Յակոբսենը և հայերի շատ ուրիշ իսկական բարեկամները:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակամիջոցում հազվադեպ էր հիշատակվում հայերի ցեղասպանության մասին: Ասվածը վերաբերում է ինչպես արևմտյան երկրներին, այնպես էլ ԽՍՀՄ-ին և անգամ Խորհրդային Հայաստանին, որտեղ, ի հաճույս Խորհրդային պետության քաղաքական շահերի, ցեղասպանության հիմնահարցը չէր ուսումնասիրվում, նրա մասին չէր հիշատակվում նույնիսկ պատմության դասագրքերում: Պատմագրության տեսությունը, որ Կրմած է ներկա աշխարհության հաջորդ գլխում, ցույց է տալիս, որ հենց այդ ժամանակաշրջանում է եղել երկարատև ընդմիջում հայրենական պատմական գիտության մեջ ցեղասպանության պատմության ուսումնասիրության խնդրում:

Երկրորդ աշխարհամարտից հետո, ինչպես արդեն նշվեց, հայերի ցեղասպանությունը սկսեց հիշատակվել գերմանական ֆաշիզմի չարագործությունների դատապարտման կապակցությամբ: Հրապարակումներում հայտնվեցին մարտնչություններ այն մասին, որ երկրթությունը եղել են հիպոերականների նախորդները, որ Հյուլերը, սլավոնական ժողովուրդների հետ հաշվեհարդարի կոչ անելով, հիշեցնում էր հասարակական կարծիքի մոռացկոտությունը՝ հանդեպ երկրթությունների կազմակերպած հայկական ջարդերը:

Սակայն հետաքրքրությունը դեպի հայերի ցեղասպանության հիմնահարցը հատկապես աճեց ավելի ուշ, 1965 թվականին, երբ լրացավ նրա իրագործման հիսունամյակը: Այդ տխուր տարեթիվը լայնորեն նշվեց Միությունի բոլոր համայնքներում, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում: Բուն 1965 թվականին առաջին անգամ հայերի ցեղասպանությունը հիշատակվեց միջազգային հեղինակավոր ֆորումի փաստաթղթերում՝ Հելսինկիում կայացած Խաղաղության համաշխարհա-

Արևմտահայերի աղետալի կացությունը Թուրքիայում եվրոպական հասարակական կարծիքի ուշադրությունը գրավեց տակավին այն տարիներին, երբ Օսմանյան կայսրության սուլթանական կառավարության կողմից առաջին փորձերն

յին կոնգրեսում: Կոնգրեսի բանաձևի մեջ մտցվեց հետևյալ կետը.

«Այս փարի լրանում է հայկական կոպորացիաների 50-ամյա փարելիցը, կոպորացիաներ, որոնք կազմակերպվել էին Օսմանյան Թուրքիայի կողմից ազգային հարցը մի ամբողջ ժողովրդի բնաջնջման ուղիով լուծելու նպատակով: Այդ ցեղասպանությունը խլեց ավելի քան մեկ և կես միլիոն ազապատեր հայերի, այսինքն հայ ժողովրդի երկու երրորդի կյանքը»:

Վերջին երկու փաստաբանների ընթացքում հայերի ցեղասպանության հարցը քննարկվել է մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների կողմից: 1974 թ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը քննարկեց ցեղասպանությունը կանխելու և այն իրագործելու համար պարզի մասին հուշագիրը, որի 30-րդ պարագրաֆում հայերի 1915 թ. զանգվածային կոպորացիաները որակվում էին իբրև XX դարի առաջին ցեղասպանության փաստ: Սակայն Թուրքիայի ճնշման տակ այդ փաստաթուղթը հավանության չարժանացավ:

1984 թ. ապրիլի 13-16-ին Ժողովուրդների մշտական դատարանը Փարիզում, Սորբոնի դահլիճում նիստ անցկացրեց՝ նվիրված հայերի ցեղասպանության հիմնահարցին: Լսելով փարբեր երկրներից (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Արևմտյան Բեռլին) մասնագետ-փորձագետների և չորս վերապրող ականաբանների, Մշտական դատարանը վճիռ ընդունեց, որում, մասնավորապես, ասված է. «1948 թ. դեկտեմբերի 9-ի ցեղասպանության հանցագործության կանխման և նրա համար պարզի Կոնվենցիայի սահմանման համաձայն հայ ժողովրդի ոչնչացումը տեղահանության և զանգվածային սպանությունների միջոցով իրենից ներկայացնում է ցեղասպանություն... Երիտթուրքերի կառավարությունը պատասխանատվություն է կրում այդ ցեղասպանության՝ 1915-1917 թթ. կատարված գործողությունների համար»:

1987 թ. Եվրոպական պառլամենտը, ավելի քան երեք փարի հայերի ցեղասպանության հիմնահարցը քննարկելուց հետո, ընդունեց, չնայած Թուրքիայի համառ դիմադրությանը, բանաձև, որտեղ ասված էր.

«...1915-1917 թթ. Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները ցեղասպանություն են հանդիսանում...» Եվրոպական պառլամենտը պահանջեց Եվրոպական խորհրդից ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ 1915-1917 թթ. կազմակերպված հայերի ցեղասպանության ճանաչմանը հասնելու նպատակով:

Հայերի ցեղասպանության փաստը ճանաչվել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից: 1989 թ. կայացած այդ խորհրդի համագումարում բանաձև ընդունվեց հայերի ցեղասպանության մասին, որը պարունակում էր նաև կոչ խորհրդի անդամ եկեղեցիներին դիմելու իրենց երկրների կառավարություններին՝ «կոչ անելով ճնշում գործադրել Թուրքիայի վրա նրա կողմից հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով»: Բանաձևը պահանջում էր Թուրքիայից «ազատել զավթված Հայաստանը և ապահովել արտերկրի հայերի իրավունքը վերադառնալու իրենց հայրենիք»: Հարկանշական է, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ճանաչեց նաև հայ ժողովրդի նկատմամբ ազգային-մշակութային ցեղասպանության փաստը, նշելով բանաձևում, որ վերջին 75 տարիների ընթացքում Թուրքիայում ավերվել է ավելի քան 2 հազար տաճար ու եկեղեցի:

Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստի ճանաչման

հարցը դրվել է նաև մի շարք երկրների պառլամենտներում: Այսպես, 1975 թ. ապրիլին ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց, որը ճանաչում էր Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստը: Իսկ Մեծ Բրիտանիայի խորհուրդի պալատը, 1985 թ. հուլիսին համապատասխան բանաձևը հավանություն ստացավ, իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ մերժվեց ձայների նվազագույն քվորեքությունը: 1980-ական թվականներին Ֆրանսիայի Ազգային ժողովը բանիցս բնաւարկել է հայերի ցեղասպանության փաստի ճանաչման հարցը, սակայն առաջարկվող բանաձևերը անհրաժեշտ բանակություններ ձայներ չէին հավաքում:

Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը ճանաչվեց նաև նախկին ԽՍՀՄ-ի պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից, չնայած Նախարարի Գերագույն խորհրդի պաշտոնական դիմումին: Վերստին կոմյունիստական-բաղաձայնական նկատառումները ավելի կարևոր դուրս եկան, բան պարմական ճշմարտության հաստատումը հանդէպ հայ ժողովուրդը, որը, ինչպես հայրենի է, մտնում էր Խորհրդային Միության կազմի մեջ: Միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, 1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Դերական դուման հանդես եկավ Նախարարությամբ, որով դադարապարհեց հայոց ցեղասպանությունը, ապրիլի 24-ը դիմելով որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Ժամանակակից Թուրքիայի վերաբերմունքը ցեղասպանության նկատմամբ

հաղթանակած տերությունների հետ պայմանագիր ստորագրել առավել բարենպաստ պայմաններով, պարասխանաբարության կանգնեց և դարի րվեց տասնյակ բարձրաստիճան անձանց, այդ թվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության փախուստի մեջ գրմվող դեկավարներին: Նրանց նկատմամբ մեղադրանք հարուցվեց Թուրքիան կործանարար պարերգվի մեջ ներքաշելու, ինչպես նաև հայ ազգաբնակչության տեղահանման ու կոտորածի համար: Թեև պարասխանաբարության կանգնեցին զանգվածային սպանությունների ոչ բոլոր կազմակերպիչներն ու իրականացնողները, և 1919-1920 թթ. կայացած դադարապարտությունը լայն արձագանք չստացավ, դադարապարտության կազմակերպման բուն փաստը, մեղադրանքների էությունը, որոնք ներկայացվել էին պարասխանաբարության կանգնեցված անձանց և, վերջապես, հանցագործության ապացուցման նյութերը, մեղադրական ակտը և դադարվճիռը նշանակալի իրադարձություն էին:

Այլ էր, սակայն, Անկարայի պաշտոնական շրջանների վերաբերմունքը հայերի ցեղասպանության նկատմամբ: Դեռևս 1919 թ. դեկտեմբերի 31-ին Մ. Քեմալը, հանդես գալով Անկարայի ընդարևու առջև, հայտարարեց. «Այն ամենը, ինչ պարահեց ոչ մուսուլմանական րարրերի հետ, ովքեր ապրում էին մեր երկրում, արդյունք է նրանց անցկացրած անջարտդականության բաղաբականության, բաղաբականություն, որը ոգեշնչվում էր օրարերկրյա խարդավանքներով և իրենից ներկայացնում էր չարաշահում այն արտությունների, որոնք մենք ընձեռել էինք նրանց... Ես կրկնում եմ, որ մեր դեմ հարուցված մեղադրանքները անհիմն են»:

Ուստի պարահանական չէր, որ երկրից «ոչ մուսուլմանական րարրերին» հույ-

ներին և հայերին արտաքսելուց հետո, Մ. Քեմալը հանդիսացավ «Թուրքական պարամական ընկերության» սրեղծման նախաձեռնողը, որի նպատակն էր վերաշարադրել ինչպես թուրքական, այնպես էլ համաշխարհային պարամությունը: Սկսեցին հետևողականորեն քարոզարարական առաջ քաշել այն մասին, որ երկրորդ թուրքական կառավարությունը սրիաված էր հայերի քրեականության կազմակերպել մերձազմանակարային գոյուց, քանզի հայերը հավարարիւմ չէին կայարութայնը, ապարամութուններ էին բարձրացնում թուրքական բանակի թիկունքում, որ քրեականության ժամանակ հայերը որոշակի գոհեր են քվել, որովհետև նրանք դիմադրություն էին ցույց քալիս, որ մեղավորը «քրեականության» վար պայմաններն էին, կլիման էր, համաճարակները և այլն: Ընդորում, հասկանալիորեն, լուրքայն էր մարկում հայերի աքսորի քիասոր ոչ միայն Արևմտյան Ղայասարանից, այլև Արևմտյանական Անարուիայից, Աոսարանդուպուսից և Թուրքիայի հարարակ մյուս վայրերից: Այնուհետև ընթացք քրվեց «վիսադարձ ջարդերի» մասին քարոզարակին, որոնք իբր թե քրեղի էին ունեցել Արևմտյան Ղայասարանում պարերագըն սկսվելուց հետո, որ թուրքական կողմը ավելի ջար կորուստներ էր կրել, քան հայերը, և որ հայերը «գագանություններ» են թույլ քրվել թուրք ագգաբանակչության նկարմամբ: Բոլոր դեպքերում նկարելի է սպանված հայ ագգաբանակչության թվաքանակի կքրուկ նվագեցման միքում: Այդպիսով, ըստ էության ժիքում է հայերի ցեղասպանությունը Թուրքիայում: Ելնելով դրանից, Թուրքիայի պաշտոնական շրջանները ամեն կերպ դիմադրում են միջագգային կազմակերպություններում հայերի ցեղասպանության հիմնահարցի քննարկմանը, դիմում են քաղաքական ջանքարժի այն պետությունների նկարմամբ, որոնք հանդես են գալիս հոգուր հայերի ցեղասպանության քիասորի միջագգային ճանաչման:

Անկախ Ղայասարանի Ղանրապետության հոչակումից հետո (1991 թ.) Թուրքիայի պաշտոնական շրջանները Ղայասարանի հետ հարաբերություններ հասարարելու նախապայման են համարում Ղայասարանի դեկավարության հրաժարումը հայերի ցեղասպանության հիմնահարցից: Ավելին, Թուրքիայի պաշտոնական շրջանները գքրում են, որ Ղայասարանը պետք է ներգործի Սիյուրքի վրա, որպեսզի արարասահմանյան հայ համայնքներն էլ հրաժարվեն համաշխարհային հասարակական կարծիքի վրա ագդելու քործերից՝ ցեղասպանության քիասոր ճանաչելու նպարակով: Ինչն է խանգարում Թուրքիային ճանաչելու ցեղասպանության քիասոր: Մի ջարք միջագգային քիասարթղթերում, որոնց մի մարը վերը վկայակոչվեց, նշվում է, որ «հայերի ցեղասպանությունը նույնպես «միջագգային հանցագործություն» է, որի համար պարասխանարվություն պետք է կրի թուրքական պետությունը, չպարքվակելով, թե գոյություն չունի ժառանգականություն այն ժամանակի և ներկա պետությունների միջև: Ղարևաբար Թուրքիայում երկյուղ են կրում, որ ցեղասպանության քիասորի ճանաչումը կարող է իր հետ քերել հայ ժողովրդին հասցված բարոյական, նյութական, մշակութային, քարածքային և այլ կորուստների քիսահարուցման պահանջ:

Սակայն հայ ժողովուրդը իրավունք ունի պահանջելու գոնե բարոյական հարուցում՝ գղջման խոսքովանություն, այն բանի հասարարում, որ ժամանակակից Թուրքիան, որը հավակնում է դասվելու քաղաքակիրթ իրավական պետություն-

ների շարքը, հրաժարվում է ութ րասնամյակ առաջ կատարված հանցագործությունից: Հիշեցնենք մի այսպիսի փաստ. 1950-ական թվականների վերջերին ամբողջ աշխարհի թերթերում հայրնվեց մի լուսանկար, որում պարկերված էր Գերմանիայի կանցլեր Կ. Ադենաուերը Երուսաղեմում ծնկի եկած Լացի պարի առջև՝ ի նշան վշտի՝ հիպոերականների ոչնչացրած միլիոնավոր հրեաների համար: Ժամանակակից Թուրքիայի կողմից ցեղասպանության փաստի ճանաչումը կարող է ստարարել կանոնավոր հարաբերությունների հաստատմանը երկու հարևան պետությունների՝ Ղազախստանի Հանրապետության և Թուրքական Հանրապետության միջև:

10. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության պարմությունը ուսումնասիրության առարկա է ոչ միայն հայ, այլև արվասահմանյան պարմագրության համար: Քանի որ այդ հիմնահարցին նվիրված առաջին հրապարակումները երևան եկան դեռևս XIX դարի վերջին, ապա նրա հեմագոմման պարմությունը արդեն հարյուր ամարի է հաշվում: Այդ ժամանակամիջոցում հայ և արվասահմանյան հեմագոմմողների կողմից ստեղծվել են նշանակալի թվով աշխատություններ, որոնցում քննարկվում են 1915-ի ցեղասպանությանը վերաբերող մի շարք հարցեր: Հիմնահարցի առկա պարմագրությունը րարբեր է մերողաբանական մոտեցումներով, որը շար քանով պայմանավորված է այն խնդիրներով, որոնք իրենց առջև դրել են հեմագոմմողները: Այսպես, հայ պարմագրության մեջ ցեղասպանության հիմնահարցը քննարկվում է, իբրև կանոն, Հայկական հարցի ծագման և զարգացման պարմության հեմ սերտորեն կապակցված. իսկ արևմտյան հեմագոմմողների աշխատություններում գերակշռում է բուն ցեղասպանության, նրա իրագործման մեխանիզմի, հեմանքների քննարկումը: Յեղասպանության վերաբերյալ գրականության բաղկացուցիչ մասն են կազմում բազմաթիվ հուշագրությունները, որոնց մի մասը օժրված է սկզբնաղբյուրի արժեքով, ինչպես նաև փաստական նյութի հրապարակումը: Թուրքիայում հայոց ցեղասպանության պարմությանը նվիրված նորանոր հեմագոմմությունների հայրնվելը վկայում է, որ հեմաբրբությունն այդ հիմնահարցի նկարմամբ չի մարում:

Հայ պարմագրություն

Հայկական հարցը, արևմտահայերի ազաարագրության ուղիները, հայ ազգային-ազաարագրական շարժման խնդիրները գրավել են հայ հասարակական-քաղաքական մրբի սևեռուն ուշադրությունը Հայկական հարցի ծագման ժամանակներից՝ XIX դարի 70-ական թվականների վերջից: Ուստի պարահական չէ, որ նշված հիմնահարցերին նվիրված առաջին աշխատությունները պարկանում էին ժամանակի հայ գրողներին և հրապարակախոսներին՝ Բաֆթուն, Գր.Արծրունուն, որոնք նկարելի ազդեցություն են գործել նաև հայ պարմագրության զարգացման վրա: XX դարի սկզբին Հայկական հարցին վերաբերող հիմնահարցերի ամբողջ-

ջությունը ուսումնասիրվեց մի շարք հայ պարամաբանների աշխատություններում, որոնց մեջ առաջապար Կել էին գրավում Լեոյի (ԱԲաբախանյան) երկերը՝ «Հայոց հարցի վավերագրերը», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» և այլն: Պարամաբանը ցույց տվեց, որ Հայկական հարցը եվրոպական փերությունների համար խիստ հարմար պարզակ էր միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Նա նշում էր, որ մեծ փերություններից և ոչ մեկը չկարարեց հայ ժողովրդին օգնել իր խոստովանելով: Առավել կարող էին օգնել քրիստոնեական նա ենթարկեց ցարական Ռուսաստանի անհեղինակական քաղաքականությունը: Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը, մասնավորապես նրա վերաբերմունքը հանդեպ հայ ազգի շահերը, քրիստոնեական էին նաև պարամաբան Եղիշեն Գեղամյանի աշխատություններում, որոնք հրատարակվել էին առաջին աշխարհամարտի տարիներին:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմամբ հայ պարամաբանությունը կաշկանդվեց կոմունիստական գաղափարախոսության ճիշտներում: Ըստ էության դադարեցվեց Հայկական հարցին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, հայերի ցեղասպանությանը վերաբերող հիմնահարցերի մշակումը: Հասցանություն կազմեց 1920-ական թվականների վերջերին հրատարակված Բ.Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ԽՍՀՄ-ը» երկհատոր աշխատությունը, որտեղ Հայկական հարցը քննարկվում էր միջազգային հարաբերությունների լայն հեռանկարում: Թեև այդ աշխատության հիմնադրույթները համապատասխանում էին կոմունիստական դոգմաներին, սակայն Հայկական հարց թեմային դիմելը հանգեցրեց այդ աշխատության կտրուկ քննադատությանը, իսկ հետո էլ շրջանառությունից հանելուն:

Հաջորդ քառորդ դարում ցեղասպանության պարամության հիմնահարցը ուսումնասիրվում էր Սփյուռքում: Սիրիայի, Լիբանանի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի և մյուս երկրների հայկական համայնքների մասնավոր հրապարակվում էին հոդվածներ, հիշողություններ, վկայություններ, փաստաթղթեր, որոնք վերաբերում էին հայերի ցեղասպանությանը առաջին աշխարհամարտի տարիներին: Երևան եկան աշխատություններ, նվիրված Արևմտյան Հայաստանի առանձին վայրերին, հուշամատյաններ, ցեղասպանությանը արևմտահայերի ցույց տրված դիմադրության, ինքնապաշտպանության մասին աշխատություններ և այլն, որոնց մեծ մասը հիմնված էր հիշողությունների, ականատեսների վկայությունների և նվազ հայտնի փաստական նյութերի վրա:

1955 թ. հրատարակված Մ.Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. 1850-1870» մենագրությունը իրենով նշանավորեց արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման, նրա գաղափարախոսության պարամության հետազոտության վերսկսում: Այդ աշխատության նշանակությունը, որտեղ քննարկված են Հայկական հարցի ծագման ազգային-փերական և քաղաքական նախադրյալները, այն է, որ այն խթանեց ժամանակակից հայ պարամագրության հետաքրքրությունը Հայկական հարցի և հայերի ցեղասպանության մոտացության մարտնչական հիմնահարցերի հանդեպ: Անցյալ չորս տասնամյակների ընթացքում այդ հիմնահարցերի հետազոտության բնագավառում լուրջ աշխատանք է կատարված, սերտ ծավալվել են մի շարք աշխատություններ: Մասնավորապես, հայերի ցեղասպանության պարամությանը նվիրված գրականությունը կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբին են վերաբերում այն աշխատությունները, որոնց մեջ հայերի ցեղասպանության պարամությունը քննարկվում է ամբողջ-

ջությամբ, այդ հիմնահարցը կազմող խնդիրների միագումարության մեջ: Դրանց թվին են պատկանում Ե.Սարգսյանի, Զ.Կիրակոսյանի, Ռ.Սահակյանի և ուրիշ հեղինակների հեղափոխությունները: Երկրորդ խումբը ներկայացված է աշխարհայինություններով, որոնք նվիրված են առանձին հարցերի քննարկմանը, որոնք այս կամ այն չափով վերաբերում են ցեղասպանության հիմնահարցին: Մենագրական բնույթի հեղափոխության են ենթարկվել հերկյալ հարցերը՝ արևմտահայերի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կացությունը (Ե.Սարգսյան, Ա.Համբարյան և ուրիշներ), հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը XIX դարի վերջին - XX դարի սկզբին (Ծ.Աղայան, Ս.Պողոսյան), Արևմտյան Հայաստանի տեղը եվրոպական պետությունների քաղաքական ծրագրերում (Մ.Հակոբյան, Ս.Սյրեփանյան, Ա.Կիրակոսյան), Թուրքիայի կառավարող շրջանների գաղափարախոսությունը (Ն.Ինճիկյան, Ա.Համբարյան, Ռ.Սաֆրասյան, Մ.Բոջար), իրադարձությունները Կիլիկիայում (Ռ.Սահակյան և ուրիշներ) և այլն: Քննարկելով հայերի ցեղասպանության պատմությունը, հայ պատմաբանները լուսաբանել են նրա սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, բացահայտել են թուրք կառավարողների համաթրքական և պանիսլամական նկրտումները, որոնք հակասում էին հայ ժողովրդի կենսական շահերին, լուսաբանել են մեծ տրեղությունների դիրքորոշումը առաջին աշխարհամարտի նախօրեին, բերել են անհերքելի ապացույցներն այն բանի, որ հայերի ցեղասպանությունը նախօրոք կանխամարմնաված, մանրագնին կազմակերպված գործողություն էր, ամենևին էլ չպայմանավորված պատերազմական իրադրությամբ: Բոլոր այդ եզրակացությունները սկզբունքային նշանակություն ունեն:

Հայերի ցեղասպանության պատմությանը նվիրված հարուստ գրականության բաղկացուցիչ մասն են փաստաթղթերի և նյութերի ժողովածուները. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» (կազմողներ Մ.Ներսիսյան, Ռ.Սահակյան, խմբ. Մ.Ներսիսյան), որն ունեցավ երեք հրատարակություն ռուսերեն, իսկ 1991-ին՝ լույս տեսավ հայերեն, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)» (կազմողներ Զ.Կիրակոսյան, Ռ.Սահակյան, խմբ. Զ.Կիրակոսյան), «Հայերի ցեղասպանությունը ըստ երկրորդների դատավարության փաստաթղթերի» (կազմող Ա.Փափազյան, խմբ. Ռ.Սահակյան): Դրանցում ամփոփված տարբեր արխիվներում հայտնաբերված, կամ օտար լեզուներով հրատարակված փաստաթղթերը՝ գիտականորեն համակարգված ու մեկնաբանված լուսաբանում են հիմնահարցը: Հրատարակված են նաև Գերմանիայի արխիվներում հայտնաբերված փաստաթղթերի ժողովածուներ (Ս.Սյրեփանյան, Վ.Միքայելյան): Այդ փաստաթղթերի նշանակալի մասը հրապարակվում է առաջին անգամ: Կան մի քանի աշխարհայինություններ, նվիրված Հայկական հարցի և հայերի ցեղասպանության պատմագրությանը, ինչպես նաև ժամանակակից թուրք պատմագրության քննադատությանը, որը փորձում է սքողել պատմական ճշմարտությունը և հերքել Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը (Ա.Խ.Սաֆրասյան, Ռ.Սահակյան, Ե.Սարգսյան և ուրիշներ):

1991-ին ռուսերեն լույս տեսած «Հայկական հարց» հանրագիտարանը (պատասխանատու խմբագիր Կ.Խոտովսկերյան) զգալի քանակությամբ մասնագիտական հոդվածներ է պարունակում Հայկական հարցի և հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Ռուս
պապմագրություն

Ռուս պալատագրություն Ռուս հասարակայնությունը առաջինը արձագանքեց հայերի կոտորածին Թուրքիայում XIX դարի վերջին: 1896-1897 թթ. մեկը մյուսի հեյրեկից հրապարակվեցին երկու ժողովածուներ՝ «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև պետությունների միջամտությունը 1895 թվականին» և «Եղբայրական օգնություն Թուրքիայում փոշած հայերին», որոնց մեջ ամփոփվեցին ռուսական մշակույթի և պալատագրության շար ակնանավոր ներկայացուցիչների հոդվածները: Այդ ժողովածուների հրապարակումով ռուս հասարակայնությունը իր բողոքն էր արտահայտում Թուրքիայում հայկական ջարդերի դեմ, որոնք կազմակերպվել էին սուլթանական կառավարության կողմից:

Հայկական հարցի և հայերի ցեղասպանության պարամության վերաբերյալ առավել լուրջ աշխարհությունները պարկանում են ռուս դիվանագետ, պարամաբան և իրավագետ Ա.Ն.Մանդելշտամի գրչին: Առաջին աշխարհամարտի տարիներին հրատարակված «Երիտթուրքական տերությունը» (ռուսերեն) և «Օսմանյան կայսրության ճակատագիրը» (ֆրանսերեն) գրքերում հեղինակն օգտագործել է ժամանակին առկա փաստագրական նյութերը, ինչպես և սեփական դիտարկումները: Նա հանգամանորեն նկարագրում է իրադրությունը Թուրքիայում առաջին աշխարհամարտի նախօրեին, հաղորդում է մանրամասներ երիտթուրքերի իրագործած բռնագաղթի ու զանգվածային սպանությունների մասին, համոզիչ կերպով հաստատում է, որ այդ չարագործությունը նախապատրաստվել և իրագործվել էր պերսական մակարդակով: Հայերի ցեղասպանությունը դատապարտվում էր Յու.Վենետիսկու «Թուրքահայաստանի ողբերգությունը» (1915 թ.) և Վ.Լոբյուսովի «Հայ ժողովրդի պարմական ճակատագրի տարեգրությունը» (1918 թ.) աշխատություններում:

Խորհրդային ժամանակաշրջանում հայերի ցեղասպանության մասին թու-
ցիկ կերպով հիշարարված է ռուս պարմաբանների՝ Ռուբիհայի նորագույն պար-
մությանը, ինչպես նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված
աշխարհություններում (Ե.Տարլե, Վ.Խվոստով, Ա.Ռուբչովյեն, Ա.Սիլին, Ա.Նովիչև,
Բ.Դանիս, Վ.Գուբև Կրյաժին, Ա.Խեյֆեց և ուրիշներ):

Ֆրանսիական պալմազրույթուն

Հայկական հարցին և հայերի ցեղասպանությանը նվիրված ֆրանսիական պարունական գրականությունը կարելի է բաժանել երկու ժամանակահատվածի՝

աշխատություններ հրապարակված մինչև 1965 թ. և նրանից հետո, ընդդրում այդ հիմնահարցի հեղազոտության սկիզբը վերաբերում է XIX դարի վերջին: Առաջին ժամանակահատվածի աշխատություններից հիշարարկության արժանի են Դ-ընի Կոշենի, Պիեռ Կիյառլի, Ա. Ադոսիդեսի, Էմիլ Դումերգի, Ռ-ընն Պիտոնի և ուրիշների գրքերը: Չի կորցրել իր նշանակությունը 1897 թ. հրապարակված դիվանագիտա-

կան փաստաթղթերի երկհապտո ժողովածուն՝ «Նայկական գործեր» («Դեղին գիրք»), որն արտացոլում է հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում և 1894-1896 թթ. դեպքերը: Ականավոր արևելագետ Ժակ դը Մորգանը իր «Ընդդեմ Արևելքի բարբարոսների» (1918 թ.) գրքում համոզիչ կերպով վերհանեց հայ ազգաբնակչության դեմ երիտթուրքական կառավարության գործողությունների կանխամտածվածությունը, դրեց կատարված հանցագործության համար երիտթուրքական ղեկավարների անմիջական պատասխանատվության հարցը:

1965 թվականից հետո հայրենակցին աշխատություններ, որոնք հարկապես նվիրված էին հայերի ցեղասպանության պարմությանը: Իվ Տերնունը, Ժան-Մարի Կարգուն, Պիեռ Վիդալ-Նակեն, Արթուր Բելլերյանը, Ժերար Շալյանը և ուրիշներ, հենվելով ինչպես երապարակված նյութերի, այնպես էլ արխիվային փաստաթղթերի վրա, ձգտում են պատասխանել այն հարցերին, թե ինչո՞ւ տեղի ունեցավ խաղաղ ազգաբնակչության այդ աննախադեպ ոչնչացումը, ինչպիսի՞ն է կայգերական Գերմանիայի դերը և մյուս մեծ տերությունների պատասխանատվության աստիճանը և այլն: Իվ Տերնունը, 1977-1995 թթ. տպագրված մի շարք աշխատությունների հեղինակը, եզրակացնում է, որ հայերի ցեղասպանությունը «առաջին կոլեկտիվ սպանությունն էր՝ կատարված ծրագրված ձևով և ժամանակակից միջոցներով, որոնք կային ամբողջարկիական պետության տրամադրության տակ»: Նա, ինչպես և մյուս հիշված պատմաբանները, փաստարկված կերպով հերքում է թուրքական պաշտոնական վարկածը տեղահանության անհրաժեշտության մասին, թուրք ժամանակակից պատմաբանների մյուս հեղյուրանքները, գալով այն եզրակացության, որ թուրքական պատմագրությունը՝ դա «ժխտման պատմագրություն» է: Իվ Տերնունը ցույց է տալիս այն նպատակները, որ հետապնդում էին Թուրքիայի կառավարող շրջանները, իրագործելով հայերի ցեղասպանությունը: «Նայերի անհետացմամբ, - գրում է նա, - վերացվում էր խաչընդորդ թուրքիզմի ճանապարհին Օսմանյան կայսրությունում և դրա հետ միասին պանթուրքիզմի ճանապարհին, որը հավակնում էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների թուրքերի միավորմանը»: Ժ.-Մ. Կարգուն հայերի ցեղասպանությունն անվանում է «օրինակելի», նկատի ունենալով, որ XX դարի այդ առաջին ցեղասպանությունը իր մեջ պարունակում էր այն բոլոր բաղկացուցիչները, որոնք կազմում են ցեղասպանություն ընդհանուր հասկացությունը, իբրև ծանրագույն հանցագործության մարդկության դեմ: Խոսելով հայերի ցեղասպանության պարճառների մասին՝ ֆրանսիական պատմաբաններն ընդգծում են երիտթուրքերի ձգտումը թուրքական էթնոսը գերակշռող դարձնելու պետության մեջ: «Բուն ռասայական գաղափարն էր, և ոչ թե կրոնի պաշտպանությունը, կոտորածի սկզբնապարճառը», - նշում են Լորան Շաբրին և Աննի Շաբրին: Ա. Տեր-Մինասյանը և Կլոդ Մուրաֆյանը, բաժանելով այդ տեսակետը, նշում են, որ թուրքական կառավարողները ձգտում էին էթնիկական գրտմը ամենից առաջ իրագործել կայսրության Արևելյան նահանգներում, նկատի առնելով, որ այդ երկրամասի հնագույն բնակիչները՝ հայերը, ասորա-քաղդեացիները և սիրիացիները խանգարում էին թուրքերին վերջնականապես հաստատվելու Արևելյան Անապոլիայում:

Ֆրանսիական պարմաբանների վերջին փաստաւյակների աշխատություններում քննության առարկա է դարձել հայ ժողովրդի վերապրած աղերի հետազոտությունը սոցիալական, հոգեբանական, մշակութային և այլ տեսանկյուններից: Նեղիմակները փորձել են բացատրել ինչպես 1920-ական, այնպես էլ 1970-1980-ական թվականներին ծագած հայ ժողովրդական վրիժառուների շարժման պարճառները (Արա Կրիկոբյան, Ժակ Դերոժի, Էլեն Փիրալյան և ուրիշներ): Սակայն ինչպես անցյալում (Պիեռ Լուրի, Կլոդ Ֆարրեր և ուրիշներ), այնպես էլ ներկայումս Ֆրանսիայում հրապարակվում են գրքեր, որոնց հեղինակները, հետևելով թուրքական պաշտոնական տեսակետին, փորձում են մեղմացնել կամ նույնիսկ արդարացնել երիպրությունների ազգայնամոլ քաղաքականությունը (Պիեռ Մոզեր, Պոլ Դյումոն, Ժորժ դը Մալվիլ և ուրիշներ): Իսկ ամբողջությամբ վերցրած, ֆրանսիական պարմաբանների աշխատությունները նպաստում են հասնելու հայերի 1915 թ. ցեղասպանության միջազգային ճանաչմանը:

Անգլիական պարմագրություն

Մեծ Բրիտանիայի պարմաբանները ստեղծել են մի շարք աշխատություններ Հայկական հարցի և հայկական կոտորածների վերաբերյալ: Միայն 1890-1900 թթ. հրապարակվեցին ավելի քան հարյուր գրքեր և հոդվածներ, այդ թվում Է.Դիլոնի, Ու.Ռամսեյի, Ջ.Ռոջերսի, Ֆ.Սթիվենսոնի, Ն.Լինչի, Մ.Մակկոլի և ուրիշների գործերը: Բացահայտելով 1894-1896 թթ. հայկական ջարդերի պարճառները, հեղինակները քննադատության էին ենթարկում եվրոպական տրեությունների դիրքորոշումը Հայկական հարցում, բանգի հենց այդ դիրքորոշումն էր, որ չխաղնդուրեց արյունարբու սուլթանի հայաստան արարքները: Արժեքավոր է Ջ.Բրայսի առաջաբանով ու խմբագրությամբ Ա.Թոյնթի կազմած «Վերաբերմունքը դեպի հայերը Օսմանյան կայսրությունում» («Կապույտ գիրք», 1916 թ.) փաստաթղթերի ժողովածուն, որը նույն թվականին լույս տեսավ ֆրանսերեն: Ա.Թոյնթին իր «Հայկական կոտորածները: Ազգի սպանությունը» և «Թուրքերի արյունալի բռնապետությունը» աշխատություններում առաջիններից մեկը դարապարտեց ցեղասպանության մեղավորներին. «Օսմանյան կառավարությունը ի վիճակի չէ թաքցնելու իր հանցագործությունը նախագգուշական միջոցների քողի ներքո»:

Վերջին երկու փաստաւյակներում Անգլիայում հրապարակված գրքերի ու մասնագիտական հոդվածների մեջ աչքի է ընկնում Բ.Ուոքերի աշխատությունը (1980, 1990): Նեղիմակը հետազոտում է ցեղասպանության հիմնահարցը՝ օգտագործելով նյութեր Ֆորին Օֆիսից: Նա գտնում է, որ երիպրությունները ներծծված էին ռասայական գիտակցությամբ, որը բացառում էր մյուս բոլոր նկատառումները: Մեկ ուրիշ հեղինակ, լորդ Բիլրոսը (Պարիկ Բալֆուր), նույնպես անաչառ է գնահատում երիպրությունների ցեղասպան գործողությունները, գտնում է, որ նրանք կենսագործում էին հայերի վերացման վաղորտք մրահղացված քաղաքականությունը: Հայրենի կովկասագետ Դ.Մ. Լանգը նույնպես նշում է, որ զանգվածային սպանությունների ձեռնարկումը ըստ էության գործնական հետևանքն էր այն ցեղապաշար գաղափարախոսության, որով զինվել էր պարսերազմի փարիսերին Թուրքիան կառավարող երիպրության խոսնարան: Առանձին պարմաբաններ փորձում են ըմ-

բըռնել թուրքիզմի ակունքները (Դ.Քուշներ): Որոշ հեղինակներ (Ջ.Հասլիսի, Ջ.Հելլեր, Է.Մանգո) այս կամ այն ձևով արդարացնում են Աբդուլ Համիդի և երկրթութեան, հավասարապես և Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Ջ.Հելլերը գտնում է, որ թեև վերջինս բաժանում է պարսիստանավությունը 1915-1916 թթ. դեպքերի համար, «վերջնական ռդերգությունը, սակայն, չէր կարող ժամանակին կանխարեւելել բրիտանական որևէ մի պերական գործչի կամ դիվանագետի կողմից»:

ԱՄՆ-ի պարմագրությունը

Ամերիկյան պարմաբանները ծանրակշիռ ավանդ են ներդրել հայերի ցեղասպանության պարմության ուսումնասիրության գործում: Լուրջ աշխատություններ սկսեցին հայտնվել 1970-ական թվականների սկզբից, ընդորոմ ԱՄՆ-ի հերագո-րողները մշակում էին ոչ միայն հայերի ցեղասպանությունը պարմությանը վերաբերող խնդիրներ, այլև մեծ ուշադրություն դարձրին ցեղասպանության փիլաբա-նության հարցերի, նրա կենսագործման պարմանների, եղանակների, միջոցների վրա: Հայերի ցեղասպանությունը համադրվում է XX դարի հերագա ցեղասպա-նությունների հետ՝ հրեական ցեղասպանություն, գնչուների ոչնչացումը և այլն: Առաջացավ գիտության նոր բնագավառ՝ վիկտիմոլոգիան, որն ուսումնասիրում է ցեղասպանության փարարեսակ հերևանքները՝ սոցիալական, հոգեբանական, ժողովրդի հիշողության մեջ նստվածքները, մասնավորապես հայ ժողովրդի պար-մական հիշողության մեջ շերտավորված բարդությունները, օրինակ գոհի, նահարա-կի բարդությունը: Հիմնահարցի այս և ուրիշ փասանկյուններ արագալում գրան Ռ.Հով-հաննիսյանի խմբագրությամբ լույս րեսած առավել հայտնի մասնագետների՝ Լեո Կուպերի, Ռ.Ռերրո Մելտոնի, Դ.Միլլերի, Ռ.Սմիթի, Ջ.Ռիդի, Ա.Հյոսսի, Կ.Ֆոսսի, Վ.Դադրյանի և ուրիշների հողվածների երկու ժողովածուներում: Վերջին հեղի-նակը թուրքական փաստագրական աղբյուրների հիման վրա ցույց րվեց գիմվո-րականների և «Հարուկ կազմակերպության» դերը արևմտահայերի պլանաչափ բնաջնջման գործում: Նա նաև առաջարկեց ցեղասպանության իր փիլաբանությո-նը: Հերագորողների համար իրևն արժեքավոր սկզբնաղբյուրներ կարող են ծա-ռայել Ռ.Հովհաննիսյանի նախաձեռնությամբ գրառված 1915-ի դեպքերի ավելի քան հինգ հարյուր անմիջական ականարես վերապողների ձայնագրված պար-մանները (բանավոր պարմություն), ինչպես և Մյուգան Բլերի ջանքերի շնորհիվ 1989 թ. հրաարակված Խարբերդում 1914-1917 թթ. ամերիկյան հյուպարոս Լես-լի Դեյվիսի Հաշվերվությունը «Գավառ-սպանդանոց» վերաառությամբ, և Ռ.Պ.Ա-դալյանի «Հայկական ցեղասպանության ԱՄՆ-ի արխիվների րեղեկարո: 1915-1918 թթ.» հրաարակությունը:

Հայերի ցեղասպանության պարմությունը բնարկվում է նաև Հայաստանի նորագույն պարմության ամերիկյան մասնագետներ Ռ.Դևիսոնի, Մ.Միսակյանի, Ռ.Հովհաննիսյանի, Ժ.Լիպարիդյանի և այլոց աշխատություններում: Ջոդյան ինս-տիտուտում հավաքված և համակարգված է նշանակալի փաստական նյութ, որը վերաբերում է հայերի ցեղասպանությանը առաջին աշխարհամարի րարիին-րին: Հարկ է նշել, որ մի քանի ամերիկյան հեղինակներ հայերի բռնի արագաղթն

ու գանգվածային ջարդերը մեկնաբանում են խիստ աչառու, հաճախ դիտավորյալ խեղաթյուրելով փաստերը, իսկ երբեմն էլ ուղղակի նենգափռելով դրանք (Ս.Զ.Շոու, Է.Կ.Շոու, Զ.Մաքքարտի և ուրիշներ):

Գերմանական պարամպրություն

Գերմանական հեղինակները արևմտահայերի կացության վրա ուշադրություն դարձրել են դեռևս XIX դարի վերջին: Առաջին լուրջ աշխատությունը հումանիստ և հասարակական գործիչ Ի.Լեփսիուսի «Նայաստրան և Եվրոպա» (1896 թ.) գիրքն էր, որտեղ հեղինակը ցույց էր տալիս, որ հայերի կոտորածները Թուրքիայում 1894-1896 թթ. կատարվում էին սուլթան Աբդուլ Համիդի ցուցումով ամբողջ Եվրոպայի աչքերի առջև:

Լայն արձագանք ունեցավ Լեփսիուսի մյուս աշխատությունը՝ «Նադորդում հայ ժողովրդի դրության մասին Թուրքիայում» (1916 թ.): Նրանում հեղինակը համոզիչ փաստերով հիմնավորում էր իր այն հետևությունը, որ հայերի կոտորածը շատ բանով պայմանավորված էր պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, որով առաջնորդվում էին երիտթուրքերի ղեկավարները: Այդ աշխատության մեջ առաջին անգամ բերվում էին թվական հավաստի տվյալներ արևմտահայերի ընդհանուր կորուստների մասին 1915-1916 թթ.:

Նախույն արժեք է ներկայացնում դոկտոր Լեփսիուսի կազմած և տպագրության պարբերաբար դիվանագիտական փաստաթղթերի մեծ ժողովածուն՝ «Գերմանական և Նայաստրանը 1914-1918 թվականներին» (1919 թ.) խորագրով: Համաշխարհային հռչակ վայելող արևելագետ Յոզեֆ Մարկվարտը «Նայ ազգի ծագումը և զարգացումը» (1919 թ.) գրքում ցույց տվեց, որ երիտթուրքերը շարունակում էին Աբդուլ Համիդի քաղաքականությունը՝ կազմակերպելով արևմտահայ ազգաբնակչության կոտորածը շատ ավելի մեծ չափերով: Այդ աշխատության մեջ նա միաժամանակ տուր բնադատության ենթարկեց Գերմանիայի թուրքամետ քաղաքականությունը: Գերմանիայի պարտավելի դերը երիտթուրքերի հակահայկական քաղաքականության կենսագործման մեջ դատապարտվեց Ֆիրբուխների կողմից «Նայաստրան: 1915: Ինչ է թաքցրել կայգերական կառավարությունը գերմանական հպարտակներից: Կուրտական ժողովրդի կոտորածը թուրքերի կողմից» գրքում և Նարրի Շպյուրմերի «Պարերգվի երկու տարին Կուրտանդուպոլսում» աշխատության մեջ (1917): 1960-1970-ական թվականներին լույս տեսած աշխատություններից նշենք Էռնստ Վերների հոդվածները և Պերեր Լաննեի «Նայաստրան: XX դարի առաջին ցեղասպանությունը» գիրքը: Նիմանհարցի պարամպրության մեջ որոշակի լույս ածեցին Թեոսա Ղոֆմանը և Ժիրայր Քոչարյանը, որոնք մի շարք նյութեր հրապարակեցին «Պոգրոմ» ամսագրում: 1989 թ. այդ նյութերը լույս ընծայվեցին առանձին ժողովածուներով՝ «Նայաստրան՝ ցեղասպանություն, արտաքսում, աքսոր» վերադրությամբ:

Գերմանացի աստվածաբան Հերման Գուցի խմբագրությամբ 1987-ին հրապարակված «Լեփսիուսին նվիրված Միջազգային համաժողովի նյութեր» հոդվածների ժողովածուն պարունակում է մի շարք նյութեր արևմտահայերի նկարագրի վերաբերյալ և իրենց հայտնի ու իրենց հայտնի քաղաքականության վերաբերյալ:

Հայերի ցեղասպանության թեման շարունակում է գրադնգնել գերմանական հասարակայնությանը: 1993 թ. լույս տեսավ Վոլֆգանգ Գուստրի «Հայերի ցեղասպանությունը. հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը» գիրքը:

Գերմանական գիտնականների կողմից լուրջ աշխատանք է կատարված հայերի ցեղասպանությանը վերաբերող վավերագրական նյութերի հավաքման և հրապարակման ուղղությամբ. այդ աշխատանքը տարվում է գիտնականների կողմից, որոնք համախմբված են 1977 թ. Մյունխենում հիմնադրված Հայկական հիմնահարցերի ինստիտուտի (որն արդեն երեք ծավալուն հատոր է հրատարակել) և 1985 թ. Արևմտյան Բեռլինում հիմնված Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության և փաստաթղթերի կենտրոնի շուրջը:

Թուրք պատմագրություն

Թուրքական պաշտոնական շրջանները անդադարեղ են արևմտահայերի գանգվածային տեղահանությանն ու կոտորածներին տակավին առաջին աշխարհամարտի տարիներին՝ հրապարակ հանելով մի քանի կեղծարարություններ: Դրանցում փորձ էր արվում արդարացնել կատարվածը և նրա հետևանքները, ներկայացնելով այն իբրև հարկադրական գործողություն, պայմանավորված պատերազմական իրադրությամբ: Այդ պատճառաբանությունը ցայսօր էլ կազմում է ժամանակակից թուրք պատմաբանների աշխատությունների հենքը (Հասար Ուրաս, Յուսուֆ Հիքմետ Բալուր, Է. Զ. Քարալ, Բ. Շիմշիր, Զ. Օզքայա, Մ. Հոջաօղլու, Մալլահի Ռ.Մոնիել, Թյուրքբայա Աթալով, Զ.Գյուրյուն, Միլքեմալ Յոքև և ուրիշներ): Ինչ վերաբերում է հայերի ցեղասպանությանը, ապա այն պարզապես ժխտվում է, թեև ընդունվում է, որ տեղահանության ընթացքում հայ ազգաբնակչությունը կորցրել է մի քանի հարյուր հազար մարդ՝ տեղական առանձին աստիճանավորների, աքաղաղների քարավաններն ուղեկցող ռուսիկականների անպարասխանարվության, բուրդ և այլ ավազակների պատճառով: Երիտթուրքական վերնախավը պարասխանարվություն չի կրում հայ ժողովրդի ողբերգության համար, քանզի կառավարության գործողություններում կանխամտածություն չի եղել, հայերի բնաջնջման մշակված ծրագիր գոյություն չի ունեցել: Այդ նույն նպատակով թուրք պատմագրության մեջ բացահայտորեն նվազեցվում է հայերի թվաքանակը ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ կայսրության մյուս վայրերում:

Նշենք, որ 1980-ական թվականների վերջին - 1990-ական թվականների սկզբին տպագրվեցին գործեր, որոնցում փորձ է արվում փոքր ինչ տարամերժել թուրքական, ըստ էության պաշտոնական պատմագրության մեջ արմատացած տեսակետներից ու աչառու գնահատականներից, չկրկնել ժամանակի բնությունը չբռնած պաշտոնական դիրքորոշումները: Այսպես, Թահսին Ջելալը գրում է, որ հասել է ժամանակը ուղղակի և ազնվորեն ասելու այն պատճառների մասին, որոնք հանգեցրին հայերի վերացմանը Օսմանյան կայսրությունում: Մեկ ուրիշ հեղինակ, Ռազդը Զարաբօուն, նկատում է. «...Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ սկսվեց ազգային պետությունների ստեղծման ժամանակաշրջանը ազգագրական գրոհների ուղիով, օսմանյան պետությունը և իրթիհարական ազգայնամուլները դրան պարասխանեցին 1915 թվականի ցեղասպանությամբ»: Նա

եզրակացնում է, որ նոր ցեղասպանությունների կանխման միակ միջոցը ցեղասպանությունների դադարապարտումն է, որոնք կադարվել են անցյալում: Թաներ Աբջամը, «Թուրքական ազգայնականության էությունը և հայկական հարցը» (1993 թ.) գրքի հեղինակը, խոսելով հայերի ցեղասպանության մասին, համեմատում է այն հոլոքոսթի՝ նացիստների կողմից երեանների ոչնչացման հետ:

Արաբ պատմագրություն Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի ժամանակակից արաբ պատմաբանների աշխատություններում հետազոտվում է հայերի ցեղասպանության պատմությունը, կան աշխատություններ, որոնք հարույկ նվիրված են Նայաբանի և հայ ժողովրդի պատմությանը (Ֆուադ Նասան Նաֆիզ, Մովան ալ-Մուդավար, Ուսման աթ-Թուրք, Ջիհադ Մալեհ, Մուսա Պրենս, Մալիհ Զահր-Էդ-Ղին և ուրիշներ): Արաբ հեղինակները հայկական ջարդերի պարճառ են համարում արևմտահայերի արդարացի պահանջները հայկական վիլայեթներում բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ: Նրանց կարծիքով արդեն 1894-1896 թթ. հայկական ջարդերը ձեռք էին բերել ցեղասպանության բնույթ, իսկ երիտթուրքական կառավարողներն այդ գործողությունները բարձրացրեցին պետական քաղաքականության ասպիճանի: Արաբ հեղինակները հարկապես ընդգծում են երիտթուրքերի՝ կայսրությունը «զուր թուրքական պետության» վերածելու ձգտումը, որը ենթադրում էր բոլոր ոչ թուրք ժողովուրդների ոչնչացում կամ թուրքացում:

Արաբ հեղինակները նշանակալի ուշադրություն են դարձնում հայերի «դավաճանության» մասին թուրքական պաշտոնական վարկածի հերքմանը, ցույց են տալիս հայերի նկատմամբ կիրառված ճնշամիջոցների կանխամրաված բնույթը, նկարագրում են հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և այլն: Հայերի ցեղասպանությունը նրանք որակում են իբրև հանցագործություն մարդկության դեմ:

Հայերի ցեղասպանության թեման արտացոլված է նաև կանադական (Ու.Տրումպեներ, Գ.Բադջան), հունական (Ի.Խասիտիս), ավստրիական (Է.Բաուեր, Ա.Օհանջանյան) և ուրիշ հեղինակների աշխատություններում:

* * *

Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին ամբողջ աշխարհի հայերը նշում են Մեծ եղեռնի հերթական տարեկիցը: Բոլոր հայկական եկեղեցիներում պարարասգ է մատուցվում զոհվածների հիշատակին: Երեսնում ու Մրեփանակերում, Նյու Յորքում ու Մարսելում, Միդելտում ու Շտուտգարտում, Բեյրութում ու Բուենոս Այրեսում, աշխարհի այն քաղաքներում, որտեղ հուշակոթողներ են կառուցված 1915 թ. հայերի ցեղասպանության զոհերի հիշատակին, հարյուր հազարավոր հայեր՝ զոհվածների զավակներն ու թոռները, վիշտը սրտերում լռությամբ անցնում են այդ հուշակոթողների կողքով, իրենց բողոքն արտահայտելով մարդարյացության դեմ՝ բոլոր ժամանակներում և ցանկացած երկրում:

Լ և ռ. Հայոց հարցի վավերագրերը. Թիֆլիս, 1915:

Օրմանյան Մ ա ղ ա ք ի ա. Թուրքահայ աղերը: Պարմական փաստաթղթեր. Էջմիածին, 1919:

Ա ն տ ո ն յ ա ն Ա ր ա մ. Մեծ ոճիրը. Պոստրն, 1921:

Դրվագներ հայկական եղեռնի և վերածնունդ. Փարիզ, 1946:

Լ ա զ յ ա ն Գ ա բ ռ ի ե լ. Հայաստան և Հայ դատը. Կահիրե, 1946:

Ն եր ս ի ս յ ա ն Մ. Գ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ. Եր., 1955:

Ն ա ն ս ե ն Ֆ ռ ի տ յ յ ը. Հայաստան և Մերձավոր Արևելք. Պեյրոթ, 1958:

Պ ա լ ա ք ե ա ն Գ ռ ի գ ո ռ ի ս. Հայ գողգորան. Մ հարոթ, Վիեննա, 1922: Բ հարոթ, Փարիզ, 1959:

Հուշամարյան Մեծ եղեռնի. 1915-1965. Կազմ. և խմբ. Գ. Մարտնյան. Բեյրոթ, 1965:

Ա ղ ա յ ա ն Ծ. Պ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պարմությունից. Եր., 1976:

Կ իր ա կ ո ս յ ա ն Ջ. Ս. Երիտթուրքերը պարմության դարաստանի առաջ. Ա հարոթ, Եր., 1982, Բ հարոթ, Եր., 1983:

Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դարավարմության փաստաթղթերի. Առաջարանը, թարգ. և ծանոթագրությունները Ա. Փափազյանի. Եր., 1988:

Ս ա հ ա կ յ ա ն Ռ ո թ ե ն. Ցեղասպանության պարմությունից. Եր., 1990:

1915 թ. հայոց ցեղասպանությունը: Պարմության և պարմագրության հարցեր: Հոդվածների ժողովածու: Պար. խմբ. Ռ. Սաֆրաստյան. Եր., 1995:

С аркисян Е. К. Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны. Е., 1962.

Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Г. Нерсисяна. Е., 1966, 1982.

К пракосян Дж. С. Западная Армения в годы первой мировой войны. Е., 1971.

Степанян С. С. Армения в политике империалистической Германии. Е., 1975.

М е р н К о ч а р. Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX - начале XX веков. Е., 1988.

Армянский вопрос. Энциклопедия. Ред. коллегия: К. С. Худавердян и др. Е., 1991.

Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Сборник. Сост. В. Микаелян. Ер., 1995.

Танер Акчам. Турецкое национальное "Я" и Армянский вопрос. М., 1995.

Arnold J. Toynbee. Armenian Atrocities. L., 1915.

Johannes Lepsius. Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916.

The Treatment of Armenians in the Ottoman Empire. L., 1916.

- H. St u e r m e r. Zwei Kriegsjahre in Constantinopel. Lausanne, 1917.
- Ambassador Morgenthau's Story. Garden City - N.Y., 1918.
- J a c q u e s d e M o r g a n. Contre les barbares de l'Orient. P.-Nansy, 1918.
- Deutschland und Armenien. 1914-1918. Potsdam, 1919.
- The Memoirs of Naim Bey. L., 1920.
- U l r i c h T r u m p e n e r. Germany and the Ottoman Empire. 1914-1918. Princeton, 1968.
- C a r z o u J e a n - M a r i e. Un Génocide exemplaire. P., 1975.
- L e o K u p e r. Genocide. Yale University Press, 1982.
- Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives françaises (1914 - 1918). Documents réunis et présentés par Arthur Beylérien. P., 1983.
- Le crime de silence. Le Génocide des Arméniens. Préface de Pierre Vidal-Naquet. P., 1984.
- The Armenian Genocide in Perspective. Ed. by Richard G. Hovannisian. New Brunswick, 1986.
- Archives du Génocide des Arméniens. Préface d'Alfred Grosser. P., 1986.
- V a h a k n N. D a d r i a n. Genocide as a Problem of National and International Law. Yale Journal of International Law. V. 14, N 2, 1989.
- L e s l i e A. D a v i s. The Slaughterhouse Province. Ed. by Susan K. Blair. New Rochelle, N.Y., 1989.
- I v e s T e r n o n. Enquête sur la négation d'un génocide. Marseille, 1989.
- C h r i s t o p h e r J. W a l k e r. Armenia. The Survival of a Nation. L., 1980.
- The Armenian Genocide. History. Politics. Ethics. Ed. by Richard G. Hovannisian. N.Y., 1992.
- Guide to the Armenian Genocide in the U.S. Archives, 1915 - 1918. Compiled and Edited by Rouben Paul Adalian (1994). Chadwyck-Healey Inc. Alexandria, VA.

Տպագրված է «Հակոբ Մեղապարտ Տպագրատուն» բաժնետիրական ընկե-
րությունում: Երևան-9, Տեքյան 91:

ՄԱՆԱԿՅԱՆ Ռուբեն Գարեգինի, պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նայասարանի Նանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ:

Հիմնական աշխատությունները նվիրված են Նայկական հարցի, Թուրքիայի նոր և նորագույն պարմությանն ու պարմագրությանը, ֆրանս-թուրքական հարաբերություններին: Դրանց է նվիրված հեղինակի ավելի քան հարյուր գործ, այդ թվում մի քանի մենագրություն: Մասնակցել է «Նայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» և «Նայասարանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում» ժողովածուների կազմելուն: «Նայկական հարց» հանրագիտարանի (Երևան, 1991, ռուսերեն) խմբագրական հանձնաժողովի և հեղինակային կոլեկտիվի անդամ է: Բազմիցս մասնակցել է պարմաբանների միջազգային գիտաժողովների, ունի արտասահմանում հրատարակված աշխատություններ:

ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ Կոստանդին Սուրենի, պարմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Նայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր, Նայասարանի Նանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Պարմության ինստիտուտի առաջարար գիտական աշխատող:

Հիմնական աշխատությունները նվիրված են 19-20-րդ դդ. հայկական մշակույթին, ազգամիջյան հարաբերություններին, նորագույն շրջանի հայ պարմագիտությանը: Այդ հիմնահարցերի մասին նա հրատարակել է ավելի քան 120 աշխատություն, այդ թվում մի քանի մենագրություն: Մասնակցել է հայ ժողովրդի պարմության մի շարք դասագրքերի և ուսումնական ձեռնարկների սրբեղծմանը: «Նայկական հարց» հանրագիտարանի (Երևան, 1991, ռուսերեն) գլխավոր խմբագիրն է և հեղինակային կոլեկտիվի անդամ: Բազմիցս մասնակցել է պարմաբանների միջազգային գիտաժողովների, ունի արտասահմանում հրատարակված գործեր:

9(56)
21-15

12.